ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԲ մասին օրենքի համաձայն՝ տարեկան հաշվետվությունը վերաբերում է կենտրոնական բանկի կառավարման դրույթներին: Այն ներառում է ԿԲ ռազմավարությունից բխող հիմնական գործառույթների վերաբերյալ տարեկան գործունեության ամփոփ տվյալներ և միջազգային աուդիտորական եզրակացություն անցած ֆինանսական հաշվետվությունները:

Այդուհանդերձ, ԿԲ գործունեության ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է նաև դիտարկել ԿԲ երկու գլխավոր խնդիրների իրագործմանն ուղղված ռազմավարությունները և դրանց իրագործման վերաբերյալ Գնաճի և Ֆինանսական կայունության հաշվետվությունները: Դրանք պարունակում են խորը մասնագիտական վերլուծություններ և գնահատականներ ՀՀ և համաշխարհային տնտեսությունների ու ֆինանսական շուկաների վագացումների վերաբերյալ:

Վերջիններիս մասին, ըստ թեմաների, հղմամբ նշված է սույն հաշվետվության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի Նախագահի ուղերձ

7

01 ՀՀ կենտրոնական բանկ

15

Կենտրոնական բանկի մասին
16

Ամփոփագիր Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղությունների վերաբերյալ
18

02 Հիմնական նպատակներ

26

Գների կայունության ապահովում
27

Ֆինանսական կայունության ապահովում
34

03 Այլ նպատակներ

38

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն
39

Արժեթղթերի շուկա
41

Վճարահաշվարկային համակարգ
41

Ուսումնահետազոտական կարողությունների զարգացում
45

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում
54

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում
58

Միջազգային պահուստների կառավարում
61

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում
63

04

Ինստիտուցիոնալ վարգացում

68

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն

69

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ

70

Հաղորդակցում և հաշվետվողականություն

74

05

Միջազգային կառույցների հետ համագործակցություն

82

06

ՀՀ կենտրոնական բանկի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվություններ

88



ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Ուղերձ

Հարգելի ընթերցող

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը:

2019 թվականին Կենտրոնական բանկը ապահովել է գների և ֆինանսական կայունության հիմնական նպատակները՝ նպաստելով մակրոտնտեսական կայունության հաստատման գործընթացին:

Տարվա ընթացքում ամրապնդվել է գների կայունությունը: Գնաճը պահպանվել է ցածր մակարդակում՝ տարեվերջին կազմելով 0.7 տոկոս: Ցածր գնաճը նպաստել է գնաճային սպասումների խարսխմանը, ազգային արժույթի նկատմամբ վստահության ավելացմանը, ինչի մասին է վկայում նաև դոլարայնացման մակարդակի կայուն նվազումը: 2019 թվականին միջնաժամկետ հատվածում գնաճի թիրախի ապահովման նպատակով Կենտրոնական բանկը 2 անգամ նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ պահպանելով խթանող դրամավարկային դիրքը: Այն փոխանցվել է նաև ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքներին, և մակրոպրուդենցիալ արդյունավետ քաղաքականության շնորհիվ ֆինանսական կայունության ռիսկեր չեն առաջացել:

Ավելին՝ ֆինանսական համակարգի կայունության ամրապնդման գործընթացը շարունակվել է: Համակարգի մասնակիցները բավարար իրացվելի են, կապիտալացված և ունակ սպասարկելու տնտեսության պահանջարկը: Ֆինանսական համակարգի մասնակիցները տարին ամփոփել են դրական արդյունքներով և հիմնական ցուցանիշների աճով:

Տնտեսությունում ֆինանսական համակարգի միջնորդությունը շարունակաբար ընդլայնվել է: Ֆինանսական համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշն աճել է և կազմել 106.5%:

Պահպանվել են ֆինանսական ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացման միտումները:

Կենտրոնական բանկը, ներգրավված լինելով հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացման ծրագրերում, շարունակել է նախաձեռնել հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումներ:

Կենտրոնական բանկն իր գործունեությունն իրականացրել է որդեգրած արժեքներին և ռազմավարությանը համապատասխան: Բոլոր ձեռքբերումները Կենտրոնական բանկի անձնակազմի միասնական աշխատանքի արդյունքն են:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՈՒՐԴ



Արթուր ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Ներսես ԵՐԻՑՅԱՆ


Նախագահի տեղակալ



Վախթանգ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նախագահի տեղակալ





Հասմիկ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ



Օլեգ ԱՂԱՍՅԱՆ



Արմենակ ԴԱՐԲԻՆՅԱՆ



Արթուր ՍՏԵՓԱՆՅԱՆ



Մարտին ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1993 — Ազգային արժույթի ներդրում

1994 — Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակում

1996 — ԿԲ և բանկային հիմնարար օրենքների ընդունում

1996-2001 — Ազգային վճարահաշվարկային համակարգի ստեղծում և ներդրում

2002-2004 — Ֆինանսական շուկայի մասնակիցների օրենսդրության դաշտի կատարելագործում և ենթակառուցվածքների ձևավորում

2005 — Կենտրոնական բանկը՝ որպես մեգակարգավորիչ և ֆինանսական կայունության պատասխանատու

2006 — Գնաճի նպատակադրում

2007 — Սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական իրավեկում


2007 - մինչ օրս — Ոչ բանկ ֆինանսական հատվածի վարգացում

2012 - մինչ օրս — Ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ենթակառուցվածքային վարգացումներ

2018 - մինչ օրս — Սահմանադրական բարեփոխումներ. Ֆինանսական կայունությունը որպես երկրորդ հիմնական նպատակ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Կենտրոնական բանկի մասին


Ամփոփագիր Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղությունների վերաբերյալ

2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Կենտրոնական բանկի արժեքները, տեսլականը և առաքելությունը



արժեքներն են՝

Անկախություն. Իր նպատակներին հասնելու գործիքակազմի ընտրության և որոշումների կայացման մեջ Կենտրոնական բանկն անկախ է:

Արհեստավարժություն. Կենտրոնական բանկի արհեստավարժ անձնակազմի միջոցով մարտահրավերներին ժամանակին և բարձր որակով արձագանքելու ունակություն:

Թափանցիկություն. Իր գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բաց, պարզ և ժամանակին տրամադրում շահառուներին:

տեսլականն է՝

լինել վստահելի իր շահառուների համար, կայուն՝ իր քաղաքականության մեջ՝ միաժամանակ մնալով առաջադեմ և վարգացող կառույց:

առաքելությունն է՝

գների և ֆինանսական կայունության ապահովումը:

Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են՝

Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը:

Կենտրոնական բանկի այլ նպատակներն ու գործառույթները*

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.
- դրամավարկային, ֆինանսական համակարգի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.
- գործուն վճարահաշվարկային համակարգերի ստեղծումն ու վարգացումը.
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.
- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և վարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- ֆինանսական համակարգում ապատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը:

* *Մանրամասն տե՛ս* «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121585)

ԱՄՓՈՓԱԳԻՐ


ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018–2020 թվականների ռազմավարությունը[1] սահմանում է Կենտրոնական բանկի ռազմավարական ոլորտները և ամփոփում դրանց զարգացման ուղղությունները (նկար 1)։ Այն ուղղված է նախորդ տարիներին Կենտրոնական բանկի ձեռքբերումների հետագա զարգացմանը և արդի մարտահրավերներով պայմանավորված՝ նոր ուղղությունների սահմանմանը։

Կենտրոնական բանկն իր ռազմավարությունը իրականացնելիս առաջնորդվում է միջազգային լավագույն փորձով և չափորոշիչներով։

1. Մանրամասն տե՛ս https://www.cba.am

Նկար 1. **ՀՀ կենտրոնական բանկի գերակա ռազմավարական ոլորտների շրջանակը**



- Ինստիտուցիոնալ վարգացման ոլորտներ
- 2018-2020 թթ. ռազմավարական ոլորտներ
- ԿԲ քաղաքականությունների շրջանակ

ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներ

Գների կայունության ապահովում: Առաջնորդվելով գնաճի նպատակադրման ռազմավարության սկզբունքներով՝ 2019 թվականին, պահպանվող ցածր գնաճային միջավայրի պարագայում, ՀՀ կենտրոնական բանկն իրականացրել է գնաճի աստիճանական վերականգնմանն ու այն իր նպատակային ցուցանիշի տատանման թույլատրելի միջակայք բերելուն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Տարվա ընթացքում ցածր գնաճային միջավայրը պայմանավորող հիմնական գործոններն են եղել այդ ժամանակահատվածում իրականացված կանխատեսվածից ավելի վսպողական հարկաբյուջետային քաղաքականությունը, արտաքին աշխարհից փոխանցված գնանկումային ազդեցությունները, ինչպես նաև դրսևորված որոշ կառուցվածքային գործոններ, ինչպիսիք են՝ ապրանքային շուկայում մրցակցության աճը և պահանջարկի տեղաշարժը կարճաժամկետ սպառման ապրանքների շուկայից երկարաժամկետ սպառման ապրանքների շուկա: Այս իրավիճակում ԿԲ-ն 2019 թ. շարունակել է իրականացնել **խթանող դրամավարկային քաղաքականություն,** այդ թվում՝ երկու անգամ թուլացնելով դրամավարկային պայմանները, նպատակադրելով ԿԲ հիմնական խնդրի իրագործումը միջնաժամկետ հատվածում:

Ֆինանսական կայունության ապահովում: Ֆինանսական կայունության ապահովման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկը 2019 թվականին ևս շարունակել է ֆինանսական կայունության ամրապնդմանն ուղղված աշխատանքները՝ ձեռնարկելով կարգավորման դաշտի կատարելագործման և վերահսկողության աշխատանքների արդյունավետության բարձրացման միջոցառումներ: Հաշվետու տարում ներդրվել են կապիտալի պահպանման, հակացիկլիկ և համակարգայնության շեմերը, կատարվել են աշխատանքներ Բազել 3-ով սահմանված իրացվելիության նորմատիվների, աշխարհում լայնորեն կիրառվող պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության, հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության մակրոպրուդենցիալ գործիքների, ինչպես նաև Սոլվենսի 2-ի ներդրման ուղղությամբ: Հայաստանի կայուն մակրոտնտեսական իրավիճակը և բարձր տնտեսական աճը բարենպաստ միջավայր են ստեղծել ֆինանսական համակարգի կայուն վարգացման համար:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները բարձր են պահանջվող սահմանաչափերից: Բանկային համակարգն աշխատել է շահույթով և ապահովել հիմնական ցուցանիշների աճ: Ֆինանսական համակարգի այլ մասնակիցները ևս աշխատել են շահույթով և ապահովել հիմնական ցուցանիշների աճ: Հաշվետու տարում շարունակվել է տնտեսությունում ֆինանսական համակարգի միջնորդության մակարդակի խորացումը. ակտիվների ու ՀՆԱ հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշներն ավելացել են համապատասխանաբար 8.9 և 4.8 տոկոսային կետով՝ կազմելով 106.5% և 58.7%:

ՀՀ կենտրոնական բանկի այլ նպատակներ

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն: Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի կատարելագործման համատեքստում հաշվետու տարում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Բացի այդ, ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական կազմակերպությունների գործունեության ռիսկայնության մակարդակի գնահատման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2019 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է իր վերահսկողական գործառույթները: Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները վերացվել են, և ձեռնարկվել են միջոցներ՝ ապագայում նույնանման խախտումները կանխելու նպատակով:

Արժեթղթերի շուկայի կարգավորում: Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով Կենտրոնական բանկը նախաձեռնել է կապիտալի շուկայի զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ: Այն ուղղված է նոր գործիքների կազմավորմանը, որոնք կապահովեն երկրում ձևավորված խնայողությունների ներդրումը տնտեսության իրական հատվածում, հնարավորություն կտան բնակչությանը մասնակցելու երկրում իրականացվող ներդրումային ծրագրերին և ստանալու դրանցից եկամուտներ:

Վճարահաշվարկային համակարգի կարգավորում: Հաշվետու տարում Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի վարգացմանն ու հուսալիության ապահովմանը, անկանխիկ վճարումների ծավալի ընդլայնմանը, վճարահաշվարկային համակարգերի կարգավորման դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները: 2019 թվականին Կենտրոնական բանկերի եվրասիական խորհրդի ներքո ստորագրվել է Դրամական փոխանցումների շուկայում թափանցիկության և սպառողների շահերի պաշտպանության մասին խորհրդատվական ցուցումների վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը, որը հնարավորություն կտա հուշագիրը ստորագրած երկրների միջև խորացնելու համագործակցությունը առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման ոլորտում և կբարձրացնի այդ շուկայի թափանցիկությունը:

Ուսումնահետազոտական կարողությունների վարգացում: Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (ԴՈՒԿ) 2019 թվականին շարունակել է աշխատանքները երեք հիմնական ուղղություններով՝ հետազոտությունների իրականացման, միջազգային համագործակցության և սոցիալական պատասխանատվության: Տարվա ընթացքում ԴՈՒԿ-ում կատարվել և հրապարակվել են ՀՀ և համաշխարհային տնտեսության վերաբերյալ հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև անցկացվել են միջազգային սեմինարներ: Միջոցառումների նպատակն է խորացնել ԿԲ աշխատակազմի հետազոտական ունակությունները և բարձրացնել ԴՈՒԿ-ի՝ որպես տարածաշրջանի և Արևելյան Եվրոպայի կենտրոնական բանկերի, ֆինանսական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հանդիպումների և համատեղ հետազոտությունների հարթակի վարկանիշը:

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում: Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությունն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով:

2019 թվականի օգոստոսից ուժի մեջ են մտել ֆինանսական կազմակերպությունների **հաղորդակցման և տեղեկությունների հրապարակման** ենթաօրենսդրական ակտերում **թափանցիկության բարելավման լրացուցիչ պահանջներ**, որոնք ուղղված են հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի վերաբերյալ սպառողներին տրամադրվող և բացահայտվող տեղեկատվությանը, վաղաժամկետ մարման ժամանակ սպառողներին բանավոր և/կամ հեռավար եղանակով բացահայտվող տեղեկատվությանը և այլն:

2019 թվականին «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ իրականացվել են «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցիչների վերապատրաստումներ, որի ընթացքում վերապատրաստվել են 339 դպրոցների 2419 ուսուցիչներ:

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում: 2019 թվականին Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի ծավալն ավելացել է 7.1%-ով: Ընդ որում, մետաղադրամների կանգվածն աճել է 11.8%-ով: Տարվա ընթացքում աստիճանաբար շրջանառության մեջ են ներդրվել 2018 թվականի թողարկման երրորդ շարքի թղթադրամները, որոնք շրջանառում են նախկինում թողարկված թղթադրամներին զուգահեռ:

Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների հանրայնացման և հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարման նպատակով Կենտրոնական բանկը 2019 թվականին ևս թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների և նշանավոր իրադարձությունների հոբելյաններին:

Միջազգային պահուստների կառավարում: 2019 թվականին ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ չորս ամսվա, իսկ ընթացիկ պարտավորությունների սպասարկման՝ շուրջ վեց տարվա ծածկույթ: ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով ՀՀ միջազգային պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը, որն ուղղված է միջազգային պահուստների ապահովության, իրացվելիության ու արդյունավետ կառավարման ապահովմանը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում: Հաշվետու ժամանակահատվածում ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտի վարգացումների, առկա ռիսկերի մասին սեմինար-քննարկումներ են անցկացվել հաշվետվություն ներկայացնող անձանց բոլոր խմբերի համար՝ շուրջ 300 աշխատակցի մասնակցությամբ: 2019 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ սեմինար-քննարկում է կազմակերպվել նաև ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում պահպանվել է ԱՖ ռիսկի շատ ցածր մակարդակը:

Ինստիտուցիոնալ կարգացում

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն: Կենտրոնական բանկը, կարևորելով տեղեկատվական անվտանգության ոլորտում համաշխարհային վարգացումները, 2019 թվականին հատկապես շեշտադրել է ֆինանսաբանկային համակարգի կիբեռանվտանգության ապահովման վարգացումը և կայացումը: Տվյալ ուղղությամբ կիբեռսպառնալիքների չեզոքացման նպատակով իրականացվել են MISP (Malware Information Sharing Platform) համակարգին համակցման կենտրոնի ստեղծման աշխատանքներ, հատկացվել են անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:

2019 թվականին աշխատանքներ են կատարվել Համակարգչային միջադեպերի արձագանքման կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ: Կարևորելով անձնակազմի շարունակական վարգացումը, ՀՀ կենտրոնական բանկը 2019 թվականին իրականացրել է աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումներ, այդ թվում՝ կուտակած գիտելիքներն ու փորձը ներքին ռեսուրսների հաշվին տարածել գործընկերների շրջանում: 2019 թ. դրությամբ ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտների միջազգային մասնագիտական որակավորում ունի 64 աշխատակից:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների թիվը կազմել է 778՝ 425 կին և 353 տղամարդ, միջին տարիքը՝ 41: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 62 աշխատակից:

Հաղորդակցում և հաշվետվողականություն: Կենտրոնական բանկի հիմնական խնդիրների իրականացման թափանցիկության ապահովման շրջանակում ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունն իրազեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին: Տեղի են ունեցել քննարկումներ տարբեր հարցերի շուրջ: Հատուկ ուշադրություն է դարձվել ոլորտում անօրինական գործող և ռիսկային տարրեր պարունակող կազմակերպությունների գործունեության վերաբերյալ բնակչությանը զգուշացնելու նպատակով կազմակերպվող միջոցառումներին:

Հայաստանում դրամաշրջանառության պատմության ներկայացման նպատակով պատրաստվել և հեռարձակվել է «Դրամապատում» փաստագրական-ճանաչողական ֆիլմը:

2019 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը սպասարկել է 11 673 այցելուի՝ նախորդ տարվա (10 804 այցելու) համեմատությամբ 8 %-ով ավելի:

Միջազգային կառույցների հետ համագործակցություն: Միջազգային համագործակցության շրջանակում Կենտրոնական բանկը շարունակել և խորացրել է համագործակցությունը գործընկեր կենտրոնական բանկերի և միջազգային հեղինակավոր ֆինանսական և կրթական հաստատությունների հետ:

Տարվա ընթացքում շարունակվել են նաև երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր, պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու աշխատանքները:

02

ՀԻՄՆԱԿԱՆ **ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Գների կայունության ապահովում

Ֆինանսական կայունության ապահովում

2019

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Դրամավարկային քաղաքականություն

Գների կայունությունն ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը սահմանում է միջնաժամկետ գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ, որի ընտրությունն իրականացվում է հասարակության սպասումների խարսխման և մակրոտնտեսական կայունության օպտիմալ ապահովման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախը ամրագրվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և կայուն վարգացման ծրագրերում: Կենտրոնական բանկն օժտված է գործառնական անկախությամբ և ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները:

ՀՀ կենտրոնական բանկը, գնաճի նպատակադրման ռազմավարության համատեքստում, որպես միջանկյալ նպատակ դիտարկում է գնաճը նպատակային ցուցանիշին վերադարձնելու ծրագրված ուղին, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքը: Վերջինիս նպատակային մակարդակը վերաֆինանսավորման տոկոսադրույքն է, որը Կենտրոնական բանկի խորհուրդը, որպես կանոն, սահմանում է տարին 8 անգամ՝ համաձայն նախապես հաստատված ու հրապարակված ժամանակացույցի, և որը նաև ուղենիշ է ֆինանսական շուկայում ԿԲ գործառնությունների համար: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը 7-օրյա ռեպո համաձայնագիրն է, որով ԿԲ-ն կարգավորում է իրացվելիության մակարդակը ֆինանսական համակարգում:

Գնաճի նպատակադրման ռավմավարության ներքո էապես կարևորվում է Կենտրոնական բանկի հաղորդակցությունը հասարակության հետ, որի հիմնական ուղիներից մեկը Գնաճի եռամսյակային հաշվետվությունների հրապարակումն է[2]: Գնաճի հաշվետվության առաջին բաժինը ներառում է ընթացիկ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագիրը, իսկ երկրորդ բաժինը՝ նախորդող մեկ տարվա կտրվածքով դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:

Գների կայունության խնդրի իրագործումը


2019 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրի համաձայն՝ 2019 թ. սկզբին պահպանվելու էր ցածր գնաճային միջավայր, և Կենտրոնական բանկը շարունակելու էր իրականացնել խթանող դրամավարկային քաղաքականություն: Վերջինիս և սպասվող մակրոտնտեսական վարգացումների ներքո 12-ամսյա գնաճն առաջիկայում դեռևս պետք է պահպանվեր ցածր մակարդակում, քանի որ Կենտրոնական բանկը նախապատվությունը տալիս էր գնաճի աստիճանական վերականգնմանը՝ գնահատելով, որ ցածր գնաճը ձևավորված միջավայրում կնպաստեր երկարաժամկետ գնաճային սպասումների խարսխմանը և ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության նկատմամբ հասարակության վստահության աճին, իսկ միջնաժամկետում կկայունանար նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Կանխատեսվում էր նաև, որ, բավային սցենարով մակրոտնտեսական վարգացումների պարագայում, միջնաժամկետ հատվածում գնաճի նպատակի իրագործման համար ԿԲ-ն կպահպաներ խթանող պայմաններն անհրաժեշտ երկար ժամանակահատվածում:

2019 թ. ընթացքում պահպանված ցածր գնաճային միջավայրը հիմնականում պայմանավորվել է տարվա կտրվածքով իրականացված վսպողական հարկաբյուջետային քաղաքականությամբ և, համաշխարհային տնտեսության աճի տեմպերի շարունակական դանդաղման պայմաններում, հիմնական ապրանքների միջազգային շուկայում գնաճային միջավայրի թուլացմամբ: Միաժամանակ, տարվա ընթացքում դրսևորվել են գնաճը վսպող որոշ առաջարկի գործոններ, որոնք են՝ ապրանքային շուկաներում շարունակաբար ավելացող մրցակցությունը, ինչը փոխել է կազմակերպությունների գնագոյացման

2. Մանրամասն տե՛ս Կենտրոնական բանկի ՙԳնաճի հաշվետվություն՚ պարբերականը (www.cba.am):

վարքագիծն ու նվավեցրել նրանց հավելադիրները, և պահանջարկի տեղաշարժը կարճաժամկետ սպառման ապրանքների շուկայից երկարաժամկետ սպառման ապրանքների շուկա:

Գծապատկեր 1. 2019 թ. պահպանվել է ցածր գնաճային միջավայր



Հաշվի առնելով վերոնշյալ վարգացումները և պահպանվող ցածր գնաճային միջավայրը՝ Կենտրոնական բանկը փոքր-ինչ ավելացրել է դրամավարկային պայմանների խթանման չափը և իջեցրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը առաջին և երրորդ եռամսյակներում՝ 0.25-ական տոկոսային կետով: Միաժամանակ, ԿԲ-ն շարունակել է ֆինանսական շուկային ակտիվ տալ այն մասին, որ կանխատեսվող մակրոտնտեսական վարգացումների պարագայում խթանող պայմանները կպահպանվեն անհրաժեշտ երկար ժամանակահատվածում՝ միջնաժամկետում գնաճի նպատակի իրագործման համար:

Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացի բարելավում և կատարելագործում

Կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի (ԿՔՎՀ) վարգացման ու կատարելագործման արդյունքը կանխատեսումների և քաղաքականության վերլուծության քանակական և որակական հատկանիշների բարելավումն է: Այն օգնում է Կենտրոնական բանկի խորհրդին ճիշտ պատկերացում կազմել առկա մակրոտնտեսական իրավիճակի մասին և կայացնել հիմնավոր որոշումներ դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի բարելավման աշխատանքները շարունակական են և, ըստ երկարաժամկետ հատվածի, բաժանվում են երկու ուղղությունների.

- ՀՀ տնտեսության առանձնահատկությունների ներառում գործող համակարգում և վերջինիս տեխնիկական կատարելագործում,
- գործող համակարգի կատարելագործում՝ Դինամիկ ստոքաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ կամ DSGE) մոդելային համակարգին անցում կատարելու միջոցով:

Առաջին ուղղության շրջանակներում 2019 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Եռամսյակային կանխատեսումների հիմնական մոդելը ընդլայնվել է՝ ներառելով հարկաբյուջետային ալդակը, որը թույլ է տալիս միաժամանակ գնահատել հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա և ընդհակառակը: Նաև թույլ է տալիս պահանջարկի վրա ազդող գործոնների մեջ հստակորեն տարանջատել հարկաբյուջետային քաղաքականությունը մյուս գործոններից:
2. Իրականացվել է եռամսյակային կանխատեսումների մոդելում առկա պատմական տվյալների տարանջատում (դեկոմպոզիցիա)՝ ըստ առանձին և խմբավորված շոկերի, օրինակ՝ առաջարկի և պահանջարկի, ներքին և արտաքին, քաղաքականության և տնտեսության շոկերի և այլն:
3. Կառուցվել և ներդրվել է վճարային հաշվեկշռի հաշվետվական մոդելը: Վերջինս միացված է ընդհանուր համակարգին, ինչն ապահովում է ընդհանուր կանխատեսումներին համապատասխան վճարային հաշվեկշռի ստացումը:

4. Վերագնահատվել է Ռուսաստանի Դաշնության տնտեսության մոդելը՝ արտաքին աշխարհի մոդելի շրջանակներում: Սա թույլ է տալիս ավելի ճշգրիտ գնահատել, կանխատեսել և վերլուծել Ռուսաստանի Դաշնության տնտեսությունը:

5. Ստեղծվել է կարճաժամկետ կանխատեսումների տվյալների միասնական բազա, որտեղ պահպանվում են կարճաժամկետ կանխատեսումների մոդելներ մուտքագրվող տվյալները: Առկա կարճաժամկետ կանխատեսումների մոդելները հարմարեցվել են նոր տվյալների բազայի չափանիշներին, ինչի արդյունքում հնարավոր է դրանք հեշտությամբ օգտագործել բազայում առկա ցանկացած փոփոխական կանխատեսելու համար:

6. Ներդրվել է կարճաժամկետ կանխատեսումների նոր մեթոդ (Dynamic factor model), որը օգտագործվում է գրեթե բոլոր առաջադեմ կենտրոնական բանկերում և հնարավորություն է տալիս աշխատելու մեծ քանակի բացատրող փոփոխականների առկայության պարագայում:

Երկրորդ ուղղությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

1. Կառուցվել են ՀՀ տնտեսության Իրական բիզնես ցիկլի և Դինամիկ ստոքաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ) մոդելները՝ ՀՆԱ ներուժի կառուցվածքային գնահատման նպատակով: Մոդելները կառուցված են հավասարակշռված աճի ուղու ենթադրությամբ, ինչը հնարավորություն է տալիս ՀՀ ժամանակային շարքերը ներմուծելու մոդել՝ առանց լրացուցիչ միջամտության՝ պահպանելով շարքերում առկա ողջ տեղեկատվությունը: Մոդելները փորձնականորեն օգտագործվել են կանխատեսումների մեջ և ցույց են տվել առավել լավ արդյունք, քան կանխատեսումների համար օգտագործվող վիճակագրական մոդելները:

2. Կառուցվել է ՀՀ տնտեսության ԴՍԸՀ մոդելը՝ ժամանակի մեջ փոփոխվող կապմակերպությունների հավելադիրներով և պետական սուբսիդիաներով, ինչը թույլ է տալիս գնահատել տնտեսության կառուցվածքային բարեփոխումների և շուկայի կառուցվածքի փոփոխությունների ազդեցությունը գնաճի և մյուս մակրոտնտեսական փոփոխականների շարժի վրա: Մոդելը ոչ գծային է, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու նաև տարբեր կառուցվածքային քաղաքականությունների արդյունքում ձևավորվող տնտեսության նոր հավասարակշիռ մակարդակը:

3. ՀՀ տնտեսության ԴՍԸՀ մոդելում ներառվել է անշարժ գույքի շուկան, որի արդյունքում հնարավոր է գնահատել անշարժ գույքի նկատմամբ ներդրումային պահանջարկի ցիկլը: Մոդելը կառուցված է հավասարակշռված աճի ուղու ենթադրությամբ, ինչը թույլ է տալիս հիմնական մոդելի արդյունքներն օգտագործել կանխատեսման հորիզոնում անշարժ գույքի շուկայի հնարավոր վարգացումները կանխատեսելու համար:

4. Նախնական աշխատանքներ են կատարվել միտումների գնահատման նպատակով կառուցվածքային մոդել կառուցելու ուղղությամբ, ինչը հնարավորություն է տալու մեկ գործիքի միջոցով գնահատելու ՀՀ տնտեսության հիմնական փոփոխականների միտումները և ուսումնասիրելու դրանց փոխկապվածությունը և չափերը:

Վիճակագրություն

2019 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ժամանակին և արժանահավատ տեղեկատվության հրապարակումը[3], ինչպես նաև աշխատել է հրապարակվող տեղեկատվության շրջանակների ընդլայնման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ:

Նոր տվյալների հավաքագրում և վիճակագրական ոլորտի այլ կարգացումներ

2019 թվականին իրականացվել են ԿԲ կողմից հավաքագրվող միկրոտվյալների ստացման, որակի վերահսկման և տվյալների մշակման համակարգի տեխնիկական և մեթոդաբանական կատարելագործման, ինչպես նաև դրանց հիման վրա հաշվարկվող վիճակագրական ցուցանիշների որակի բարելավման աշխատանքներ:

Կատարելագործվել է ՀՀ-ում գործող ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի վերաբերյալ հավաքագրվող վիճակագրությունը:

Արտաքին պարտքի կայունությունը գնահատելու համար առաջին անգամ գնահատվել է ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին վարկերի սպասարկման ժամանակացույցը: Բացի այդ, իրականացվել են ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին պարտավորությունների վերագնահատման աշխատանքներ, որոնք հիմնված են այլընտրանքային աղբյուրների վրա:

3. ՀՀ կենտրոնական բանկը վիճակագրական տվյալները հրապարակում է ԿԲ տնային էջի «Վիճակագրություն» բաժնում (www.cba.am):


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ֆինանսական կայունության ապահովման խնդրից ելնելով՝ 2019 թ. կատարվել են 2018 թվականին Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից համատեղ իրականացված Հայաստանի ֆինանսական հատվածի գնահատման ծրագրով (FSAP) արված առաջարկությունների ներդրման աշխատանքներ: Մասնավորապես՝ ներդրվել են կապիտալի պահպանման, հակացիկլիկ և համակարգայնության շեմերը, կատարվել են աշխատանքներ Բազել 3-ով սահմանված իրացվելիության նորմատիվների, աշխարհում լայնորեն կիրառվող պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության, հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության մակրոպրուդենցիալ գործիքների, ինչպես նաև Սոլվենսի 2-ի ներդրման ուղղությամբ: Մասնավորապես. Սոլվենսի 2 համակարգի՝ կապիտալի պահանջների սահուն ներդրման նպատակով հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, կատարվել են վերլուծական հաշվարկներ: Իրականացվել են ռիսկերի բացահայտման և գնահատման վերլուծական աշխատանքներ:

2019 թվականին ՀՀ ֆինանսական համակարգը ցուցաբերել է կայուն վարգացման միտումներ՝ ապահովելով հիմնական հաշվեկշռային ցուցանիշների վգալի աճ: Ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ և տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշները նախորդ տարվա համեմատ ավելացել են համապատասխանաբար 8.9 և 4.8 տոկոսային կետով և կազմել 106.5% և 58.7%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը **բանկային համակարգն** է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 83.5%-ը (տե՛ս գծապատկեր 2): Ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների (վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ և այլն) տեսակարար կշիռը փոքր է, և ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց գործունեության ազդեցությունը դեռևս նշանակալի չէ:


Գծապատկեր 2. Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը




2019 թ. բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 16.9%-ով, տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 16.4%-ով, ընդհանուր կապիտալը՝ 10.0%-ով, պարտավորությունները՝ 18.1%-ով: Վարկերի կազմում առաջանցիկ աճի տեմպեր են գրանցվել հիպոտեկային և սպառողական վարկերի գծով (համապատասխանաբար 40.6% և 30.6% աճ), ինչի պայմաններում Կենտրոնական բանկն աշխատանքներ է իրականացրել մակրոպրուդենցյալ որոշ գործիքների մշակման և ներդրման ուղղությամբ: Մասնավորապես՝ դրանք են պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության, ինչպես նաև հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության պահանջները: ՀՀ ԿԲ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների համաձայն՝ բանկային համակարգն աշխատել է շահույթով. ակտիվների և կապիտալի շահութաբերության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1.2% և 7.9% (2018 թ.՝ 0.8% և 5.3%):

Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները տարվա ընթացքում հիմնականում ցուցաբերել են նվազման միտում:

Գծապատկեր 3. Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույք




Գծապատկեր 4. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույք



Բանկային համակարգի կայունությունը բնութագրող կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշների մակարդակը շարունակել է մնալ պահանջվող նվազագույն սահմանաչափերից բարձր. մասնավորապես՝ ընդհանուր կապիտալի համարժեքությունը կազմել է 17.6% (նվազագույն նորմատիվային սահմանաչափը՝ 12.0%): Տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալների աճի պայմաններում բանկային համակարգի իրացվելիությունը պահպանվել է պահանջվող նվազագույն սահմանաչափերից գրեթե կրկնակի բարձր մակարդակում՝ փաստելով բանկային համակարգի բավարար իրացվելիության մասին: 2019 թվականի վերջին առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 27.1% և 111.7% (պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15.0% և 60.0%): Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 5.9 և 3.2 տոկոսային կետով և կազմել 89.0% և 52.1% (տե՛ս գծապատկեր 5):

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» ռիսկային դասեր) տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում կազմել է 5.1%:

Գծապատկեր 5. Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը



Աճել են նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հիմնական ցուցանիշները:


Մասնավորապես՝ **վարկային կազմակերպությունների** կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 11.2%-ով, պարտավորությունները՝ 46.5%-ով, իսկ ակտիվները՝ 27.9%-ով:

Ապահովագրական համակարգի կապիտալն ավելացել է 9.8%-ով, պարտավորությունները՝ 41.1%-ով, ակտիվները՝ 29.5%-ով:

Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալն ավելացել է 23.0%-ով, պարտավորությունները՝ 9.7%-ով, ակտիվները՝ 12.2%-ով:

Ակտիվների կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներն ավելացել են 59.8%-ով և կազմել 251 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 3.8%:

Գծապատկեր 6. Կենսաթոշակային ֆոնդերի կուտ ակտիվների արժեքի շարժը



03

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ֆինանսական համակարգի կարգավորում և վերահսկողություն

Արժեթղթերի շուկա

Վճարահաշվարկային համակարգ

Ուսումնահետազոտական կարողությունների զարգացում

Ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական կրթում

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում

Միջազգային պահուստների կառավարում

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում

2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի կարգավորման ոլորտում իրականացվել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես.

Սահմանվել են կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմեր, մասնավորապես՝ սահմանվել են կապիտալի պահպանման, հակացիկլիկ և համակարգայնության շեմերը, փոփոխություններ են կատարվել բանկերի պարտադիր պահուստավորման ռեժիմում, ինչպես նաև ձեռնարկվել են բանկերի ռիսկերի կառավարման համակարգի բարելավմանը միտված գործողություններ, ինչպիսիք են սթրես-թեստավորման գործընթացների և բանկերի վերականգնման ծրագրերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանումը, փոփոխություններ ու լրացումներ են կատարվել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, ապահովագրական ընկերությունների կապիտալի համարժեքության նորմատիվը համապատասխանեցվել է Սոլվենսի 2-ի պահանջներին:

Նշված փոփոխությունները նպատակ ունեն.

- Նպաստել բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, բարձրացնել Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև համապատասխանեցնել կապիտալի պահանջը միջազգային չափորոշիչներով սահմանված պահանջներին:
- Ապահովել արտարժութային իրացվելիության բուֆերների ստեղծման նախադրյալներ:

- Բարելավել բանկերում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետությունն ու արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու ունակությունը:
- ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխան՝ նախատեսել վերը թվարկված օրենքների կարգավորման ոլորտում գտնվող ֆինանսական հաստատություններում հանցագործների մուտքը կանխարգելող օրենսդրական կարգավորումներ:
- Միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ կապիտալի պահանջ ապահովել ապահովագրական ընկերությունների համար:

Հաշվետու տարվա ընթացքում մշակվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանափակվում՝ կրճատվում է կանխիկով իրականացվող գործառնությունների ծավալը: Օրենքի նախագիծը՝ կրճատում է ստվերային տնտեսությունը, խթանում է բանկային համակարգում ֆինանսական միջնորդության ավելացմանը, որն իր հերթին կհանգեցնի ողջ ֆինանսական համակարգի վարգացմանը, այդ թվում՝ վճարային ծառայությունների մատուցման համար կիրառվող ենթակառուցվածքի և մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ դրանով իսկ ապահովելով արագ, հուսալի և անվտանգ վճարման իրականացումը անկանխիկ գործիքների կիրառման միջոցով:

Ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական կազմակերպությունների գործունեության ռիսկայնության մակարդակի գնահատման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2019 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է իր վերահսկողական գործառույթները:

Կենտրոնական բանկն իրականացնում է ֆինանսական կազմակերպությունների գործունեության մշտադիտարկում, ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություններ, բացահայտում և գնահատում ռիսկերը, գնահատում է հաստատությունների գործունեության համապատասխանությունն իրավական դաշտին և իր իրավասությունների ներքո իրականացնում վերահսկողական միջոցառումներ:

2019 թվականին շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի բացահայտման, գործարար վարվելակերպի, հրապարակվող տեղեկատվության արժանահավատության և այլ վերահսկողական ստուգումները: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը ֆինանսական կազմակերպություններում իրականացրել է 162 ստուգում, մասնավորապես՝ բանկերում՝ 6, վարկային կազմակերպություններում՝ 1, ապահովագրական ընկերություններում՝ 8, ներդրումային ընկերություններում՝ 2 ստուգում, ֆինանսական շուկայի այլ մասնակիցների 145 ստուգում (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն):

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները վերացվել են, և ձեռնարկվել են միջոցներ՝ ապագայում նույնանման խախտումները կանխելու նպատակով:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով Կենտրոնական բանկը նախաձեռնել է կապիտալի շուկայի զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ: Այն կներառի կապիտալի շուկայի զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող միջոցառումները, դրանց հստակ ժամկետներն ու պատասխանատուներին: Ծրագիրն ուղղված է նոր գործիքների կազմավորմանը, որոնք կապահովեն երկրում ձևավորված խնայողությունների ներդրումը տնտեսության իրական հատվածում, թույլ կտան բնակչությանը (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի միջոցով) մասնակցելու երկրում իրականացվող ներդրումային ծրագրերին և ստանալու դրանցից եկամուտներ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2019 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ու հուսալիության ապահովմանը, անկանխիկ վճարումների ծավալի ընդլայնմանը, վճարահաշվարկային համակարգերի կարգավորման դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

էլեկտրոնային վճարումների համակարգ

2019 թվականին էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների ծավալը հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, աճել է 30.3%-ով՝ կազմելով 20008 մլրդ ՀՀ դրամ, մինչդեռ քանակն ավելացել է 6.6%-ով՝ կազմելով 3741589 փոխանցում:


Վճարային գործիքներ և վճարահաշվարկային կազմակերպություններ

2019 թվականին Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիա է տրամադրել 2 ընկերության:

Կենտրոնական բանկի որոշմամբ «UnionPay International» համակարգը ներառվել է գնահատված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում, ինչի արդյունքում հնարավոր է դարձել չինական «UnionPay» համակարգի քարտերի սպասարկումը ՀՀ տարածքում:


2019 թվականի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտեր են տրամադրել և սպասարկել ՀՀ տարածքում գործող 16 առևտրային բանկեր: Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակն ավելացել է 18.1%-ով և կազմել է 2.4 մլն (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը 2007–2019 թթ.



2019 թվականին ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 2 տրլն 312 մլրդ դրամի գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 52%-ով և կազմել 604 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 447.6 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 179.8 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 80.7 մլրդ դրամ): Արդյունքում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների տեսակարար կշիռն ընդհանուր քարտային գործառնություններում 2018 թվականի համեմատ աճել է 4.7 տոկոսային կետով և կազմել է 26.1% (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Հայաստանում վճարային քարտերով իրականացված գործառնություններ




Միջազգային համագործակցություն և ստանդարտներ

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական բանկերի հետ վճարահաշվարկային համակարգերի գծով համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է վճարային քարտերի ազգային համակարգերի, ISO 20022 ստանդարտի ներդրման, ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման և հաշվարկների իրականացման, արագ վճարումների, ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման և կիբեռանվտանգության ոլորտներում:

2019 թվականին Կենտրոնական բանկերի եվրասիական խորհրդի ներքո ստորագրվել է Դրամական փոխանցումների շուկայում թափանցիկության և սպառողների շահերի պաշտպանության մասին խորհրդատվական ցուցումների վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որը հնարավորություն կտա հուշագիրը ստորագրած երկրների միջև խորացնելու համագործակցությունը առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման ոլորտում և կբարձրացնի այդ շուկայի թափանցիկությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (ԴՈՒԿ)՝ որպես տարածաշրջանային հետազոտական և գիտակրթական կենտրոն, 2019 թվականին շարունակել է աշխատանքները հետազոտությունների իրականացման, միջազգային համագործակցության և սոցիալական պատասխանատվության ոլորտներում՝ Կենտրոնը փորձում է ստեղծել գիտական այնպիսի միջավայր, որը կնպաստի գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, արդի տնտեսագիտական խնդիրների և դրանց կիրառման միջազգային փորձի ուսումնասիրությանը, վարգացող տնտեսությունների վերաբերյալ որակյալ հետազոտական աշխատանքների կատարմանը և Կենտրոնական բանկի նպատակների արդյունավետ իրագործմանը: ԴՈՒԿ-ը 2019 թվականին ևս Հայաստանի և տարածաշրջանի, այլ կենտրոնական բանկերի և միջազգային ֆինանսական կառույցների համար հանդիսացել է միջազգային գիտական, կրթական և հետազոտությունների իրականացման արդյունավետ հարթակ:



2019 թվականին շարունակվել են նախապես սահմանված գիտահետազոտական և վերլուծական աշխատանքների, ինչպես նաև նոր թեմաների շուրջ հետազոտությունները:

Տարվա ընթացքում կազմակերպվել են խորացված մասնագիտական դասընթացներ, որոնք վարել են աշխարհի լավագույն բուհերից և միջազգային կազմակերպություններից հրավիրված հեղինակավոր մասնագետներ: Աշխատակիցներին խորհրդատվություն տրամադրելու, դասախոսություններ կարդալու նպատակով 2019 թ. ԴՈՒԿ են այցելել Վանդերբիլթի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր Մատտիաս Պոլբորնը, Իլինոյսի համալսարանի դասախոս Արամ Գրիգորյանը, ԱՄՆ Հյուսիսարևմտյան համալսարանի (Northwestern University) տնտեսագիտության պրոֆեսոր Լոուրենս Քրիշտիանոն, հայտնի միջազգային փորձագետ Դագլաս Լաքստոնը, Թաֆթս համալսարանի պրոֆեսոր Բրյուս Բողոսյանը և այլք:

ԿԲ աշխատակիցները կատարել են համատեղ հետազոտական աշխատանքներ.

- Միջազգային փորձագետ Դագլաս Լաքստոնի հետ՝ ***«Գնաճ նպատակադրող կենտրոնական բանկերի երկարաժամկետ գնաճային սպասումների խարսխման հարցերին վերաբերող վերլուծություն»*** թեմայով:
- Ցյուրիխի համալսարանի դասախոս Վարդգես Լևոնյանի հետ՝ ***«Հիպոտեկային շուկայում առաջարկի գործոնների ազդեցությունը սպառողների որոշումների վրա»*** թեմայով:
- ԱՄՆ Հյուսիսարևմտյան համալսարանի (Northwestern University) դասախոս, տնտեսագիտության պրոֆեսոր, ԱՄՀ փորձագետ և ոլորտի առաջատար Լոուրենս Քրիշտիանոյի հետ՝ ***«Ֆինանսական դոլարայնացում»*** թեմայով, որը ներկայացվել է մի շարք կոնֆերանսներում, այդ թվում նաև՝ Չիկագոյի դաշնային պահուստային բանկում:

ԿԲ աշխատակիցները Ստենֆորդի համալսարանի ասպիրանտների հետ համատեղ կատարել են փոխարժեքի շոկի՝ դոլարայնացման վրա ազդեցության վերլուծություն: ԱՄՀ-ի հետ համատեղ իրականացված ընդհանուր ծրագրերի շրջանակում կատարվել է նաև վերլուծություն բավմաչափ ֆիլտրով ԱՄՆ-ի պոտենցիալ ՀՆԱ գնահատման վերաբերյալ, որը լույս է տեսել որպես ԱՄՀ աշխատանքային փաստաթուղթ: Իրականացվել է նաև հետազոտություն ֆինանսական ներգրավվածության և ֆինանսական գրագիտության մակարդակի վերաբերյալ:

Տարվա ընթացքում կատարվել և ՀՀ Կառավարության ներկայացուցիչներին են ներկայացվել հետազոտական աշխատանքներ.

- Տնտեսական աճի ռազմավարության վերաբերյալ,
- ՀՀ պետական պարտքի և պետական ներդրումների վերաբերյալ,

- Համայնքների վարգացման, ֆինանսական ներգրավվածության և ֆինանսավորման այլընտրանքների վերաբերյալ:

2019 թվականին ԿԲ կողմից կատարվել են հարկային եկամուտների և դրույքաչափերի վերաբերյալ տվյալների շտեմարանի կառուցում, գնաճ նպատակադրող կենտրոնական բանկերի երկարաժամկետ գնաճային սպասումների խարսխման հարցերին վերաբերող վերլուծություն, հարկային եկամուտների պոտենցիալի, առաձգականության և Լաֆերի կորի վերաբերյալ հետազոտություն: Մշակվել է նաև «Ֆինանսական կրթությունը դպրոցներում» ծրագրի գնահատման մեթոդաբանությունը:

2019 թվականին հրապարակվել են հետևյալ աշխատանքային փաստաթղթերը՝

- Economics - ejournal պարբերականում հրապարակվել է «Do Remittances Worsen Export Diversification» թեմայով աշխատանքը՝ որպես քննարկվող հետազոտական աշխատություն (Disscussion Paper):
- «Multivariate Filter Estimation of Potential Output for the United States: An Extension with Labor Market Hysteresis» թեմայով աշխատանքը տպագրվել է որպես ԱՄՀ աշխատանքային փաստաթուղթ:
- Հրապարակվել է «Mind the Gaps! Financial-Cycle Output Gaps and Monetary-Policy-Relevant Output Gaps» թեմայով աշխատանքը՝ որպես London School of Economics and Political Science, Institute for Global Affairs աշխատանքային փաստաթուղթ:
- «Armenian Journal of Economics» պարբերականում հրապարակվել է «Yield Curve Estimation and Forecasting in Armenia» թեմայով աշխատանքը:
- «Nowcasting real GDP growth: Comparison between new and old EU countries» թեմայով աշխատանքը շուտով կհրապարակվի Eastern European Economics պարբերականում:

Միջազգային

2019 թվականին Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպվել են տարածաշրջանային և միջազգային նշանակություն ունեցող մի շարք գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինար-քննարկումներ, դասընթացներ, ֆորումներ և այլն: Մասնավորապես.


- Տեղի են ունեցել «Կենտրոնական և առևտրային բանկերի աշխատակիցների սերտիֆիկացման ծրագրի» երրորդ տարվա երկու փուլերը: Ծրագիրը կազմակերպվում է ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի, Նիդեռլանդական վարգացման ֆինանսական կազմակերպության (FMO) և Հոլանդիայի ազգային բանկի համատեղ ջանքերով ու ֆինանսավորմամբ: Մասնակիցներին դասավանդել են պրոֆեսոր Ֆլորենսիո Լոպես դե Սիլանեսը (ՍԿԵՄԱ բիզնես դպրոց, Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրո), պրոֆեսոր Ջոզեֆ Մակ - Քեյհրին (Թիլբուրգի համալսարան), Վոլֆ Վագները (Ռոտերդամի համալսարանի մենեջմենթի դպրոց): 2019 թվականի ծրագրում ավելացել է նաև առաջնորդության մասին դասընթաց, որը վարել է VU համալսարանի և Աշրիջ բիզնես դպրոցի պրոֆեսոր էրիկ դը Հաանը: Սերտիֆիկացման ծրագրին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Խորվաթիայի, Բոսնիա և Հերցեգովինայի ու այլ երկրների կենտրոնական և առևտրային բանկերի աշխատակիցներ:
- Սեպտեմբերի 11-ից 13-ը կազմակերպվել է «Ընդլայնելով դրամավարկային քաղաքականության սահմանները» թեմայով Կենտրոնական բանկերի Մակրոմոդելավորման 22-րդ տարեկան համաժողովը, որին ներկա է եղել շուրջ 30 երկրից ավելի քան 110 մասնակից: Հիմնական զեկուցողներ են եղել պրոֆեսոր Մորիս Օբստֆելդը (Կալիֆոռնիայի համալսարան, ԱՄՀ նախկին գլխավոր տնտեսագետ), Ասաֆ Ռապինը (Թել Ավիվի համալսարանի դասախոս), Դագլաս Լաքստոնը (միջազգային փորձագետ, նախկինում ԱՄՀ մոդելավորման բաժնի ղեկավար) և Թոմաշ Հոլուբը (Չեխիայի ազգային բանկի խորհրդի անդամ):
- Ամեն տարի Ֆրանսիայի Շամոնի քաղաքում անցկացվող Մտքերի գագաթնաժողովը (Summit of Minds) այս տարի առաջին անգամ անցկացվեց Հայաստանում՝ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում: Հայաստանն առաջին երկիրն է, որ հյուրընկալում է այս միջոցառումը Շամոնիից դուրս: Միջոցառմանը մասնակցում էին հայաստանցի և օտարերկրացի ավելի քան հարյուր հեղինակավոր հանրային գործիչներ, գիտնականներ ու վերլուծաբաններ, գործարարներ ու ձեռնարկատերեր:

- Ֆինանսական կայունության ցուցանիշների մասով հունիս ամսին Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպվել է միջազգային կոնֆերանս: Կոնֆերանսի ընթացքում ԱՄՀ փորձագետը ներկայացրել է ֆինանսական կայունության ցուցանիշների (ՖԿՑ) հաշվարկման և օգտագործման հետ կապված վերջին միջազգային վարգացումները, մարտահրավերները և ցուցանիշների կատարելագործման հիմնական ուղիները: 7 երկրների շուրջ 30 ներկայացուցիչներ ներկայացրել են ՖԿՑ հաշվարկման և օգտագործման առանձնահատկությունները, առաջացող մեթոդական խնդիրները և քննարկել են դրանց հնարավոր լուծումները:

Տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք հետազոտական, ճանաչողական այցեր և միջոցառումներ, որոնց մասնակցել են տարբեր երկրներից ներկայացուցիչներ: Այդպիսի միջոցառումներից էր Հայ-վրացական գործարարության համաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀ Կառավարության հետ համատեղ. նպատակն էր քննարկել երկու երկրների միջև հետագա համագործակցության հնարավորությունները:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը կարևորում է կրթական հաստատությունների հետ համագործակցությունը, ուսանողների կրթումը և շարունակում է հյուրընկալել ու դասախոսություններ կարդալ Հայաստանի և Արցախի տարբեր համալսարանների ուսանողների համար: Տարվա ընթացքում ճանաչողական այցով ԴՈՒԿ են այցելել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայասանատի Ֆրանսիական համալսարանի, Արցախի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողներ, ովքեր մասնակցել են ԴՈՒԿ-ի կազմակերպած դասախոսություններին, որից հետո շրջել դրամի թանգարանում՝ ծանոթանալով դրամի պատմությանը: Պարբերական բնույթ են կրում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների այցերը ԴՈՒԿ, որի նպատակը ուսանողներին ԿԲ գործունեության ներկայացումն է, ինչպես նաև գիտելիքի փոխանցումը նոր սերնդին:


Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը 2019 թվականին ևս հյուրընկալել է օտարերկրյա՝ Հարվարդի, Նոտր Դամի, Թաֆթսի, Բոստոնի, Ուորվիքի, Լոնդոնի թագավորական քոլեջի, Թբիլիսիի պետական համալսարանի Տնտեսագիտության միջազգային դպրոցի հետազոտական պրակտիկա անցնող 12 ուսանողի:



Շարունակվել է նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համագործակցությունը «Տնտեսագիտության մագիստրոս» ծրագրի շրջանակում՝ հյուրընկալելով 33 ուսանողի:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Կենտրոնական բանկը մեծ ուշադրություն է դարձնում կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը, որի գլխավոր բաղադրիչներից է մարզի վարգացումը:




Կենտրոնական բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում շարունակել են գործել Դիլիջանի կենտրոնական դպրոցը, ֆաբլաբ-ը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, «Գիտելիք հանուն վարգացման կենտրոնն» իր գրադարանով և դրամի թանգարանով: Կենտրոնը իրականացրել է կրթական մի շարք նախաձեռնություններ, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու երեխաների բավմակողմանի վարգացումը:

- «Գիտելիք հանուն վարգացման» կենտրոնը 2019 թվականին ևս հնարավորություն է տվել Դիլիջանի և հարակից շրջանների, մարզի երեխաներին օգտվելու հարուստ գրականություն ունեցող գրադարանից, այցելելու դրամի թանգարան, ծանոթանալու դրամի պատմությանը, ունենալու ընդհանուր շփման և քննարկումների հարթակ, մասնակցելու բաց դասերին և միջոցառումներին: Դրամի թանգարանը տարվա ընթացքում հյուրընկալել է 2944 այցելուի, որը շուրջ 61 տոկոսով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Դրամի թանգարանի շահառուների շրջանակը լայն է և բավմական: Մեծ կարևորություն է տրվում դպրոցահասակ երեխաների և ուսանողների ակտիվ ներգրավմանը: Նրանց մասնակցության թիվը կազմում է շուրջ 1700: Կազմակերպվել են 160-ից ավելի էքսկուրսիաներ և դասընթացներ:

«Ակտիվ քաղաքացի» նախաձեռնությունը 2019 թվականին ևս շարունակել է հանդիպումների շարքը, որին մասնակցել է Տավուշի մարզպետի խորհրդական Նիկոլայ Գրիգորյանը, ով մասնակիցներին ներկայացրել է աղետների ընթացքում ճիշտ վարվելակերպի կանոնները:

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	Ընդամենը
1. Դրամի թանգարան	–	1053	1243	1574	2005	1830	2944	**10649**
2. Թումո								**1160**

- 2019 թ. «Դիլիջան ֆաբլաբ» թիմը մասնակցել է «Ֆաբակադեմիա» կրթական ծրագրին, WCIT համաժողովին, «Ֆաբ 15» կոնֆերանսին և իրականցրել է «Ֆաբ օր» միջոցառումները: Դիլիջանի ֆաբլաբն իր առաքելության շրջանակում մեծ ուշադրություն է դարձնում կրթական բաղադրիչին.
- Կազմակերպվել են դասընթացներ դպրոցականների և մեծահասակների համար, իրականցվել են եռաչափ մոդելավորման, էլեկտրոնիկայի հիմունքների, Արդուինո հարթակով ծրագրավորման, ավտոկադի դասընթացներ, որոնց մասնակցել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները, Իջևանի, Կալավանի, Դիլիջանի դպրոցականները. ընդհանուր առմամբ՝ 60 մասնակից:



Ֆաբակադեմիա - https://fabacademy.org/

Ֆաբակադեմիան 6 ամիս տևողությամբ կրթական ծրագիր է՝ նախատեսված ֆաբլաբերի աշխատակիցների, ուսանողների համար, որի շրջանակում Հայաստանից մասնակցել է 3 ուսանող, ովքեր հաջողությամբ ավարտել և դարձել են Դիլիջանի ֆաբլաբի դասընթացավարներ: Ուսումնառության ժամանակ ուսանողները իրականացրել են տարբեր ընթացիկ և ավարտական նախագծեր. արդյունքում ստեղծվել են արևին հետևելու համակարգ, անլար լիցքավորման սեղան, շերտավարագույրների ավտոմատացման համակարգ:

2019 թ. նոյեմբերից Դիլիջանի ֆաբլաբը դարձել է ֆաբակադեմիայի հայկական միակ հանգույցը, իսկ Հայաստանը ձեռք է բերել համապատասխան կրթական ծրագիրը իրականացնելու իրավունք:

Միջոցառումներ

Ֆաբլաբին և ֆաբակադեմիային վերաբերող շնորհանդեսներ են կազմակերպվել Pechakucha Night Yerevan, WEClub Dilijan/Yerevan, Empowering Regions through High Tech-Forum միջոցառումների ընթացքում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրավերով ֆաբլաբը մասնակցել է WCIT-19-ին: Կազմակերպվել են նաև 4 այլ միջոցառումներ, որոնց ներկա է եղել 12-50 տարեկան շուրջ 170 մասնակից Տավուշից, Լոռիից, Երևանից:

Համագործակցություն

Ֆաբլաբը ակտիվորեն համագործակցում է Դիլիջանի կենտրոնական դպրոցի, UWC-ի հետ, որի շրջանակում մասնակիցների հետ իրականացվել է Դիլիջանի «Խոսող քարտեզ» նախագիծը, որը հետագայում կտեղադրվի Դիլիջանի կենտրոնական մասում՝ զբոսաշրջիկներին օգնելու նպատակով:

- Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որը կառավարվում է «Այբ» հիմնադրամի կողմից, ունի 139 աշակերտ, որոնց շուրջ 70 տոկոսը մարզից են, իսկ ուսուցիչների մի մասը տարածաշրջանի բնակիչներ են, որոնք վերապատրաստվել են «Այբ» կրթական համալիրի ծրագրով:
- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն 2019 թ. այցելել է 340 երեխա. 34 տոկոսը Դիլիջանից են, իսկ 66 տոկոսը՝ Տավուշի մարզի հարակից շրջաններից և Գեղարքունիքի մարզից: Ծրագիրը նախատեսված է 12-18 տարեկանների համար: 2019 թվականի հունիսից «Թումո» կենտրոնը վերապինման նպատակով ժամանակավորապես դադարեցրել է իր գործունեությունը Դիլիջանում և վերաբացվել դեկտեմբերին: Այս վերապինումը հնարավորություն կտա էապես ավելացնելու մասնակիցների թիվը և ընդլայնելու ծրագրերի շրջանակը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ

Կենտրոնական բանկի կողմից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով:

Կարգավորման դաշտի վարգացումներ

Փոփոխություններ են կատարվել, և 2019 թվականի օգոստոսից ուժի մեջ են մտել ֆինանսական կազմակերպությունների **հաղորդակցման և տեղեկությունների հրապարակման** ենթաօրենսդրական ակտերում **թափանցիկության բարելավմանը վերաբերող լրացուցիչ պահանջներ**, որոնք ուղղված են հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի վերաբերյալ սպառողներին տրամադրվող և բացահայտվող տեղեկատվությանը, վաղաժամկետ մարման ժամանակ սպառողներին բանավոր և/կամ հեռահար եղանակով բացահայտվող տեղեկատվությանը, հեռահար եղանակով մատուցվող ֆինանսական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ տրամադրելուն, գովազդվող նյութերում և համացանցային կայքերում հատուկ նախազգուշացում պարունակող տեղեկատվություն ունենալուն: Ֆինանսական կազմակերպությունները տրամադրելու են նաև հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի պարզ, ամբողջական և մատչելի քաղվածքներ, ինչպես նաև սպառողական, գյուղատնտեսական և հիպոտեկային վարկերի՝ նոր ձևաչափով էական պայմանների անհատական թերթիկներ:

2019 թվականի դեկտեմբերի 6-ից ուժի մեջ է մտել բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից **երաշխավորների հետ հաղորդակցման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտի լրացված տարբերակը** ըստ որի՝ հաղորդակցման դրույթները տարածվել են առավել լայն շրջանակի պայմանագրերի վրա, երաշխավորները

հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով համաձայնություն տալու երաշխավորությունը ստանձնելու և դրա հետևանքները գիտակցելու վերաբերյալ, պարտավորությունների մասին հիշեցումը այսուհետ երաշխավորները կստանան առավել հարմար եղանակով:

Լրամշակվել է նաև **տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը**: Ըստ նոր փոփոխությունների՝ նույն սկզբունքներով կհաշվարկվեն նաև վարկային գծերի, հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքները, առավել ճշգրիտ կարտացոլվի կրեդիտի ծախսը: Ֆինանսական կազմակերպությունների կողմից հաշվարկված արտարժութային վարկային գծերի, հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքները կլինեն համադրելի, սպառողները կկարողանան ընտրել վարկերի՝ իրենց առավել հարմար տարբերակներ:

Մշակվել և կատարելագործվել են FinInfo.am տեղեկատվական համակարգը, վերջինիս առնչվող կարգավորման գործընթացներին վերաբերող կանոններն ու ձեռնարկը:

Լրամշակման և կատարելագործման ընթացքում են Կենտրոնական բանկ ներկայացվող **դիմումների քաղաքականության վերանայման** աշխատանքները, վերանայվել է նաև սպառողներից ստացված **դիմումների վերաբերյալ տարեկան ներքին հաշվետվության ձևաչափը:**

Գործարար վարվելակերպի վերահսկողություն


2019 թվականին կատարվել են ֆինանսական կազմակերպությունների՝ տեղերում և հեռակա ստուգումներ:

Տեղերում ստուգումների միջոցով որոշ ֆինանսական կազմակերպություններում իրականացվել են ծառայությունների մատուցման պատշաճության, բողոքների ու վեճերի լուծման, տեղեկությունների հրապարակման քաղաքականությունների, դրանց կիրարկման, սպառողների տեսանկյունից ռիսկայնության ու իրավական համապատասխանության ուսումնասիրություններ:

Հեռակա ստուգումների շրջանակներում ստուգվել են 40 ֆինանսական կազմակերպության համացանցային կայքեր, 182 հեռուստագովազդ և 278 ռադիոգովազդ: Արձանագրվել է մոտ 200 խախտում: Ֆինանսական կազմակերպությունների հեռուստագովազդներին զուգընթաց, ամսական պարբերականությամբ ստուգվել են նաև ռադիոգովազդները:

Ելնելով իրավական դաշտի փոփոխություններից և հիպոտեկային շուկայի աշխուժացումից՝ առանձնակի դիտարկվել են հիպոտեկային

վարկերը: Մասնավորապես՝ 22 բանկում և վարկային կազմակերպություններում իրականացվել են ուսումնասիրություններ, ստուգվել են 35 ֆինանսական կազմակերպության հիպոտեկային վարկերի պայմանագրերի օրինակելի ձևանմուշները սահմանող ներքին իրավական ակտերը, պայմանագրերի օրինակելի ձևերը, փաստացի կնքված պայմանագրերը: Արձանագրվել է մոտ 150 խախտում:



2019 թվականին ևս ՍԾՊևՖԿ կենտրոնն արձագանքել է սպառողներից գրավոր և թեժ գծի միջոցով ստացված դիմումներին:

Տարվա ընթացքում թեժ գծով ստացվել է **6147 կանգ**, որից 5699-ը բավարարվել են, 302-ը ուղղորդվել են ԿԲ գրավոր դիմում ներկայացնելու, 133-ը՝ այլ կառույցներ, 13-ը չեն բավարարվել: Զանգերի թիվը նվազել է 10,96 %-ով:

2019 թվականին ստացվել է **878 դիմում**. նախորդ տարվա համեմատությամբ դիմումների թիվն աճել է 116-ով կամ 7,34 %-ով:

ՀՀ-ում հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ

2019 թ. «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի շրջանակում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ, շարունակվել են «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցիչների վերապատրաստումները՝ ֆինանսական կրթության ինտեգրմամբ դասեր վարելու նպատակով:

2019 թվականին վերապատրաստվել են 339 դպրոցների 2419 ուսուցիչներ:

Հաշվետու տարում շարունակվել է նաև «Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում» ծրագրի իրագործումը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցության արդյունքում դեկտեմբերին անձնական ֆինանսների արդյունավետ կառավարմանն ուղղված դասընթացներ են անցկացվել Հայաստանի 9 մարզերի 96 համայնքներում: Դասընթացներին մասնակցել է գյուղական համայնքների 1535 բնակիչ:

Իրականացվել է «Իմ ֆինանսների ամիս - 2019» ծրագիրը: Միջոցառումների նպատակը հասարակությանը պարզ և մատչելի ձևով անձնական ֆինանսների վերաբերյալ գիտելիքի և հմտությունների փոխանցումն է:

2019 թ. Խնայողական բանկերի միջազգային համագործակցության հիմնադրամի (Savings Banks Foundation for International Cooperation - SBFIC) աջակցությամբ իրականացվել է «Ֆինանսական կրթություն միգրանտների համար. քարտեզագրում և կարիքների գնահատում» հետազոտությունը: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվելու է ֆինանսական կրթման ծրագիր:

Տարվա ընթացքում Խնայողական բանկերի միջազգային համագործակցության հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է նաև «Ֆինանսական ունակությունների բարոմետր» հետազոտությունը: Հետազոտության արդյունքների հիման վրա նախատեսվում է մշակել «ՖԿԱՌ 2020-2024» գործողությունների ծրագիրը:

Ի թիվս այլ ծրագրերի՝ հաշվետու տարում իրականացվել են «Սեմինարներ վինվորականների համար», «Քաղաքացի» և «Հաշտ ճամբար» կրթական նախագծերը, «Ամենախելացին» հեռուստանախագիծը, հրապարակվել են կրթական և տեղեկատվական ավելի քան 150 էլեկտրոնային հոդվածներ: Իրականացվել են ֆինանսական իրազեկմանն ուղղված առցանց տարբեր միջոցառումներ, մասնավորապես՝ սոցիալական հարթակների միջոցով (abcfinance.am կայքի Facebook, Instagram, Youtube, Twitter-յան էջեր):

Խորացվել և ամրապնդվել է սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE), Ֆինանսական ներգրավման միության (AFI) և Եվրասիական տնտեսական ընկերակցության հետ համագործակցությունը:


ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ազգային արժույթի շրջանառության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կազմակերպում, կարգավորում և վերահսկում է կանխիկ ՀՀ դրամի շրջանառությունը՝ պահպանելով հարմարավետության, օպերատիվության, անընդհատության և հուսալիության սկզբունքները: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկն ամբողջությամբ ապահովել է տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջը՝ անհրաժեշտ ծավալներով, անվանական արժեքներով, պահանջված որակով և սահմանված ժամկետներում:

Կենտրոնական բանկն իր հաճախորդների դրամարկղային սպասարկումը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում իրականացնում է Երևանի դրամարկղային կենտրոնի և Դիլիջանի, Սիսիանի ու Սյունիքի տարածքային դրամարկղային կենտրոնների (այսուհետ՝ ՏԴԿ-ներ) միջոցով:

2019 թվականին Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 17,8%-ով: ՏԴԿ-ների միջոցով ապահովվել է Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության 16.2%-ը: Ինչպես և նախորդ տարիներին, ՏԴԿ-ների միջոցով իրականացվել են առավելապես կանխիկ դրամի ելքագրման գործառնություններ. դրամարկղային ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության 82.0%-ը:


Գծապատկեր 9. Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2019 թվականին



Տարվա ընթացքում Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի ծավալն ավելացել է 7.1%-ով: Ընդ որում, մետաղադրամների վանգվածն աճել է 11.8%-ով: Աստիճանաբար շրջանառության մեջ են դրվել 2018 թվականի թողարկման երրորդ շարքի թղթադրամները, որոնք շրջանառում են նախկինում թողարկված թղթադրամներին զուգահեռ:

Շրջանառության մեջ կանխիկ դրամի տեսակային կառուցվածքում տարվա սկզբի համեմատությամբ աճել են 10.000 դրամ և 50.000 դրամ անվանական արժեքով թղթադրամների տեսակարար կշիռները, որոնց աճը համապատասխանաբար կազմել է 3.8% և 1%: Հաշվետու տարվա ընթացքում աճել է նաև 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամի պահանջը, որի տեսակարար կշիռը թղթադրամների վանգվածի մեջ հասել է 0.48%-ի:

Գծապատկեր 10. Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 31.12.2019 թ. դրությամբ



Դրամանենգության դեմ պայքարի շրջանակներում Կենտրոնական բանկը շարունակել է համագործակցությունը իրավապահ մարմինների հետ: Կենտրոնական բանկում իրականացվել են կեղծ դրամանիշերի հայտնաբերման և փորձաքննության աշխատանքներ, որոնց արդյունքներով իրավապահ մարմիններին տրամադրվել են կեղծման եղանակների, կատարման ձևերի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ:

2019 թ. առանձնացել է պատմական մի շարք իրադարձություններով և հայ անվանի անհատների հոբելյանական տարեդարձերով, որոնք իրենց արտացոլումն են գտել Կենտրոնական բանկի թողարկումներում:

Թողարկվել են հուշադրամներ՝ ի նշանավորումն հայ ազգի մեծ նվիրյալներ Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյա տարեդարձերի: 20-րդ դարասկզբի այս մեծանուն գործիչներն իրենց ուրույն տեղն են վըաղեցրել հայ մշակույթի պատմության մեջ՝ շնորհիվ գրականության և երաժշտության ոլորտներում ունեցած հաջողությունների ու վաստակի:

Հոբելյանական թողարկումները համալրվել են բարերար Գալուստ Գյուլբենկյանի և նկարիչ Վարդան Մախոխյանի ծննդյան 150-ամյա ու Ծովակալ Իսակովի ծննդյան 125-ամյա տարեդարձերին նվիրված հուշադրամներով, ինչը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու այդ գործիչների ներդրումը հայրենիքի տնտեսության ու մշակույթի վարգացման և խաղաղության ապահովման գործում:

Եվրասիական տնտեսական միության 5-ամյա հոբելյանի առիթով Կենտրոնական բանկը, ինչպես և Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունները, թողարկել է հուշադրամ, նշանավորելով 5 տարիների ընթացքում անդամ պետությունների ձեռքբերումները տնտեսական կապերի ընդլայնման և միասնական տնտեսական քաղաքականության ամրապնդման գործում:

2019 թ. արժևորվել է նաև համապգային կրթական և մշակութային նշանակություն ունեցող հաստատությունների՝ Հայաստանի պատմության թանգարանի և Երևանի պետական համալսարանի 100-ամյա հոբելյաններով, ինչի կապակցությամբ ևս հուշադրամներ են թողարկվել:


Տարվա ուշագրավ թողարկումներից է ,Կովկասյան ընձառյուծի տարիե հուշադրամը, ինչի առիթը նաև այդ հավվագյուտ կենդանու վերադարձն էր Հայաստանի Հանրապետության Խոսրովի անտառարգելոց:

2019 թ. Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն» 13-րդ միջազգային մրցույթում ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2018 թ. թողարկված «Երևան-2800» արծաթե հուշադրամը արժանացել է մրցանակի «Տարվա հուշադրամը» անվանակարգում: Կենտրոնական բանկի այս հերթական մրցանակը մեկ անգամ ևս վկայում է ՀՀ արժույթի գեղարվեստական ձևավորման և արտադրության բարձր որակի մասին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2019 թվականին ՀՀ համախառն միջազգային պահուստներն աճել են շուրջ 590.3 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 2,850 մլն ԱՄՆ դոլար (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11. ՀՀ համախառն միջազգային պահուստների մակարդակը (մլն ԱՄՆ դոլար)



Պահուստների աճը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ տարվա ընթացքում ստացվել են շուրջ 651 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վարկեր և փոխառություններ, ներքին շուկայում իրականացվել է շուրջ 566 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթի առք, իսկ ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկերի թղթակցային հաշիվների մնացորդներն աճել են շուրջ 268 մլն ԱՄՆ դոլարով: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում իրականացվել է շուրջ 829 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտաքին պետական պարտքի մայր գումարների և տոկոսագումարների մարում:

ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել արտարժութային պահուստներին վերաբերող հիմնական պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները մեղմելու կարողության առումով: Այսպես՝ 2019 թվականի

ընթացքում ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ չորս ամսվա, իսկ ընթացիկ պարտավորությունների սպասարկման շուրջ վեց տարվա ծածկույթ:

2019 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով ՀՀ միջազգային պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը, որն ուղղված է եղել միջազգային պահուստների ապահովության, իրացվելիության ու արդյունավետ կառավարման ապահովմանը:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

2019 թվականին շարունակվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում ազգային ռիսկերին համահունչ վերլուծությունների, հնարավոր կասկածներ պարունակող ակդակների հետ կապված կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, օրենսդրության վարգացմանը, ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդմանն ուղղված աշխատանքները:

Գործառնական վերլուծություններ

ՖԴԿ-ի կողմից իրականացվող գործառնական վերլուծություններն ուղղված են ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի բացահայտմանը, ըստ անհրաժեշտության՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը և ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների առնչությամբ իրավապահ մարմիններին ծանուցումների տրամադրմանը:

ՖԴԿ-ն հաշվետվություն տրամադրող անձանցից ստացել և վերլուծել է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություններ, որոնք վերաբերել են փողերի լվացմանը և դրան նախորդող հանցագործությունների հետ կապված կասկածներին: Վերլուծություններում հաճախակի հանդիպող սխեմաներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացում
- Բրգաձև սխեմաներին (ֆինանսական բուրգերին) բնորոշ տարրեր պարունակող ֆինանսական գործարքներ

- Նախկին քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասնակցությամբ ֆինանսական գործարքներ
- ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆինանսական միջոցների տարանցիկ փոխանցումներ
- ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ դեպքեր:

Կանխարգելիչ միջոցառումներ

Կանխարգելիչ միջոցառումները ներառում են հաշվետվություն տրամադրող անձանց տրվող հանձնարարականները՝ ուղղված ռազմավարական և գործառնական վերլուծությունների արդյունքում բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերի վսպմանը, ՖԴԿ կայքէջում թիրախային ֆինանսական պատժամիջոցների անհապաղ կիրառման նպատակով միջազգային ցանկերում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ հրապարակային տեղեկացումների տեղադրումը, հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպվող ուսուցումները և այլն:

Հաշվետվություն տրամադրող անձանց 2019 թ. տրվել են հանձնարարականներ, որոնց նպատակը հիմնականում խարդախության սխեմաներում հավանական ներգրավվածություն ունեցող անձանց հետ կապված կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումն է:

Բացի այդ, հաշվետվություն տրամադրող անձինք տեղեկացվել են ստացած ազդակների վերլուծության ընթացքի և արդյունքների մասին:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում բանկային համակարգի մասնակիցների կողմից մի շարք դեպքերում մերժվել է բարձր ռիսկային գնահատված գործարքների իրականացումը, կամ դադարեցվել են հաճախորդի հետ հաստատված գործարար հարաբերությունները:

Միջազգային ահաբեկչական վտանգի ընդլայնմամբ պայմանավորված՝ ԱՖ հնարավոր ռիսկերի արդյունավետ վսպման և թիրախային ֆինանսական պատժամիջոցների կիրառման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործողությունները՝ ուղղված միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումներին վերաբերող պահանջների կատարմանը և դրանց մասին շահագրգիռ անձանց իրավեկմանը: Այսպես՝ ՖԴԿ կայքէջում հրապարակվել և հաշվետվություն տրամադրող անձանց իրավեկվել է.

- ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ՄԱԿ ԱԽ)՝ միջոցների սառեցման պահանջ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում (ներառյալ՝ 1267/1989/2253 բանաձևերով՝ ԻԼԻՊ-ի (ԴԱԵՇ) և Ալ Քաիդայի, 1988՝ Թալիբանի և 1718՝ Հյուսիսային Կորեայի հետ կապված անձանց ցանկերում) կատարված թարմացումների վերաբերյալ

- ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների, ինչպես նաև այն երկրների վերաբերյալ, որոնք ՖԱԹՖ-ի ՓԼ/ԱՖ չափանիշներին համապատասխանության ընթացիկ դիտանցման շրջանակներում որակվել են որպես ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգի ռազմավարական բացեր ունեցող և դրանք վերացնելու նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ մշակել են գործողությունների ծրագիր:

Ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի վսպմանն ուղղված միջազգային նախաձեռնություններին համապատասխան հաշվետվություն տրամադրող անձանց տրվել են հանձնարարականներ նաև ԱՊՀ շրջանակներում կազմված ահաբեկիչների ցանկերում ներառված անձանց նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում պահպանվել է ԱՖ ռիսկի շատ ցածր մակարդակը:

Ինչ վերաբերում է հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպվող ուսուցումներին, ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտի վարգացումների, առկա ռիսկերի մասին սեմինար-քննարկումներ են անցկացվել հաշվետվություն ներկայացնող անձանց բոլոր խմբերի համար՝ շուրջ 300 աշխատակցի մասնակցությամբ: 2019 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ սեմինար-քննարկում է կազմակերպվել նաև ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

Օրենսդրության կարգացում

ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգի արդյունավետության կարևորագույն տարրերից է միջազգային ստանդարտները լավագույնս արտացոլող և բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերը վսպող օրենսդրությունը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի օրենսդրության կարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել է բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի կամ կասկածելի գործարքի, գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման կարգի նախագիծ՝ պայմանավորված հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգի ներդրմամբ: Միաժամանակ, ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանության ապահովման նպատակով կատարվել են օրենսդրական փոփոխությունների մշակման աշխատանքներ, որոնք միտված են քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակի ընդլայնմանը՝ դրանում ներառելով ներպետական և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց: Բացի այդ, նախատեսվել են իրական շահառուների բացահայտման պահանջների հետ կապված լրացուցիչ կարգավորումներ:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը ընդունել է որոշում, որը նախատեսում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը վճարային քարտերի միջոցով իրականացնելիս ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի վրա հենվելու պահանջ: Նման կարգավորումը կնպաստի հաճախորդի նույնականացման տեղեկությունների ձեռքբերման, պահպանման և տրամադրման վերաբերյալ դրույթների կիրարկման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ վարչապետի 2019 թ. մարտի 1-ի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև վանգվածային ոչնչացման վենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դեռևս 2018 թ. նոյեմբերի 30-ին հավանության արժանացած «Առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման վերաբերյալ» հայեցակարգի իմպլեմենտացման նպատակով: ՀՀ կենտրոնական բանկը, որպես աշխատանքային խմբի անդամ, ակտիվորեն ներգրավված է եղել ինչպես միջազգային փորձի, այնպես էլ օրենքի նախագծի մշակման աշխատանքներում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ինստիտուտը ներդրած երկրների իրավական ակտերի և դատարանների որոշումների ուսումնասիրության, բանկային գաղտնիքի ձեռքբերման ընթացակարգերի, ինստիտուտի ներդրման մոդելի, հանցագործությունների ցանկի ներկայացման հետ կապված աշխատանքներում:

Համագործակցություն իրավապահ մարմինների հետ

ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման, կանխման և խափանման նպատակով կարևոր նշանակություն ունի ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը, համատեղ քննարկումների և ուսուցումների իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է ՓԼ և նախորդող հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման նպատակով ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև ակտիվ համագործակցությունը:

Միաժամանակ, ՖԴԿ նախաձեռնությամբ կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև՝ համագործակցության տարբեր ոլորտներում արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

04

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԿԲ անվտանգություն և գործընթացների անընդհատություն

Գիտելիք և մարդկային ռեսուրսներ

Հաղորդակցում և հաշվետվողականություն

2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԲ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին Կենտրոնական բանկը, ամրապնդելով նախորդ տարիների ընթացքում անվտանգության ոլորտում կատարված աշխատանքների արդյունքները, հստակ շեշտադրում է կատարել ֆինանսաբանկային համակարգի կիբեռանվտանգության ապահովման ընդլայնման և կայացման վրա:

Մասնավորապես՝ տվյալ ոլորտում ճանաչված մասնագետների ներգրավմամբ կատարվել է Հայաստանի Հանրապետության բանկային հատվածի կիբեռսպառնալիքների հետազոտություն:

Կիբեռսպառնալիքների չեզոքացման նպատակով, հիմնվելով միջազգային՝ հատկապես եվրոպական փորձի վրա, իրականացվել են MISP (Malware Information Sharing Platform) համակարգին համակցման կենտրոնի ստեղծման աշխատանքները, հատկացվել են անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը առևտրային բանկերի և Կենտրոնական բանկի տեղեկատվական անվտանգության համար պատասխանատու ստորաբաժանումների միջև:

Հիմնվելով նախորդ տարվա ընթացքում մշակված կոնցեպտի վրա՝ աշխատանքներ են տարվել Համակարգչային միջադեպերի արձագանքման կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարեվերջի դրությամբ 2019 թ. Կենտրոնական բանկի աշխատակիցների թիվը կազմել է 778՝ 425 կին և 353 տղամարդ, միջին տարիքը՝ 41: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 62 աշխատակից (նախորդ տարի՝ 51):

2019 թվականին իրականացվել է անձնակազմի հավաքագրման ակտիվ գործընթաց, և համալրման տարբեր ուղիներով ընտրված 104 մարդ աշխատանքի է անցել ՀՀ կենտրոնական բանկում:

Հաշվետու ժամանակաշրջանում, որոշումների կայացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ: Միաժամանակ, ստանձնելով առավել բարդ գործառույթներ, 57 աշխատակից ունեցել է առաջխաղացում. նրանցից 8-ը նշանակվել են ղեկավար պաշտոններում:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2019 թվականին հայտարարված Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի նշանակման մրցույթին մասնակցել է 30 դիմորդ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2, Երևանի պետական համալսարանի 1, Արցախի պետական համալսարանի 1 լավագույն ուսանողի հատկացվել է կրթաթոշակ:

2019 թվականին Կենտրոնական բանկում գիտահետազոտական փորձառություն է անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 96 ուսանող:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի 42 աշխատակից դասավանդել է Հայաստանի տարբեր ուսումնական հաստատություններում, այդ թվում. 5-ը՝ Երևանի պետական համալսարանում, 7-ը՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում, 5-ը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, ընդ որում, 2-ը՝ Գյումրիի մասնաճյուղում, 5-ը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում, 6-ը՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանում՝ իրենց փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա մասնագետներին:

Անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

Կենտրոնական բանկը, կարևորելով աշխատակիցների մասնագիտական շարունակական աճի խնդիրը, 2019 թվականին ևս հետևողականորեն իրականացրել է աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումներ:

2019 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները գիտելիքների արդիականացման և խորացման, փորձի փոխանակման, հմտությունների վարգացման նպատակով վերապատրաստվել են արտասահմանյան գործընկեր բանկերում, այլ ֆինանսական կազմակերպություններում և մասնագիտական ուսումնական կենտրոններում, Հայաստանի Հանրապետության ուսումնական կենտրոններում, ինչպես նաև Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում՝ միջազգային հայտնի համալսարանների դասավանդողների ներգրավմամբ: Վերը նշված բոլոր միջոցառումներն ուղղված են եղել ՀՀ ԿԲ ռազմավարությամբ սահմանված աշխատանքային խնդիրների (ինչպիսիք են, օրինակ՝ նոր որակի դրամանիշերի թողարկում, ռիսկերի վրա հիմնված վերահսկողական համակարգի ներդրում և կատարելագործում, դպրոցներում ֆինանսական կրթման տարրի ներդրում) արդյունավետ լուծմանը:

Պահպանելով Կենտրոնական բանկում տարիների ընթացքում կուտակած գիտելիքներն ու փորձը գործընկերներին փոխանցելու և թիմային աշխատանքի ավանդույթը՝ Կենտրոնական բանկի արդի խնդիրների, գործառույթների մասին տեղեկանալու, ինչպես նաև մասնագիտական գործունեության համար կարևոր հմտությունները վարգացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկում ներքին ռեսուրսների օգտագործմամբ կազմակերպված 26 դասընթացի մասնակցել է 304 աշխատակից:

Կենտրոնական բանկի 12 աշխատակից մասնակցել է Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից իրական ժամանակի ռեժիմով անցկացվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին:

Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի ռեզերվն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքներն ընդլայնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները վարգացնելու նպատակով 2019 թվականին իրականացվել է 4 աշխատակցի շրջափոխում (ռոտացիա):

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են հանձնել ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտների համար սահմանված միջազգային մասնագիտական որակավորման քննություններ: 2019 թվականի դրությամբ միջազգային մասնագիտական որակավորում ունի 64, շարունակում է քննություններ հանձնել 17 աշխատակից: ՀՀ կենտրոնական բանկի 8 աշխատակից ՍիէՖէյ-ի (CFA) և 9 աշխատակից էյՍիՍիէյ-ի (ACCA) լիիրավ անդամ են:

Կենտրոնական բանկի 2 աշխատակից 2019 թվականի ընթացքում Հարվարդի Դեյվիս կենտրոնում իրականացրել է կենտրոնական բանկի արդի խնդիրներին վերաբերող հետազոտություն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի հաշվետվողականությունը

Կենտրոնական բանկն իր նպատակներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկն իր գործունեության հաշվետվողականությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը ՀՀ Ազգային ժողովին է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը (առաջին եռամսյակում հաստատված գնաճի հաշվետվությունն), որը բաղկացած է դրամավարկային քաղաքականության ծրագրից և նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունից: Կենտրոնական բանկը հրապարակում է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որն ուղեցուցային բնույթ ունի: Դրամավարկային քաղաքականության ծրագրերը ներառում են գնաճի կանխատեսումները, դրամավարկային քաղաքականության ուղղությունները և օրենքով սահմանված նպատակների իրականացման համար Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած անհրաժեշտ այլ դրույթներ: Դրամավարկային քաղաքականության իրագործման հաշվետվողականության շրջանակներում Կենտրոնական բանկը տարվա ընթացքում հրապարակում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի մասին ԿԲ խորհրդի 8 որոշում: Որոշման ընդունման նույն օրը հրապարակվում է մամլո հաղորդագրություն, որով հասարակությանը օպերատիվ և համառոտ ներկայացվում են որոշման և դրա կայացման հիմքերը: Որոշման կայացումից հետո 10 օրվա ընթացքում հրապարակվում է տոկոսադրույքի վերաբերյալ արձանագրությունը, որն ավելի մանրամասն հասարակությանն է ներկայացնում որոշման կայացման գործընթացում տեղի ունեցած քննարկումներն ու որոշման տրամաբանությունը: «Գնաճի հաշվետվություն պարբերականը հրապարակվում է տարին 4 անգամ[4], որով լայն հասարակությանն է ներկայացվում տվյալ ժամանակահատվածում ձևավորված փաստացի մակրոտնտեսական և դրամավարկային միջավայրերն ու գնաճի

4. Առաջին եռամսյակի գնաճի հաշվետվությունը ԱԺ ներկայացվող Տարեկան հաղորդումն է:

նպատակի իրագործման գործնային վերլուծությունը, ինչպես նաև ԿԲ-ի կողմից իրականացվելիք դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները և գնաճի ծրագրված հետագիծը՝ կանխատեսվող հորիզոնում գնաճի նպատակային մակարդակի ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ֆինանսական կայունության վերաբերյալ վերլուծությունների արդյունքները կիսամյակային պարբերականությամբ ներկայացնում է ֆինանսական կայունության հաշվետվությունում:

Ֆինանսական կայունության հաշվետվության հիմնական նպատակն է իրական և ֆինանսական հատվածներում նախկին և սպասվող վարգացումների համատեքստում երկրի ֆինանսական կայունությանը կարճաժամկետ հեռանկարում սպառնացող հավանական ռիսկերի նկարագրումը: Ընդհանուր առմամբ, հաշվետվությունում ներկայացվում են որոշակի ժամանակահատվածի համար ֆինանսական կայունության վերաբերյալ Կենտրոնական բանկի գնահատականը, առկա ռիսկերը և դրանց կանխարգելման կամ չեզոքացմանն ուղղված միջոցառումները:

Պարբերականը ներկայացվում է հրավիրված մամլո ասուլիսում, այնուհետև Կենտրոնական բանկի կայքէջում հրապարակվում են պարբերականն ու մամլո հաղորդագրությունը:

Պարբերականի հրապարակումը թույլ է տալիս բարձրացնել ֆինանսական հաստատությունների, ձեռնարկությունների, տնտեսավարողների ու բնակչության տեղեկացվածության մակարդակը, ապահովում է Կենտրոնական բանկի գործունեության թափանցիկությունը՝ նպաստելով ԿԲ-ի նկատմամբ լայն հասարակության վստահության աճին:

Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը»: Վերջինիս բաղկացուցիչ տարրերից է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք աուդիտի են ենթարկվում միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից:

«Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» տարեկան պարբերականում հանրությանը ներկայացվում են տվյալ տարում թողարկված ՀՀ հուշադրամների մասին տեղեկատվություն, ՀՀ հուշադրամների մասնակցությամբ անցկացված մրցույթների արդյունքները, ՀՀ հուշադրամներին առնչվող այլ նյութեր:

«Տեղեկագիր» ամսական պարբերականում տեղ են գտնում Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ և անհատական որոշումները, Կենտրոնական բանկի նախագահի որոշումները, այլ իրավական ակտեր, ինչպես նաև վիճակագրական ամփոփագիրը:

Ֆինանսական դիտարկումների կենտրոնի տարեկան հաշվետվությունում ներկայացվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքները:

Վերը նշված հրապարակումները միտված են հասարակության լայն շերտերին ԿԲ հիմնական նպատակների իրագործման վերաբերյալ առավել ընդգրկուն և մատչելի տեղեկատվության ներկայացմանը՝ դրանով իսկ բարձրացնելով ԿԲ-ի հանդեպ հասարակության վստահության աստիճանը:

Հասարակայնության հետ կապեր

2019 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական շուկայում գործող կազմակերպությունների գործունեությանն առնչվող իրադարձությունների, ԿԲ նախաձեռնությունների վերաբերյալ հանրության իրազեկման աշխատանքները:

Կենտրոնական բանկի հիմնական նպատակների իրականացման թափանցիկության ապահովման շրջանակում ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունն իրազեկվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին: Տեղի են ունեցել քննարկումներ տարբեր հարցերի շուրջ: Հատուկ ուշադրություն է դարձվել ոլորտում անօրինական կերպով գործող և ռիսկային տարրեր պարունակող կազմակերպությունների գործունեության վերաբերյալ բնակչության զգուշացման միջոցառումներին:

Տարվա ընթացքում հրապարակվել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին ԿԲ խորհրդի 8 որոշում: Որոշման մասին համառոտ հաղորդագրությունը հրապարակվել է ԿԲ խորհրդում որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվել է վերջինիս արձանագրությունը: 4 արձանագրություններ հրապարակվել են «Գնաճի հաշվետվություն» պարբերականում:

Տարբեր թեմաներով քննարկումներ են կազմակերպվել լրատվամիջոցների ղեկավարների և ԿԲ ղեկավար կազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Հասարակայնության հետ կապերի ծառայության կազմակերպած՝

ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
4

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
20

31
ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ

275
ԿԱՅՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

223
ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Կենտրոնական բանկն ակտիվորեն օգտագործել է սոցկայքերի հարթակները՝ հրապարակելով նորություններ, հաղորդագրություններ, բանկի գործունեության մասին այլ նյութեր, արձագանքել հարցադրումներին:

Կազմակերպվել են 4 միջոցառում կանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ և 20 հարցազրույց: 2019 թվականի ընթացքում ծառայությունը ստացել է 31 գրավոր հարցում, որոնց պատասխանները տրվել են օրենքով սահմանված կարգով: Բազմաթիվ բանավոր հարցումների բանկի կողմից տրվել են օպերատիվ պատասխաններ: ԿԲ կայքի միջոցով քաղաքացիների և կազմակերպությունների առցանց հարցումներին տրվել են 275 պատասխաններ: Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել է 223 մամլո հաղորդագրություն:

ՀՀ կենտրոնական բանկի համապատասխանության գործառույթը

ՀՀ կենտրոնական բանկը, կարևորելով իր կողմից իրականացվող գործառնությունների համապատասխանությունը ներպետական պահանջներին և լավագույն միջազգային փորձին ու չափորոշիչներին, 2019 թ. վարգացրել և համապարփակ ձևով կանոնակարգել է համապատասխանության գործառույթի կենտրոնացված իրականացման գործընթացը[5]: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում ստեղծված աշխատանքային խմբի կողմից կատարվել են կենտրոնական բանկերում համապատասխանության գործառույթի ներդրման վերաբերյալ միջազգային փորձի ծավալուն ուսումնասիրություններ[6]: Ուսումնասիրության արդյունքներով մշակվել և հաստատվել են ոլորտը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերը.

- Համապատասխանության քաղաքականությունը:
- Համապատասխանության ապահովման ներքին ընթացակարգերի ձեռնարկը:
- Համապատասխանության ծառայության կանոնադրությունը:

Համաձայն վերոնշյալ իրավական ակտերի՝ համապատասխանության գործառույթը կիրարկվում է ԿԲ համապատասխանության ծառայության (այսուհետ՝ Համապատասխանության ծառայություն) կողմից՝ որպես առանձին, այլ ստորաբաժանումներից անկախ և կենտրոնացված գործառույթ: Համապատասխանության ծառայությունը ներառում է Համապատասխանության գլխավոր աշխատակցին և ԿԲ շահագրգիռ ստորաբաժանումների՝ համապատասխանության գործառույթներ ունեցող աշխատակիցներին[7]:

Համապատասխանության ծառայության նպատակն է ապահովել ԿԲ կողմից իրականացվող գործառնությունների համապատասխանությունը ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ինչպես ներպետական օրենսդրու-

5. Մինչև 2019 թ. համապատասխանության գործառույթը իրականացվել է ԿԲ շահագրգիռ ստորաբաժանումների կողմից՝ յուրաքանչյուրը իրեն վերաբերելի մասով:
6. Ուսումնասիրվել են Նիդեռլանդների կենտրոնական բանկի, ԱՄՆ դաշնային պահուստային բանկի, Լիբանանի կենտրոնական բանկի փորձը, Համապատասխանության գործառույթի ներդրման վերաբերյալ բանկային վերահսկողության բավելյան կոմիտեի սկզբունքները, ինչպես նաև Վոլֆսբերգ խմբի փաստաթղթերը:
7. 2019 թ. կատարվել են նաև Համապատասխանության ծառայության կադրային ապահովման հետ կապված նշանակումներ:

թյան, այնպես էլ միջազգային պահանջներին, բացահայտել և գնահատել այդ պահանջների չպահպանման հետևանքով առաջացող հեղինակության, վեղծարարության, կոռուպցիոն և նմանատիպ այլ ռիսկերը, ձեռնարկել դրանց կսպմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Համապատասխանության ծառայության իրավասությունների ոլորտային առումով ներառում են ԿԲ հետևյալ գործառնությունները.

- Օտարերկրյա ֆինանսական հաստատություններում թղթակցային հաշիվների բացում և կառավարում:
- Հաճախորդների թղթակցային և այլ հաշիվների բացում և սպասարկում:
- Այլ գործառնությունների իրականացում, այդ թվում՝ ԿԲ-ի կարիքների համար իրականացվող մատակարարումներ, դրամագիտական արժեքների վաճառք, դրամանիշերի փոխանակում:

Համապատասխանության ծառայությունը վերոնշյալ ոլորտներում ապահովում է ԿԲ-ի հաճախորդների, միջազգային գործընկերների, մատակարարների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը, հաստատում է բարձր ռիսկային գործարքները և գործարար հարաբերությունները, իրականացնում է կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների վերլուծություններ, դրանց արդյունքներով որոշումներ կայացնում գործարքների/գործարար հարաբերությունների մերժման, դադարեցման, կասեցման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցման վերաբերյալ: Միաժամանակ, ի լրումն վերոնշյալի, Համապատասխանության ծառայությունը նաև.

- Ուսումնասիրում և գնահատում է ԿԲ-ի գործառնություններին բնորոշ համապատասխանության հետ կապված ռիսկերը, ձեռնարկում է բացահայտված ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:
- Ներկայացնում է ԿԲ-ն օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների, միջազգային կառույցների հետ հարաբերություններում:
- ԿԲ-ի ղեկավար կազմին և շահագրգիռ ստորաբաժանումներին տրամադրում է խորհրդատվություն համապատասխանությանն առնչվող հարցերով:
- Ձեռնարկում է ուսուցողական, իրազեկման միջոցառումներ՝ ԿԲ-ում համապատասխանության մշակույթի շարունակական վարգացման նպատակով:

Համապատասխանության ծառայությունն իր գործառույթներն իրականացնելիս ուղղակիորեն հաշվետու է ԿԲ նախագահին, ինչը միտված է անկախության և որոշումների կայացման հարցում անաչառության առավելագույն աստիճանի ապահովմանը:

Այցելուների կենտրոն[8]

2019 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը սպասարկել է 11 673 այցելուի՝ նախորդ տարվա (10 804 այցելու) համեմատությամբ 8 %-ով ավելի:

2019 թվականին Այցելուների կենտրոնի կրթական ծրագրերի շրջանակում շարունակվել են ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնական հաստատությունների վինծառայողների և սաների համար «Մեկ օր Կենտրոնական բանկում» խորագրի ներքո կազմակերպված կրթական միջոցառումները: Տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, Այցելուների կենտրոնում հյուրընկալվել են 325 (2018 թ.՝ 274) վինծառայողներ/սաներ և դասախոսներ:

Կազմակերպվել են նաև կրթական-տեղեկատվական դասընթացներ Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արմավիրի մարզերի հանրակրթական դպրոցների 45 ուսուցիչների համար:

2019 թվականի մայիսին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը մասնակցել է «Թանգարանների գիշեր» միջազգային ծրագրին, որի շրջանակներում ունեցել է 1468 այցելու:

2019 թվականին Կենտրոնական բանկի և ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախագծվել ու ստեղծվել է գրադարանային ֆոնդի ձեռքբերման, հաշվառման, ընթերցողների սպասարկման միասնական ժամանակակից գրադարանային էլեկտրոնային ծրագիր, որը յուրաքանչյուր ԿԲ աշխատակցի հնարավորություն է տալիս հետևելու գրադարանային ֆոնդում առկա մասնագիտական էլեկտրոնային և տպագիր պարբերականների ու գրականության թարմացումներին (ԿԲ-ի կողմից ձեռք բերված մասնագիտական գրականության համառոտ նկարագրությամբ), ունենալու անհատական էլեկտրոնային գրքույկ, ԿԲ գրադարանից առցանց պատվիրելու գրականություն:

2019 թվականին դրամագիտության ոլորտի հայտնի մասնագետների մասնակցությամբ նկարահանվել է Հայաստանի դրամաշրջանառության պատմության վերաբերյալ «Դրամապատում» վավերագրական - տեղեկատվական ֆիլմը, որտեղ ներկայացված են փողի ստեղծման պատմությունը, հայկական դրամաշրջանառության փուլերը: Ֆիլմը նախատեսված է հասարակայնության տարբեր շրջանակների համար:

2019 թվականին Այցելուների կենտրոնը համագործակցել է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» (JAA) հասարակական կազմակերպության, «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» (JMF), «Հայկական ՓԻ ԱՐ ասոցիացիա» գիտատեղեկատվական հասարակական կազմակերպության, «Վորլդ վիժն Հայաստան» վարգացման և

8. Մանրամասն տե՛ս visitorcentre.cba.am, museum.cba.am, www.cba.am կայքէջերում:

բարեգործական միջազգային կազմակերպության, Գյումրու «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի, «Նեյրոհաբ բիզնես ակադեմիայի», էթիկայի դպրոցի, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ՝ հյուրընկալելով Հայաստանի մարզերի դպրոցների աշակերտներին:

2019 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնում շարունակվել է ՀՀ ֆինանսների նախարարության «Պետական գանձարանի» պատմամշակութային դրամագիտական արժեքների ցուցադրությունը:

05

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Կենտրոնական բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գործընկեր կառույցների հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ մակարդակներում: Համագործակցությունն իրականացվել է և՛ աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների, դասընթացների, և՛ փոխայցելությունների միջոցով: Նշված շրջանակում հատկանշական են գործընկեր կառույցների ներկայացուցիչների մի շարք այցեր:

Մասնավորապես՝

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում 2019 թ. ՀՀ կենտրոնական բանկը ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Ռիչարդ Դորնբուշին, ինչպես նաև Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի տնօրեն Ջիհադ Ազուրին: Այցերի ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության, Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակի, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, արտաքին պահուստային դիրքի ամրապնդման, պետական պարտքի կրճատման, ֆինանսական համակարգի կայունության պահպանման հետ կապված հարցեր: 2019 թ. հերթական անգամ Հայաստան է այցելել նաև ԱՄՀ հայաստանյան առաքելությունը: Կենտրոնական բանկի և ՀՀ Կառավարության հետ արդյունավետ աշխատանքի արդյունքում ԱՄՀ խորհուրդը 2019 թվականին հաստատեց Հայաստանի հետ նոր ծրագիրը: ՀՀ կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ հաստատված ծրագրի շրջանակներում սերտորեն համագործակցել է ԱՄՀ հայաստանյան առաքելության, ինչպես նաև համապատասխան դեպարտամենտի և բելգիա-նիդեռլանդական ենթախմբի տնօրինության հետ՝ապահովելով ծրագրի դրամավարկային և ֆինանսական հատվածներին վերաբերող միջոցառումների իրականացումը:

Ապրիլին ՀՀ կենտրոնական բանկը ընդունել է Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամի (EFSE) տնօրենների խորհրդի նախագահ Քրիստոֆ Տիսկենսի գլխավորած պատվիրակությանը: Այցի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարները, ապա տեղի է ունեցել Finance in Motion կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «ՓՄՁ կայուն ֆինանսներ» թեմայով կլոր սեղան-քննարկումը:

Հոկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը ընդունել է KfW բանկի խորհրդի անդամ Բեռնարդ Լոունի գլխավորած պատվիրակությանը: Քննարկվել են KfW-ի կողմից իրականացրած և ընթացիկ ծրագրերի արդյունքները, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի, ՓՄՁ վարկավորմանն ուղղված հետագա ծրագրերը: Կենտրոնական բանկի և KfW բանկի արդյունավետ համագործակցության արդյունքում 2019 թ. դեկտեմբերին ստորագրվել է 3 նոր վարկային համաձայնագիր՝ 60 մլն եվրո ընդհանուր գումարով: Վարկային միջոցները նախատեսված են գյուղատնտեսության, բնակարանային շինարարության և վերականգնվող էներգետիկայի ոլորտների համար:

Տարվա ընթացքում շարունակվել են Սևծովյան առևտրի և զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու միջազգային այլ գործընկեր կառույցների հետ համագործակցությունը և փոխայցերը:

2019 թ. իրենց հերթական դիտորդական այցով Հայաստան են ժամանել «Մուդիզ» (Moody's) և «Ֆիթչ Ռեյթինգս» (Fitch Ratings) միջազգային վարկանշային կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց այցի հետ կապված աշխատանքները համակարգել է Կենտրոնական բանկը: Արդյունքում Moody's վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Հայաստանի սուվերեն վարկանիշը՝ «B1»-ից դարձնելով «Ba3»՝ միաժամանակ փոխելով երկրի վարկանիշի հեռանկարը՝ «կայունից» դեպի «դրական»:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկը շարունակել է համագործակցությունը ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտում միջազգային ստանդարտների մշակման, երկրների կողմից վերջիններիս իմպլեմենտացման արդյունքների գնահատման գործում ներգրավված միջազգային կազմակերպությունների ու կառույցների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, էգմոնտ խմբի, Վարշավայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի, Եվրասիական խմբի, ԱՊՀ ֆինանսական հետախուզության մարմինների ղեկավարների խորհրդի հետ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցությանը, 2019 թվականի ընթացքում ամենից հաճախ հարցումներ ուղարկվել են ԱՄՆ-ի, Լատվիայի, Էստոնիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, ՌԴ-ի, Չեխիայի, Բրիտանական, Վիրջինյան Կղզիների ՖՀՄ-ներին, ստացվել են ՌԴ-ի, Լատվիայի, Մալթայի, Չեխիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Լիխտենշտեյնի ՖՀՄ-ներից:

Միջազգային համագործակցության խորացման համատեքստում **2019 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ն Երևանում և Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպել է տարածաշրջանային և միջազգային նշանակության տասնյակ գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինար-քննարկումներ, դասընթացներ, ֆորումներ և այլն:**

Այսպես՝

- ՀՀ նախագահի աշխատակազմի հետ համատեղ՝ ՀՀ ԿԲ Դիլիջանի ՈւԿ-ում հյուրընկալել է «Մտքերի հայկական գագաթնաժողովի» բարձրաստիճան հյուրերին:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ ՀՀ ԿԲ ԴՈւԿ-ում հյուրընկալել է հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի և բանկային և տնտեսական հարցերով գործարար համաժողովի մասնակիցներին:
- Կազմակերպել է «Ընդլայնելով դրամավարկային քաղաքականության սահմանները» թեմայով կենտրոնական բանկերի մակրոմոդելավորման 22-րդ տարեկան համաժողովը:
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպել է «Դրամական շուկայի» աշխատանքային խմբի 4-րդ հանդիպումը, որին հաջորդել է «Լիբոր տոկոսադրույքի, ինչպես նաև սվոփերի և ածանցյալների միջազգային ասոցիացիայի» կողմից Հայաստանի Հանրապետության համար իրավական կարծիքի տրամադրման վերաբերյալ սեմինար-քննարկումը:

Կենտրոնական բանկը հյուրընկալել է նաև ԵԱՏՄ ֆինանսական շուկաների խորհրդատվական խորհրդի հերթական՝ 2019 թվականի 2-րդ նիստը, «ISO 20022 ստանդարտի ներդրման ոլորտում համագործակցության մասին» թեմայով ազգային վճարահաշվարկային համակարգերի զարգացման ոլորտի՝ ԵԱՏՄ անդամ երկրների ազգային/կենտրոնական բանկերի մասնագետների աշխատանքային խմբի հանդիպումը և միջազգային ու տարածաշրջանային կառույցներում Կենտրոնական բանկի անդամակցությամբ պայմանավորված մի շարք այլ միջոցառումներ: **2019 թվականի ընթացքում շարունակվել են երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր, պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու աշխատանքները:**

Մասնավորապես՝

1. Մայիսի 2-ին Երևանում հայ-էմիրաթական հանձնաժողովի նիստի ընթացքում՝ ՀՀ կենտրոնական բանկի և «Աբու-Դաբի Գլոբալ Մարկեթս» կազմակերպության միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր,
2. Հուլիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում ընթացող Միջազգային ֆինանսական կոնգրեսի շրջանակներում ստորագրվել է «Ֆինանսական շուկայի վերահսկողության ոլորտում ՀՀ կենտրոնական բանկի և ՌԴ կենտրոնական բանկի միջև համագործակցության և տեղեկատվության, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվության փոխանակման» մասին համաձայնագիրը,

3. ԵԱՏՄ ֆինանսական շուկաների խորհրդատվական խորհրդի հերթական նիստի շրջանակներում 2019 թ. հոկտեմբերի 2-ին Երևանում ՀՀ ԿԲ և ֆինանսական ծառայությունների կարգավորման «Աստանա» միջազգային ֆինանսական կենտրոնի հանձնաժողովի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր:

4. Կենտրոնական բանկը ակտիվորեն մասնակցել է ԵԱՏՄ միասնական ֆինանսական շուկայի ձևավորման հայեցակարգի մշակման աշխատանքներին և գործընկեր կենտրոնական / ազգային բանկերի հետ ավարտին է հասցրել փաստաթղթի ամբողջական մշակումը, որը ստորագրվել է ԵԱՏՄ երկրների ղեկավարների կողմից հոկտեմբերի 1-ին Երևանում կայացած գագաթնաժողովի ժամանակ:

2019 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ տարածքում և արտերկրում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստման ծրագրերին, դասընթաց-խորհրդակցություններին և փորձի փոխանակման այցերին:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը հյուրընկալել է ԵԱՏՄ և ԱՊՀ անդամ պետությունների կենտրոնական/ազգային բանկերի 11 պատվիրակությունների՝ մասնագիտական փորձի փոխանակման և տեղեկատվության փոխանակման արդեն ավանդույթ դարձած համագործակցության շրջանակում: Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամ պետությունների կենտրոնական և ազգային բանկերի միջև համագործակցության շրջանակներում Դիլիջանի ուսումնա-հետազոտական կենտրոնում կազմակերպվել է 11 դասընթաց, որոնց մասնակցել են ինչպես ԵԱՏՄ երկրների, այնպես էլ այլ օտարերկրյա բանկերի 59 ներկայացուցիչներ: Կենտրոնական բանկը կազմակերպել է նաև հատուկ թեմաներով գործնական դասընթացներ, փորձի փոխանակման նպատակով աշխատանքային այցեր, միջոցառումների ընթացքում Կենտրոնական բանկի 72 աշխատակիցներ ներկայացրել են ՀՀ կենտրոնական բանկի լավագույն փորձը:

Միջազգային գործընկեր կառույցների և եվրոպական կենտրոնական/ազգային բանկերի հետ կազմակերպվել են 31 վերապատրաստման դասընթացներ և փորձի փոխանակման այցեր, որոնց մասնակցել է 1058 ներկայացուցիչ:

Համաշխարհային առաջատար ուսումնական հաստատությունների դասախոսների մասնակցությամբ Կենտրոնական բանկի տնտեսական հետազոտության վարչության աշխատակիցների համար տարվա ընթացքում կազմակերպվել են 7 կրթական ծրագրեր:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի փորձագետները միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպել են արդի խնդիրներին նվիրված մի շարք միջոցառումներ (դասընթացներ, աշխատաժողովներ, խորհրդակցություններ, քննարկումներ)՝ ներգրավելով ՀՀ համապատասխան գերատեսչությունների, ՀՀ առևտրային բանկերի և շահագրգիռ այլ կազմակերպությունների 580 փորձագետների:

2019 թ. ընթացքում ՀՀ-ում գործող մասնագիտացված կազմակերպություններում կազմակերպված տարբեր կրթական ծրագրերում ԿԲ աշխատակիցների մասնակցությունը կազմել է 252 անձ:

06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ **ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2019

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 5
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում 6
3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ 23
4. Տոկոսային եկամուտ 25
5. Տոկոսային ծախս 26
6. Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից 26
7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից 26
8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 27
9. Այլ եկամուտ 27
10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր 27
11. Այլ ծախսեր 28
12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ 28
13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ 33
14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 34
15. Ներդրումային արժեթղթեր 35
16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ 37
17. Հիմնական միջոցներ 39
18. Ոչ նյութական ակտիվներ 40
19. Այլ ակտիվներ տեղական արժույթով 40
20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ 41
21. Այլ փոխառություններ 41
22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով 42
23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ 42
24. Թողարկված պարտատոմսեր 43
25. Կապիտալի կառավարում 43
26. Պայմանական պարտավորություններ 43
27. Գործարքներ կապակցված կողմերի հետ 44
28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 46
29. Ֆինանսական գործիքների իրական արժեք 46
30. Ռիսկերի կառավարում 52
31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 67
32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 69
33. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 69

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը.
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Մարչելլո Գելաշվիլի

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

31 մարտի, 2020թ.

ՀՀ, ք. Երևան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	*Ծնթգ.*	*2019թ.*	*2018թ.*
Տոկոսային եկամուտ	4	35,271,838	27,985,211
Տոկոսային ծախս	5	(21,092,209)	(16,477,039)
Զուտ տոկոսային եկամուտ		**14,179,629**	**11,508,172**
Պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձում/ (պարտքային կորուստների գծով ծախս)	12,15,19	198,529	(93,852)
Զուտ տոկոսային եկամուտ պարտքային կորուստների գծով պահուստից հետո		**14,378,158**	**11,414,320**
Միջնորդավճարների գծով եկամուտ		608,934	334,616
Միջնորդավճարների գծով ծախս		(1,304,349)	(896,176)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	6	(1,455,792)	(2,986,567)
Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	7	(477,632)	468,802
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	8	14,501,951	11,938,436
Այլ եկամուտ	9	4,226,258	3,736,415
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	10	(828,921)	(5,023,216)
Այլ ծախսեր	11	(17,895,318)	(19,384,341)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		**11,753,289**	**(397,711)**
Շահութահարկի գծով ծախս		(1,993,458)	(1,945,595)
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		**9,759,831**	**(2,343,306)**
Շահույթը /(վնասը) վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		9,693,618	(2,373,281)
Չվերահսկող բաժնեմասին		66,213	29,975
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված օգուտ		573,139	290,656
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներում փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների գծով		30,870	(5,717)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ զուտ եկամուտ		**604,009**	**284,939**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ/(վնաս)			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներից զուտ օգուտ/(վնաս)		7,977	(406,716)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ/(վնաս)		**7,977**	**(406,716)**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ /(վնաս)		**611,986**	**(121,777)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/ (վնաս)		**10,371,817**	**(2,465,083)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտը/ (վնասը) վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		10,277,020	(2,504,709)
Չվերահսկող բաժնեմասին		94,797	39,626

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մարտի 31-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

Արթուր Ջավադյան
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

Մարիաննա Ամիրբեկյան
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ		*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ		39,603,848	42,238,172
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12	559,991,988	348,066,857
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	773,358,342	704,860,473
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	–	43,849
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15	2,702,167	2,985,864
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	16	88,398,230	89,548,497
Այլ ակտիվներ		171,875	160,687
Ընդամենը ակտիվներ արտարժույթով		**1,464,226,450**	**1,187,904,399**
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	12	433,882,868	443,648,161
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15	87,872,142	88,280,524
Հիմնական միջոցներ	17	65,679,935	68,740,919
Ոչ նյութական ակտիվներ	18	3,020,744	2,790,723
Այլ ակտիվներ	19	12,239,109	14,795,146
Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով		**602,694,798**	**618,255,473**
Ընդամենը ակտիվներ		**2,066,921,248**	**1,806,159,872**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	376,281,455	247,315,663
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	1,248,593	5,822,025
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	81,100	97,040
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16	240,948,903	266,323,100
Այլ փոխառություններ	21	142,742,121	151,710,752
Այլ պարտավորություններ		945,056	767,226
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով		**762,247,228**	**672,035,806**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		607,209,301	566,706,467
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	347,119,824	367,193,187
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	326,045,767	184,926,978
Թողարկված պարտատոմսեր	24	6,626,428	7,838,688
Այլ պարտավորություններ	22	4,408,557	4,503,420
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով		**1,291,409,877**	**1,131,168,740**
Ընդամենը պարտավորություններ		**2,053,657,105**	**1,803,204,546**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	25	100,000	100,000
Գլխավոր պահուստ		25,480,248	25,480,248
Կառավարության կողմից թողարկված մուրհակ	25	73,810,843	73,810,843
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	25	2,422,299	1,838,897
Կուտակված վնաս		(89,478,707)	(99,172,325)
Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ		**12,334,683**	**2,057,663**
Չվերահսկող բաժնեմաս		929,460	897,663
Ընդամենը սեփական կապիտալ		**13,264,143**	**2,955,326**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**2,066,921,248**	**1,806,159,872**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բանկի սեփականատիրոջը վերագրելի							
Հազար ՀՀ դրամ	*Թողարկված կապիտալ*	*Գլխավոր պահուստ*	*Կառավարության կողմից թողարկված մուրհակ*	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ*	*Կուտակված վնաս*	*Ընդամենը*	*Չվերահսկող բաժնեմաս*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,903,879**	**(93,984,117)**	**7,310,853**	**958,037**	**8,268,890**
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը				66,446	(2,814,927)	**(2,748,481)**	**–**	**(2,748,481)**
ՖՀՄՍ 9-ի համաձայն վերահաշվարկված սկզբնական մնացորդ	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,970,325**	**(96,799,044)**	**4,562,372**	**958,037**	**5,520,409**
Դուստր ընկերությունում բաժնեմասի ավելացում	–	–	–	–	–	–	(100,000)	**(100,000)**
Հաշվետու տարվա վնաս	–	–	–	–	(2,373,281)	**(2,373,281)**	29,975	**(2,343,306)**
Այլ համապարփակ վնաս	–	–	–	(131,428)	–	**(131,428)**	9,651	**(121,777)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	–	–	–	**(131,428)**	**(2,373,281)**	**(2,504,709)**	**39,626**	**(2,465,083)**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,838,897**	**(99,172,325)**	**2,057,663**	**897,663**	**2,955,326**
Դուստր ընկերությունում բաժնեմասի ավելացում	–	–	–	–	**–**	**–**	(63,000)	**(63,000)**
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	9,693,618	**9,693,618**	66,213	**9,759,831**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	583,402	**–**	**583,402**	28,584	**611,986**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	–	–	–	**583,402**	**9,693,618**	**10,277,020**	**94,797**	**10,371,817**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**2,422,299**	**(89,478,707)**	**12,334,683**	**929,460**	**13,264,143**

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	*Ծնթգ.*	*2019թ.*	*2018թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		**11,753,289**	**(397,711)**
Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա շահույթը/(վնասը) զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Մաշվածություն և ամորտիզացիա	11	4,231,048	4,649,127
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս)		(11,458)	1,429
Ստացվելիք տոկոսներ		(972,116)	(58,784)
Վճարվելիք տոկոսներ		408,405	331,968
Զուտ վնաս արտարժույթի վերագնահատումից	6	1,982,331	3,335,741
Զուտ օգուտ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից		(2,273,133)	(939,807)
Պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձում/(պարտքային կորուստների գծով ծախս)	12,15,19	(198,529)	93,852
Վճարված շահութահարկ		(2,096,085)	(1,905,678)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**12,823,752**	**5,110,137**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		11,774,996	12,920,447
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ		(72,633,468)	29,051,403
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		9,880,361	(139,221,508)
Այլ ակտիվներ		1,856,851	543,410
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		40,502,834	50,611,986
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ		112,422,725	52,122,131
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		136,197,289	28,565,401
Թողարկված պարտատոմսերից մուտքեր		3,512,226	3,013,273
Թողարկված պարտատոմսերի մարում		(4,710,600)	–
Այլ պարտավորություններ		849,946	102,171
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված գործառնական գործունեությունից		**252,476,912**	**42,818,851**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(890,980)	(1,066,933)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		41,512	987,991
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից և մարումից մուտքեր		1,308,092	2,814,866
Դուստր ընկերությունում բաժնեմասի ավելացում		–	(100,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված ներդրումային գործունեությունից		**458,624**	**2,635,924**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկեր		6,346,555	9,419,398
Մարված վարկեր		(34,421,137)	(29,292,741)
Վճարումներ վարձակալության գծով		(82,489)	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ֆինանսավորման գործունեությունում		**(28,157,071)**	**(19,873,343)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(3,586,638)	(5,876,406)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**221,191,827**	**19,705,026**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	28	355,967,550	336,262,524
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	28	**577,159,377**	**355,967,550**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		34,299,722	27,926,427
Վճարված տոկոսներ		(20,683,804)	(16,145,071)

1. Գործունեության նկարագրություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Բանկ» կամ «Կենտրոնական բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ «Օրենք») և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների թվաքանակը 2019թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ կազմել է 778 (2018թ.՝ 736):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումն է: Գների կայունության նպատակն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկի այլ խնդիրներն են.

- Ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմաններ,
- Ստեղծել և զարգացնել գործուն վճարահաշվարկային համակարգ,
- Կարգավորել Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի թողարկումը և դրամաշրջանառությունը,
- Կազմակերպել և կարգավորել փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումները,
- Ապահովել ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ,
- Ապահովել ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցություն և այլն:

Իր խնդիրները իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկը.

- Հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- Լիցենզավորում է առևտրային բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց և կազմակերպությունները, վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- Տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և այլն:

Բանկի խոշոր դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող % 2019թ.	Վերահսկվող % 2018թ.	Հիմնադրման ամսաթիվ
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	56.25	56.25	մարտ 2000թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամական միջոցների փոխադրումներ	100.00	100.00	ապրիլ 1998թ.
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	հունիս 2009թ.
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	փետրվար 2010թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2010թ.
«Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2013թ.
«Ստակ Պրոցեսինգ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	100.00	100.00	դեկտեմբեր 2017թ.
«Ստակ Մանի Տրանսֆեր» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	100.00	82.64	դեկտեմբեր 2017թ.

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝«ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան՝ Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների համար:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները): Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

(գ) Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է բերել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

Իրական արժեք

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՊԿ մոդելների դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- Խմբի ներքին վարկային գնահատման մոդելը, որը առանձին դասերի համար սահմանում է դեֆոլտի հավանականությունները,
- Խմբի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի (ԱԿԱՊԿ) հիմունքով,

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

- ԱՊԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերի և ելակետային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և այնպիսի տնտեսական ելակետային տվյալների միջև, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքը, կապերի որոշումը և դրանց ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Կանխատեսվող մակրոտնտեսական սցենարների և դրանց հավանականությունների կշիռների ընտրությունը՝ ԱՊԿ մոդելների ելակետային տնտեսական փոփոխականները որոշելու համար:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքներ է կնքում կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ով պահանջվում է ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչել իրենց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելիս, թե արդյոք գործարքները գնանշվում են շուկայական, թե ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա այդպիսի գործարքների համար գործող շուկա: Դատողության համար հիմք է ծառայում չկապակցված կողմերի հետ համանման գործարքների գնանշումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը: Կապակցված կողմերի հետ մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են Ծանոթագրություն 27-ում:

Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») *հետ գործարքների հաշվառում*

Համաձայն «ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը, ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում:

Վարձակալություններ. լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատում

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար վարձակալության գծով պարտավորությունը չափելիս կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը վարձակալը ստիպված կլիներ վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման համար: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը արտացոլում է այն գումարը, որը Խումբը «պետք է վճարի», ինչը պահանջում է գնահատումների կիրառում, երբ չկան դիտարկելի տոկոսադրույքներ (ինչպիսիք են այն դուստր կազմակերպությունները, որոնք ֆինանսավորման գործառնություններ չեն իրականացնում), կամ երբ անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ՝ վարձակալության ժամկետները և պայմանները արտացոլելու համար (օրինակ՝ երբ վարձակալությունները դուստր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով չեն):

Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալներ (ինչպիսիք են օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), եթե հասանելի են և պետք է կատարեն որոշակի կազմակերպությանը բնորոշ գնահատումներ (ինչպիսիք են օրինակ՝ դուստր կազմակերպության վարկանիշը):

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(գ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում

Խումբն առաջին անգամ է կիրառել ստանդարտների որոշ փոփոխությունները, որոնք գործում են 2019թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Խումբը վաղաժամկետ չի կիրառել որևէ թողարկված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ: Յուրաքանչյուր փոփոխության բնույթը և ազդեցությունը ներկայացված է ստորև.

ՖՀՄՍ 16 «*Վարձակալություն*»

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է «*Վարձակալություն*» ՀՀՄՍ 17-ին, «*Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում*» ՖՀՄՄՄԿ 4-ին, «*Գործառնական վարձակալություն. Խրախուսող պայմաններ*» ՄՄԿ 15-ին և «*Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատում*» ՄՄԿ 27-ին: Ստանդարտը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալից հաշվառել վարձակալությամբ ստացած բոլոր ակտիվները միասնական հաշվապահական հաշվեկշռի մոդելով:

Վարձատուի հաշվառումը ըստ ՖՀՄՍ 16-ի զգալի փոփոխություններ չի կրել ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել վարձակալությունները նույն դասակարգման սկզբունքով, ինչ ՀՀՄՍ 17-ի դեպքում և կտարբերակեն երկու տեսակի վարձակալություն՝ գործառնական և ֆինանսական:

Խումբը ընդունել է ՖՀՄՍ 16-ը՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ որպես սկզբնական կիրառման ամսաթիվ դիտարկելով 2019թ. հունվարի 1-ը, առանց համադրելի տեղեկատվության վերահաշվարկման: Այս մեթոդի համաձայն ստանդարտը կիրառվում է հետընթաց՝ կուտակային ազդեցությունը ճանաչելով սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Խումբն ընտրել է կիրառել անցման գործնական մոտեցումը, որը թույլ է տալիս սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ կիրառել ստանդարտը միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում որոշակիացվել են որպես վարձակալություններ «*Վարձակալություն*» ՀՀՄՍ 17-ի և «*Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում*» ՖՀՄՄՄԿ 4-ի համաձայն: Խումբն ընտրել է նաև կիրառել ճանաչումից ազատումները այն պայմանագրերի համար, որոնք մեկնարկի ամսաթվի դրությամբ ունեն 12 ամիս կամ դրանից պակաս ժամկետ և չեն պարունակում գնման օպցիոն («կարճաժամկետ վարձակալություն») և այն պայմանագրերը, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է («փոքրարժեք ակտիվներ»):

ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

Ակտիվներ	
Հիմնական միջոցներ	482,988
Ընդամենը ակտիվներ	**482,988**
Պարտավորություններ	
Այլ պարտավորություններ	482,988
Ընդամենը պարտավորություններ	**482,988**

ա) ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցության բնույթը

Խումբն ունի տարբեր հիմնական միջոցների վարձակալության պայմանագրեր: Նախքան ՖՀՄՍ 16-ի կիրառումը Խումբը որպես վարձակալ վարձակալության սկզբի ամսաթվին դասակարգում էր յուրաքանչյուր վարձակալություն որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության դեպքում վարձակալված գույքը չէր կապիտալացվում, և վարձավճարները շահույթում կամ վնասում ճանաչվում էին գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացում՝ որպես վարձակալության գծով ծախս: Ցանկացած վարձակալության գծով կատարված կանխավճարներ կամ հաշվեգրված վարձավճարներ ճանաչվում էին համապատասխանաբար որպես «Այլ ակտիվներ» կամ «Այլ պարտավորություններ»:

ՖՀՄՍ 16-ի կիրառումից հետո Խումբը բոլոր վարձակալությունների համար կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում, բացառությամբ կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ստանդարտը սահմանում է հատուկ անցումային դրույթներ և գործնական մոտեցումներ, որոնք կիրառվել են Խմբի կողմից:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(գ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

Նախկինում որպես գործառնական վարձակալություններ դասակարգված վարձակալություններ

Նախկինում որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունների գծով Խումբը ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ՝ բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել են՝ հիմք ընդունելով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորության գումարը՝ ճշգրտված նախկինում ճանաչված վարձակալության գծով կատարված կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով: Վարձակալության գծով պարտավորությունները ճանաչվել են մնացած վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչելով սկզբնական կիրառման ամսաթվին վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով:

Խումբը կիրառել է նաև հասանելի գործնական մոտեցումները, որոնցից են.

- Կիրառել է միասնական զեղչման դրույք խելամտորեն համանման հատկանիշներ ունեցող վարձակալությունների պորտֆելի նկատմամբ,
- Կիրառել է կարճաժամկետ վարձակալության բացառությունը այն վարձակալությունների համար, որոնց դեպքում վարձակալության ժամկետն ավարտվում է սկզբնական կիրառման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում,
- Սկզբնական կիրառման ամսաթվին բացառել է սկզբնական ուղղակի ծախսերը օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափումից,
- Կիրառել է դատողություններ վարձակալության ժամկետը որոշելիս, երբ պայմանագիրը պարունակում է վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու օպցիոններ:

Հիմք ընդունելով վերը նշվածը, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 482,988 հազար ՀՀ դրամ արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներառվել են «Հիմնական միջոցներ»-ի կազմում,
- 482,988 հազար ՀՀ դրամ արժեքով վարձակալության գծով պարտավորություններ ճանաչվել են «Այլ պարտավորություններ»-ի կազմում:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունները համադրվում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորվածությունների գումարին հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	637,469
Միջին կշռված լրացուցիչ փոխառության տոկոսադրույք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	10.8 %
Զեղչված գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**482,988**
Վարձակալության գծով պարտավորություններ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**482,988**

բ) Նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում

Ստորև ներկայացված են ՖՀՄՍ 16-ի անցման ժամանակ կիրառված Խմբի նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որը կիրառվել է սկզբնական կիրառման ամսաթվից սկսած.

i. Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(գ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ, եթե Խումբը խելամտորեն համոզված է ձեռք բերել վարձակալված ակտիվը սեփականության իրավունքով, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Խումբն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի համար, որոնք համարվում են փոքրարժեք: Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Վերակնքման հնարավորություն պարունակող վարձակալության պայմանագրերի վարձակալության ժամկետի որոշման նշանակալի դատողություններ

Խումբը որոշում է վարձակալության ժամկետը որպես վարձակալության չեղյալ չհամարվող ժամանակաշրջան՝ հաշվի առնելով ցանկացած ժամանակաշրջաններ, որոնց համար առկա է վարձակալության երկարաձգման օպցիոն, եթե խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, կամ ցանկացած ժամանակաշրջաններ, որոնց համար առկա է վարձակալությունը դադարեցնելու օպցիոն, եթե խելամտորեն համոզված է, որ չի իրագործի այդ օպցիոնը:

Խումբը որոշ վարձակալությունների դեպքում ունի ևս մեկ ժամկետով վարձակալելու հնարավորություն: Խումբը դատողություններ է կիրառում գնահատելու՝ արդյոք խելամտորեն համոզված է, որ կիրագործի վերակնքման հնարավորությունը: Խումբը դիտարկում է բոլոր տեղին գործոնները, որոնք տնտեսական խթան են ստեղծում վարձակալության վերակնքման հնարավորությունը իրագործելու համար: Վարձակալության մեկնարկի ամսաթվից հետո Խումբը կրկին գնահատում է վարձակալության ժամկետը, եթե տեղի է ունենում դեպքի կամ հանգամանքների նշանակալի փոփոխություն, որոնք գտնվում են իր հսկողության ներքո և ազդեցություն ունեն Խմբի՝ նորացնելու օպցիոնը իրագործելու (կամ չիրագործելու) հնարավորության վրա (օրինակ՝ ռազմավարության փոփոխություն):

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(գ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարներ

Ստորև ներկայացված են Խմբի օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքները և շարժը ժամանակաշրջանի ընթացքում.

Հազար ՀՀ դրամ	*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ*		*Վարձակալության գծով պարտավորություն*
	Շենքեր	*Ընդամենը*	
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**482,988**	**482,988**	**482,988**
Ավելացումներ	25,346	**25,346**	25,346
Մաշվածության ծախս	(102,501)	**(102,501)**	–
Տոկոսային ծախս	–	–	49,499
Վճարումներ	–	–	(131,988)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**405,833**	**405,833**	**425,845**

ii. Գործառնական – Խումբը որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Խումբը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում՝ Կանխավճարի հատկանիշներ բացասական փոխհատուցմամբ
ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանով, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բացառապես մայր գումարի և չմարված գումարի վրա հաշվեգրված տոկոսագումարների վճարումներն են (SPPI չափանիշը), և գործիքը պահվում է տվյալ դասակարգման համար համապատասխան բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ ֆինանսական ակտիվը անցնում է SPPI չափանիշով, անկախ իրադարձությունից կամ հանգամանքից, որը հանգեցնում է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման, և անկախ նրանից, թե որ կողմն է վճարում կամ ստանում ողջամիտ փոխհատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 28-ում՝ Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում

Փոփոխությունները հստակեցնում են, որ կազմակերպությունը կիրառում է ՖՀՄՍ 9 ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումներում երկարաժամկետ մասնակցության համար, որի նկատմամբ չի կիրառվում բաժնեմասնակցության մեթոդը, բայց որն, ըստ էության, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումներում զուտ ներդրումների մաս է կազմում (երկարաժամկետ մասնակցություն): Այս պարզաբանումը տեղին է, քանի որ այն ենթադրում է, որ ՖՀՄՍ 9-ում ակնկալվող պարտքային կորստի մոդելը կիրառվում է նման երկարաժամկետ մասնակցության նկատմամբ:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(զ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում (շարունակություն)

Փոփոխությունները նաև հստակեցնում են, որ ՖՀՄՍ 9-ի կիրառման դեպքում կազմակերպությունը հաշվի չի առնում ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման որևէ վնաս կամ զուտ ներդրումների գծով արժեզրկումից կորուստներ՝ ճանաչված որպես ճշգրտումներ ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման զուտ ներդրման նկատմամբ, որոնք առաջանում են ՀՀՄՍ 28 «*Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*» կիրառելիս: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խումբը չունի երկարաժամկետ մասնակցություն իր ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումներում:

Տարեկան բարեփոխումների 2015-2017թթ. շրջան

ՖՀՄՍ 3 «*Բիզնեսի միավորումներ*»

Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ կազմակերպությունը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, այն կիրառում է փուլերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները, ներառյալ համատեղ գործունեության ակտիվներում և պարտավորություններում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: Այդպիսով, ձեռք բերողը վերաչափում է համատեղ գործունեությունում նախկինում ունեցած ամբողջ մասնակցությունը:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար, որոնց դեպքում ձեռք բերումը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խումբը չի ունեցել գործարքներ, որի արդյունքում ձեռք է բերել համատեղ հսկողություն:

ՖՀՄՍ 11 «*Համատեղ պայմանավորվածություններ*»

Մասնակցող կողմերից մեկը, որը սակայն համատեղ հսկողություն չունի համատեղ գործունեության նկատմամբ, կարող է հսկողություն ստանալ համատեղ գործունեության նկատմամբ, որտեղ համատեղ գործունեությունը սահմանվում է որպես ձեռնարկատիրական գործունեություն համաձայն ՖՀՄՍ 3-ի: Փոփոխությունները հստակեցնում են, որ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը չի վերաչափվում:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն գործարքների համար, որոնց դեպքում համատեղ հսկողությունը ստանում է 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խումբը չի ունեցել գործարքներ, որի արդյունքում ձեռք է բերել համատեղ հսկողություն:

ՀՀՄՍ 12 «*Շահութահարկ*»

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ շահութահարկի գծով շահաբաժինների հետևանքները ուղղակիորեն կապված են բաշխման ենթակա շահույթ սկզբնավորող գործարքների կամ իրադարձությունների, և ոչ թե սեփականատերերին բաշխված շահույթի հետ: Հետևաբար, կազմակերպությունը շահութահարկի գծով շահաբաժինների բոլոր հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալում, կախված այն հանգամանքից, թե որտեղ են ի սկզբանե ճանաչվել տվյալ գործարքները կամ իրադարձությունները:

Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այս փոփոխությունները, դրանք կիրառում է այն շահաբաժինների շահութահարկային հետևանքների նկատմամբ, որը ճանաչել է ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո:

Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, այն որևէ ազդեցություն չունի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(է) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնցում կատարվել են ներդրումներ և որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ Խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ այդ հատույցների վրա ազդելու համար:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(է) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Մասնավորապես, Խումբն ունի վերահսկողություն միայն այն դեպքում, երբ.

- ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

Երբ Խումբն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում մեծամասնությունից քիչ քվեարկող բաժնետոմսեր կամ համանման այլ իրավունքներ, Խումբը դիտարկում է բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ գնահատելիս, թե արդյոք այն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողություն, ներառյալ.

- ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի այլ սեփականատերերի հետ պայմանագրային պայմանավորվածություն,
- այլ պայմանագրային պայմանավորվածություններից ծագող իրավունքներ,
- Խմբի քվեարկող բաժնետոմսեր և հնարավոր քվեարկող բաժնետոմսեր:

Խումբը վերագնահատում է, թե արդյոք այն վերահսկում է ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությանը, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ փոփոխություններ են տեղի ունեցել վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիսում: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակերպության նկատմամբ, և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված շահույթը բացառվում են, չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը առանց վերահսկողության փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի և զուտ արդյունքների այն մասն է, որը վերագրելի է այն բաժնեմասին, որի սեփականության իրավունքը ուղղակի կամ անուղղակի կերպով չի պատկանում Խմբին: Չվերահսկող բաժնեմասը կազմում է Խմբի սեփական կապիտալի առանձին բաղադրիչ:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռք բերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ Խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը, և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գուդվիլը՝ հանած կուտակված արժեզրկման կորուստներ (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպությունների արդյունքի մաս, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (գ) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպության արդյունքների մաս:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(է) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Սակայն երբ ասոցիացված կազմակերպության վնասներում Խմբի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, Խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

(ը) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները), վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2019 և 2018 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2019թ.	*31 դեկտեմբերի 2018թ.*
ՀՀ դրամ/ 1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
ՀՀ դրամ/ 1 եվրո	537.26	553.65
ՀՀ դրամ/ 1 բրիտանական ֆունտ	629.13	611.61
ՀՀ դրամ/ 1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք)	663.34	672.79
ՀՀ դրամ/ 1 ճապոնական իեն	4.40	4.38
ՀՀ դրամ/ 1 ռուսական ռուբլի	7.77	6.97

(թ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներքո դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են նախապես հայտնի դրամական գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է ձևավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ

Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և ածանցյալ գործիքները, իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունն է գործող շուկայում գինը: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավականաչափ հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին վճարված գումարները և կոմիսիոն վճարները, կարգավորման գործակալությունների կողմից և արժեթղթերի փոխանակումներից գանձումները, գույքի սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի պարգևավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

Ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական գործիքը չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասի գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և մինչև մարման գումարը ցանկացած պարգևավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ պարգևավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք), առանձին չեն ներկայացվում, այլ ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույքի):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ որոշակի դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա արժեզրկման կորուստները) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները և զեղչերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ածանցյալ գործիքները և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Որպես առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքները ներառվում են «Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասակարգման մեջ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում իրացման նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք իրենց նպատակային նշանակությամբ չեն հանդիսանում գործող հեջավորման գործիքներ: Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների գծով օգուտները կամ վնասները, այդ թվում պարտքային արժեթղթերի առքուվաճառքից գոյացած տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս):

Խումբը իր բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Սրանք առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ են, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում դրանց հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքները և այլ գործոններ:

Համաձայն ՀՀՄՍ 39-ի՝ ֆինանսական ակտիվներում, պարտավորություններում և ոչ ֆինանսական հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում էին որպես առանձին ածանցյալ գործիքներ և արտացոլվում էին իրական արժեքով, եթե դրանք համապատասխանում էին ածանցյալ գործիքի սահմանմանը (որը ներկայացված է վերևում), եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չէին հիմնական պայմանագրերի բնութագրերի և ռիսկերի հետ, իսկ հիմնական պայմանագրերը ինքնին չէին հանդիսանում առևտրային նպատակներով պահվող կամ գնահատվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հիմնական պայմանագրից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները առևտրային պորտֆելի կազմում հաշվառվում էին իրական արժեքով, ընդ որում՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում էին ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

2018թ. հունվարի 1-ից ՖՀՄՍ 9-ի ներդրումից հետո, Խումբը այդ եղանակով է հաշվառում ֆինանսական պարտավորություններում և ոչ ֆինանսական հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումների հիման վրա:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Պահանջներ վարկային հաստատությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

Խումբը չափում է պահանջները վարկային հաստատությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հաշվի է առնում այդ տեղեկատվությունը հետագայում նոր սկզբնավորվող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ պարգևավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և պարտքային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պարտավորվածության հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Խումբը չափում է պարտքային գործիքները իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացում*» ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցել դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Զրոյական տոկոսադրույքով վարկերի հաշվառում

Խմբի կողմից միջազգային ֆինանսական հաստատություններից զրոյական տոկոսադրույքով ստացված միջոցների օգուտը դիտարկվում և հաշվառվում է որպես պետական շնորհ: Զրոյական տոկոսադրույքով օգուտը չափվում է որպես ստացված միջոցների իրական արժեքի և միջոցների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ ստացված և որպես հետաձգված եկամուտ ճանաչված մուտքերի միջև տարբերություն: Հետաձգված եկամտի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում Խումբը՝ որպես ծախս է ճանաչում համապատասխան ծախսումները: Կատարվում է շնորհին վերաբերող եկամուտի չափով նվազեցում՝ համապատասխան ծախսը ներկայացնելիս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Խմբի շարունակվող մասնակցության չափով: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ Խմբի շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում, չեղարկվում կամ դադարում է:

Եթե փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքը փոխարինվում է մեկ այլ պարտքային գործիքով, որի պայմաններն էականորեն տարբերվում են, կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, այդպիսի փոխարինումը կամ փոփոխությունը հանգեցնում է այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

(ի) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հաշվանցման այդպիսի իրավունքը (ա) չպետք է պայմանավորված լինի ապագա իրադարձությամբ և (բ) պետք է իրավաբանորեն կիրառելի լինի հետևյալ բոլոր հանգամանքներում. (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(լ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(խ) Փոխառության տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են շահույթում կամ վնասում՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքներից զուտ շահույթի կազմում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններում:

(ծ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(կ) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(հ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս, ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը՝ որպես առանձին ակտիվներ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(հ) Հիմնական միջոցներ (շարունակություն)

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

	2019թ.	*2018թ.*
Հող և շենքեր		
► Շենքեր	30-80 տարի	30-80 տարի
► Շենքերի սպասարկման համակարգեր	3-20 տարի	3-20 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	2-15 տարի	2-15 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի	5 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը ակտիվի այն մոտավոր գումարն է, որը Խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվը արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ձ) Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ դասակարգվում են որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվը «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ» դասակարգվելու համար պետք է բավարարի հետևյալ բոլոր պայմաններին. ա) ակտիվը իր ներկա վիճակում պետք է պատրաստ (մատչելի) լինի անմիջապես վաճառքի համար, բ) Խմբի ղեկավարությունը պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր, գ) ակտիվը ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում, դ) պետք է ակնկալվի, որ մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտվող վաճառք ճանաչվելու պայմաններին, ե) պլանն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցուցանշեն, որ պլանում նշանակալի փոփոխությունների կատարումը կամ պլանի դադարեցումը հավանական չէ: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները չափվում են իրենց հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի և վաճառքի գծով ծախսումների տարբերությունից նվազագույնով: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների համար մաշվածություն չի հաշվարկվում:

(ղ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ճանաչումից և արժեզրկումից կուտակված վնասները: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1-10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(ճ) Արժեզրկում

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ, կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ճ) Արժեզրկում (շարունակություն)

Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից:

Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված, և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը զեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(մ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, իսկ պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(յ) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր:

(ն) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խմբի կապիտալում:

(շ) Շահույթի բաշխում

Խմբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- մասհանումներ պետք է կատարվեն՝ Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խմբի ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խմբի շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ո) Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, սակայն բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

(չ) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ՝ կիրառելի դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի հաշվառված արժեքը նվազեցվել է՝ արժեզրկումից կորստի հիմունքով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ օգտագործելով սկզբնապես գործող արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

(պ) Միջնորդավճարների գծով եկամուտ

Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակված միջնորդավճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Խումբը վաղաժամկետ չի ընդունել նոր ստանդարտները:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում՝ Բիզնեսի սահմանում (թողարկված է 2018թ. հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է 2020թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների համար)

2018թ. հոկտեմբերին ՀՀՄՍ Խորհուրդը թողարկել է «*Բիզնեսի միավորումներ*» ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները բիզնեսի սահմանման վերաբերյալ, ինչը թույլ է տալիս կազմակերպություններին որոշել՝ արդյոք ձեռք բերված գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը բիզնես է, թե ոչ: Դրանք պարզաբանում են բիզնեսի համար նվազագույն պահանջները, վերացնում են գնահատումները՝ արդյոք շուկայի մասնակիցները ունակ են փոխարինել ցանկացած բացթողնված տարրերը, ավելացնում են ուղեցույցներ, որն օգնում է կամակերպություններին գնահատելու, արդյոք ձեռք բերված գործընթացները համապարփակ են, նեղացնում է բիզնեսի և արդյունքի սահմանումները և ներկայացնում է հայեցողական իրական արժեքի կենտրոնացման ստուգում: Փոփոխությունների հետ տրամադրվել են նաև պարզաբանող օրինակներ:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

Քանի որ փոփոխությունները կիրառելի են առաջընթաց, այն գործարքների կամ դեպքերի համար, որոնք տեղի են ունենում առաջին անգամ կիրառման ամսաթվին կամ դրանից հետո, փոփոխությունները ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա անցման ամսաթվի դրությամբ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում՝ «էականության» սահմանում (թողարկված է 2018թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ է 2020թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)

2018թ. հոկտեմբերին ՖՀՄՍ Խորհուրդը թողարկել է ՀՀՄՍ 1 «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*»-ի և ՀՀՄՍ 8 «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*»-ի փոփոխություններ էականության սահմանումը բոլոր ստանդարտներում համապատասխանեցնելու և սահմանման որոշ ասպեկտներ հստակեցնելու համար: Նոր սահմանումը նշում է, որ «Տեղեկատվությունը էական է, եթե խելամտորեն ակնկալում է, որ բացթողումը, սխալ ներկայացումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել հիմնական օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա, որը ֆինանսական տեղեկատվություն է տրամադրում որոշակի հաշվետու կազմակերպության վերաբերյալ:

Էականության սահմանման փոփոխությունների արդյունքում չի ակնկալվում էական ազդեցություն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում. Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 7 (թողարկված է 2019թ. սեպտեմբերի 26-ին և ուժի մեջ է 2020թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները ներառում են մի քանի մեղմացումներ, որոնք կիրառելի են բոլոր հեջավորման փոխհարաբերությունների համար, որոնց վրա տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխումն ուղղակի ազդեցություն ունի: Հեջավորման փոխհարաբերությունների վրա ազդում է, եթե բարեփոխումն անորոշություն է առաջացնում հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքների՝ ուղենիշի վրա հիմնված դրամական հոսքերի ժամկետների կամ գումարի վերաբերյալ: Որպես տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխման արդյունք կարող են լինել անորոշություններ հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքների՝ ուղենիշի վրա հիմնված դրամական հոսքերի ժամկետների կամ գումարի վերաբերյալ նախքան առկա տոկոսադրույքի ուղենիշը այլընտրանքային գրեթե ռիսկերից ազատ տոկոսադրույքով փոխարինելու ժամանակահատվածում: Սա կարող է հանգեցնել նաև անորոշությունների, թե արդյոք կանխատեսվող գործարքը մեծապես հավանական է, և արդյոք հետագայում հեջավորման փոխհարաբերությունները կլինեն մեծապես արդյունավետ:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում՝ Ներդրողի և նրա հետ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ ներդրում (թողարկված է 2014թ. սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ լինելու ամսաթիվը կսահմանվի ՀՀՄՍ Խորհրդի կողմից)

Փոփոխությունները պարզաբանում են ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի միջև առկա հակասությունը վաճառվող կամ ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ ներդրվող դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորստի վերաբերյալ: Փոփոխությունները հստակեցնում են, որ ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ՖՀՄՍ 3-ի բնորոշման համաձայն ձեռնարկատիրական գործունեություն հանդիսացող ակտիվների վաճառքի կամ ներդրման արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ: Այնուամենայնիվ, ձեռնարկատիրական գործունեություն չհանդիսացող ակտիվների վաճառքից կամ ներդրումից ստացված ցանկացած շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ չփոխկապակցված ներդրողների բաժնեմասի չափով: ՀՀՄՍԽ-ն անորոշ ժամանակով հետաձգել է այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը, սակայն փոփոխությունները վաղաժամկետ ընդունողները դրանք պետք է կիրառեն առաջընթաց կերպով: Խումբը կկիրառի փոփոխությունները, երբ ուժի մեջ մտնեն:

Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ»-ում (թողարկված է 2018թ. մարտի 29-ին և ուժի մեջ է 2020թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)

Վերանայված Հայեցակարգային հիմունքները ներառում են նոր գլուխներ չափման վերաբերյալ, ֆինանսական արդյունքների ներկայացման ուղեցույց, բարելավված սահմանումներ և ուղեցույցեր, մասնավորապես պարտավորության սահմանման փոփոխություն, պարզաբանումներ կարևոր ոլորտների վերաբերյալ, ինչպիսիք են ֆինանսական հաշվետվություններում պատասխանատվության դերերը, զգուշավորությունը և չափման անորոշությունը:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ (թողարկված է 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ է 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար)

Այս նեղ շրջանակի փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունները դասակարգվում են ընթացիկ կամ ոչ ընթացիկ՝ կախված հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա իրավունքներից: Պարտավորությունները ոչ ընթացիկ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ըստ էության իրավունք ունի հետաձգել մարումը առնվազն 12 ամիս: Ուղեցույցը այլևս չի պահանջում, որպեսզի այդ իրավունքը լինի անվերապահ: Ղեկավարության սպասումները, թե արդյոք հետագայում մարման հետաձգման իրավունքը կիրագործվի, ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Հետաձգման իրավունքն առկա է միայն, եթե կազմակերպությունը համապատասխանում է համապատասխան պայմաններին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Պարտավորությունը դասակարգվում է ընթացիկ, եթե որևէ պայման խախտվել է հաշվետու ամսաթվին կամ մինչև այդ, նույնիսկ եթե այդ պայմանից հրաժարվելը ստացվել է փոխատուի կողմից հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո:
Հակադարձաբար, վարկը դասակարգվում է ոչ ընթացիկ, եթե վարկի կովենանտները (պայմանները) խախտվել են հաշվետու ամսաթվից հետո: Ավելին, փոփոխությունները ներառում են նաև պարզաբանումներ այնպիսի պարտքի դասակարգման վերաբերյալ, որը կազմակերպությունը պետք է մարի՝ փոխարկելով կազմակերպության սեփական կապիտալի: «Մարումը» սահմանվում է որպես մարում կանխիկով, տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցներով կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքներով: Բացառություն է նախատեսվում այն փոխարկելի գործիքների համար, որոնք պետք է փոխարկվեն սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգված է՝ որպես բաղադրյալ ֆինանսական գործիքի առանձին տարր հանդիսացող բաժնային գործիք:

4. Տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Նոստրո հաշիվներ	2,754,182	1,354,020
Ժամկետային ավանդներ	382,698	597,257
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	24,634	18,015
Այլ	70,469	99,022
Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով	**3,231,983**	**2,068,314**
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	30,722,771	24,458,016
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	1,317,084	1,458,881
Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով	**32,039,855**	**25,916,897**
Ընդամենը տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով	**35,271,838**	**27,985,211**

5. Տոկոսային ծախս

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Այլ փոխառություններ	3,676,153	3,735,460
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	2,518,184	2,810,517
Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**6,194,337**	**6,545,977**
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (Ծնթգ. 27)	13,737,026	8,049,811
Թողարկված պարտատոմսեր	677,398	710,782
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	281,005	1,034,651
Այլ	202,443	135,818
Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**14,897,872**	**9,931,062**
Ընդամենը տոկոսային ծախս	**21,092,209**	**16,477,039**

6. Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Զուտ վնաս արտարժույթի վերագնահատումից	(1,982,331)	(3,335,741)
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	526,539	349,174
Ընդամենը զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	**(1,455,792)**	**(2,986,567)**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ վնասի կազմում ներառված է 7,563,296 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ վնասը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2018թ՝ 8,455,505 հազար ՀՀ դրամի զուտ վնաս):

7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Զուտ (վնաս)/օգուտ Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 27)	(453,848)	552,850
Զուտ օգուտ /(վնաս) սեփական կառավարման ներքո սվոպ պայմանագրերի գծով	5,851	(59,840)
Զուտ վնաս սեփական կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրերի գծով	(29,635)	(24,208)
Ընդամենը զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	**(477,632)**	**468,802**

2007թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	14,508,756	12,789,190
Զուտ վնաս հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	(33,271)	(824,518)
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	44,229	156,277
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	(17,763)	(182,513)
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	**14,501,951**	**11,938,436**

*Վերը նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (Ծնթգ. 6):

9. Այլ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Դրամագիտական արժեքներ	725,162	651,905
Ֆինանսական գործակալության վճար	163,865	259,379
Այլ	3,337,231	2,825,131
Ընդամենը այլ եկամուտ	**4,226,258**	**3,736,415**

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին:

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված է 2,460,686 հազար ՀՀ դրամ գումարը, որը ներկայացնում է Բանկի երկու դուստր կազմակերպությունների հասույթը, որոնք տրամադրում են կանխիկի հավաքագրման և պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2018թ.՝ 2,091,643 հազար ՀՀ դրամ):

10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Տարվա ընթացքում վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	618,159	546,085
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	210,762	4,477,131
Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**828,921**	**5,023,216**

2018 թվականին Հայկական դրամի 25-ամյակի կապակցությամբ Կենտրոնական բանկը թողարկել և շրջանառության մեջ է բաց թողել Հայաստանի Հանրապետության երրորդ շարքի թղթադրամներ՝ տպագրության տեխնոլոգիական նորարարությունների կիրառմամբ լուծելով դրամի պաշտպանվածության մի շարք կարևորագույն խնդիրներ: Թղթադրամների տեսակային կառուցվածքն օպտիմալացվել է նոր՝ 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամի ներդրմամբ: Երրորդ շարքի թղթադրամները ներկայացված են 1000, 2000, 5000, 10 000, 20 000 և 50 000 դրամ անվանական արժեքներով:

11. Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	8,292,421	8,149,397
Մաշվածություն և ամորտիզացիա	4,231,048	4,649,127
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	1,672,598	1,864,696
Անվտանգության և ապահովագրական ծախսեր	562,394	434,751
Վճարահաշվարկային համակարգի զարգացման և սպասարկման ծախսեր	467,193	482,285
Մասնագիտական ծառայություններ	136,632	188,075
Կրթություն, հետազոտություն և նոր ծրագրերի մշակում	112,644	742,417
Այլ	2,420,388	2,873,593
Ընդամենը այլ ծախսեր	**17,895,318**	**19,384,341**

2019թ. դեկտեմբերի 31-ին և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված ծախսերը ներկայացնում են Բանկի և իր դուստր կազմակերպությունների բաժանորդագրության վճարներ, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության, գրասենյակային և այլ ծախսեր:

2019թ. դեկտեմբերի 31-ին և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Նոստրո հաշիվներ	534,601,773	310,841,888
Ժամկետային ավանդներ	25,536,096	31,563,991
Տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժա	2,015	56,931
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	–	5,689,324
Արժեզրկման պահուստ	(147,896)	(85,277)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**559,991,988**	**348,066,857**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ երեք բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 458,250,623 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք բանկում, մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 253,141,892 հազար ՀՀ դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն մինչև 1 ամիս մնացորդային մարման ժամկետ և մինչև 2.06% տոկոսադրույք (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև 2.91% տոկոսադրույք):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցների 5,689,324 հազար ՀՀ դրամի մնացորդը իրենից ներկայացնում է ներդրումային կառավարման պայմանագրի շրջանակում Բանկի կողմից արտերկրյա արժեթղթերով գործարքների և ֆյուչերսային գործարքների ներքո հաշվանցումների համար պահպանվող մնացորդը:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,451,250 հազար ՀՀ դրամ արտարժութային ժամկետային ավանդներ Խմբի կողմից գրավադրված են եղել թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար (Ծնթգ. 24):

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով (շարունակություն)

Արժեզրկման պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված արտարժույթով միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**348,152,134**	**348,152,134**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	556,509,344	**556,509,344**
Մարված ակտիվներ	(344,521,594)	**(344,521,594)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**560,139,884**	**560,139,884**

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**85,277**	**85,277**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	72,815	**72,815**
Մարված ակտիվներ	(85,268)	**(85,268)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	75,072	**75,072**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**147,896**	**147,896**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված արտարժույթով միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**338,451,346**	**338,451,346**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	343,301,206	**343,301,206**
Մարված ակտիվներ	(333,600,418)	**(333,600,418)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**348,152,134**	**348,152,134**

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**102,692**	**102,692**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,730	**1,730**
Մարված ակտիվներ	(17,865)	**(17,865)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(1,280)	**(1,280)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**85,277**	**85,277**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	127,976,053	127,837,551
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	126,669,774	163,433,113
Հիփոթեքային վերաֆինանսավորում	90,373,958	76,566,659
Առևտրային բանկերում ավանդներ և ընթացիկ հաշիվներ	63,926,423	50,942,450
Ներդրումներ՝ ամորտիզացված արժեքով չափված	24,082,487	24,090,275
Այլ վարկեր	3,447,368	3,579,296
Արժեզրկման պահուստ	(2,593,195)	(2,801,183)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	**433,882,868**	**443,648,161**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկ):

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 6 տեղական բանկի հետ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տեղական բանկ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Կառավարության գանձապետական արժեթղթեր	116,749,671	151,182,668
Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր	5,354,434	12,126,785
Կորպորատիվ պարտատոմսեր	10,350,452	6,869,766
Ընդամենը	**132,454,557**	**170,179,219**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական առևտրային բանկերին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW բանկային խմբի, ԵՆԲ, ԱԶԲ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* Համաշխարհային բանկի և KfW-ի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է՝ Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առավել արդյունավետ և շահութաբեր դարձնելու նպատակով: Սա իրականացվում է գործընկեր բանկերում նոր վարկային գործիքակազմի /տեխնոլոգիաների/ ներդրման և բարձրակարգ վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: 2014թ. ընթացքում նոր վարկային գիծ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար: 2015թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԵՆԲ-ից՝ հիմնականում գյուղմշակման, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ՓՄՁ-ներին առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով փոխառություններ տրամադրելու նպատակով: 2017թ. ընթացքում ևս մեկ վարկ է ստացվել ԵՆԲ-ից «Հայաստանի գյուղատնտեսության և տուրիզմի ֆինանսավորում 2 վարկ ՓՄՁ-ներին և միջին կապիտալիզացիա ունեցող կազմակերպություններին» Ծրագրի շրջանակներում: Այս վարկի պայմանները հիմնականում նույնն են, ինչ առաջին փուլի պայմանները: Հիմնական տարբերությունը կլիմայական փոփոխությունների տարրի ներառումն է, որը պահանջում է ենթավարկառուներից ձեռնարկել որոշակի քայլեր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը բարելավելու համար: 2016թ. ընթացքում նոր վարկ է ստացվել «Էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետության վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական կազմակերպություններում, և միաժամանակ բավարարել էներգաարդյունավետության վարկերի պահանջարկը միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար: Ծրագրի նպատակն է՝ նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգիայի պահանջարկի և վնասակար գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:

- *Վերականգնվող էներգիայի զարգացում.* Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել էներգամատակարարման բարելավմանը և Հայաստանում մասնավոր հատվածի հետագա զարգացմանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար վերականգնվող էներգիայի աղբյուրների ծախսարդյունավետ օգտագործումն ապահովելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է աջակցել վերականգնվող էներգիայի օգտագործմանը, մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայաններին (ՓՀԷԿ)՝ վարկեր տրամադրելով անհատ ձեռնարկատերերին և մասնավոր ձեռնարկություններին:

- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում.* Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տնային տնտեսություններին հատկացվող վարկավորումը:

Ծրագրերի պայմանների համաձայն, Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, սահմանում է համապատասխան հայաստանյան բանկեր և ֆինանսական հաստատություններ, որոնցում տեղաբաշխում է միջոցներ՝ այդ գործընկերների հետ ստորագրված պայմանագրերի համաձայն: Բանկերը և ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական փոխառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 13 բանկերի (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13 տեղական բանկերի) և 9 այլ ֆինանսական կազմակերպությունների (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 այլ ֆինանսական կազմակերպությունների):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 10 տարի մարման ժամկետով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տարի):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 90,766,893 հազար ՀՀ դրամի գումարով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 76,750,175 հազար ՀՀ դրամ):

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 580,842 հազար ՀՀ դրամ արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը և 30,000 հազար ՀՀ դրամ արժեքով ժամկետային ավանդները տեղական արժույթով գրավադրվել են՝ երաշխավորելու Խմբի՝ Կառավարությունից ստացված վարկերի (Ծնթգ. 23) և թողարկված պարտատոմսերի (Ծնթգ. 24) ապահովվածությունը:

Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդները և ընթացիկ հաշիվները ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

Խմբի ղեկավարությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 24,082,487 հազար ՀՀ դրամ ներդրումները դասակարգել է որպես ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 24,090,275 հազար ՀՀ դրամ): Խմբի ղեկավարությունը կայացրել է այդ որոշումը՝ ելնելով այն հանգամանքից, որ տվյալ ներդրումների համար իրացվելի շուկա առկա չէ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խումբն ունի այդ ներդրումները տեսանելի ապագայում պահելու հնարավորություն և մտադրություն:

Այլ վարկերն ապահովված են 2,830,489 հազար ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,815,891 հազար ՀՀ դրամ) և 126,009 ՀՀ դրամ արժեքով շարժական գույքով և այլ ակտիվներով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 108,763 հազար ՀՀ դրամ):

Արժեզրկման պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված տեղական արժույթով միջոցների և ներդրումների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**446,449,344**	**446,449,344**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	217,104,057	**217,104,057**
Մարված ակտիվներ	(227,077,338)	**(227,077,338)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**436,476,063**	**436,476,063**

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,801,183**	**2,801,183**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	632,756	**632,756**
Մարված ակտիվներ	(222,275)	**(222,275)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(618,469)	**(618,469)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,593,195**	**2,593,195**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված տեղական արժույթով միջոցների և ներդրումների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**307,508,525**	**307,508,525**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	264,384,650	**264,384,650**
Մարված ակտիվներ	(125,443,831)	**(125,443,831)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**446,449,344**	**446,449,344**

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,678,727**	**2,678,727**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	819,297	**819,297**
Մարված ակտիվներ	(462,358)	**(462,358)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(234,483)	**(234,483)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,801,183**	**2,801,183**

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով		
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	763,710,331	614,675,994
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	–	78,054,256
Սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքներ	9,648,011	12,130,223
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով	**773,358,342**	**704,860,473**

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Պետական պարտատոմսեր	639,177,514	346,945,790
Պետական գործակալությունների պարտատոմսեր	24,001,326	35,843,569
Այլ արժեթղթեր	100,531,491	231,886,635
Ընդամենը	**763,710,331**	**614,675,994**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող գնանշված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են եվրոպական երկրների կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր և ԱՄՆ գանձապետական մուրհակներ, պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված արժեթղթեր:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Պետական պարտատոմսեր	–	15,447,463
Պետական գործակալությունների պարտատոմսեր	–	5,403,404
Այլ արժեթղթեր	–	57,203,389
Ընդամենը	**–**	**78,054,256**

14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Արտարժութային սվոպ պայմանագրեր սեփական կառավարման ներքո	–	29,911
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	–	13,938
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**–**	**43,849**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	79,455	–
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր սեփական կառավարման ներքո	1,645	54,741
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	–	42,299
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**81,100**	**97,040**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 572 կարճ ֆյուչերսային պայմանագիր՝ 78,912 հազար եվրո կամ 43,689,507 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ համաձայն ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի տարվա վերջի պաշտոնական փոխարժեքի, որոնք եղել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի, տոկոսադրույքի ռիսկը կարգավորելու նպատակով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 10 երկար ֆյուչերսային պայմանագիր՝ 10,000 հազար եվրո կամ 5,372,600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ համաձայն ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի տարվա վերջի պաշտոնական փոխարժեքի, որոնք եղել են սեփական կառավարման ներքո (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 97 կարճ ֆյուչերսային պայմանագիր՝ 54,600 հազար ԱՄՆ դոլար կամ 26,412,750 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով և 8 կարճ ֆյուչերսային պայմանագիր՝ 800 հազար եվրո կամ 442,920 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով):

	Անվանական արժեք		*Իրական արժեք*			
			2019թ.		*2018թ.*	
Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*	*Ակտիվ*	*Պարտավորություն*	*Ակտիվ*	*Պարտավորություն*
Արտարժութային ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	9,098,961	3,173,020	–	79,455	13,938	–
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր սեփական կառավարման ներքո	5,372,600	26,855,670	–	1,645	–	54,741
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	–	43,689,507	–	–	–	42,299
Արտարժութային սվոպ պայմանագրեր սեփական կառավարման ներքո	–	5,336,320	–	–	29,911	–
Ընդամենը	**14,471,561**	**79,054,517**	**–**	**81,100**	**43,849**	**97,040**

15. Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով		
Բաժնային ներդրումներ– *չգնանշվող*		
Արտերկրյա արժեթղթեր	1,937,372	1,914,789
SWIFT	3,211	3,211
Ընդամենը բաժնային ներդրումներ	**1,940,583**	**1,918,000**
Պարտքային գործիքներ		
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	761,584	1,067,864
Ընդամենը պարտքային գործիքներ	**761,584**	**1,067,864**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով	**2,702,167**	**2,985,864**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով		
Պարտքային գործիքներ		
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	13,189,425	13,707,676
ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 25)	73,810,843	73,810,843
	87,000,268	**87,518,519**
Ընդամենը պարտքային գործիքներ		
Բաժնային ներդրումներ		
Այլ ներդրումներ	871,874	762,005
Ընդամենը բաժնային ներդրումներ	**871,874**	**762,005**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով	**87,872,142**	**88,280,524**
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**90,574,309**	**91,266,388**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային ներդրումներ իրենցից ներկայացնում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով՝ դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ Կառավարության պետական արժեկտրոնային արժեթղթեր: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով պարտքային արժեթղթերը, դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ արտարժույթով, թողարկված են մեկ տեղական բանկի կողմից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որը օգտագործում է ընթացիկ շուկայական տոկոսադրույքները՝ այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության կողմից թողարկված անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակի արժեքը 73,810,843 հազար ՀՀ դրամ է (2018թ.՝ 73,810,843 հազար ՀՀ դրամ): Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին:

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով - ՀՀ պետական արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,707,676**	**13,707,676**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	742,495	**742,495**
Մարված ակտիվներ	(1,260,746)	**(1,260,746)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,189,425**	**13,189,425**

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով - ՀՀ պետական արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**60,164**	**60,164**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,940	**1,940**
Մարված ակտիվներ	(1,964)	**(1,964)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(25,820)	**(25,820)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,320**	**34,320**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2018թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով - ՀՀ պետական արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**17,521,378**	**17,521,378**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	456,861	**456,861**
Մարված ակտիվներ	(4,270,563)	**(4,270,563)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,707,676**	**13,707,676**

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ տեղական արժույթով - ՀՀ պետական արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**66,446**	**66,446**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,122	**2,122**
Մարված ակտիվներ	(2,773)	**(2,773)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(5,631)	**(5,631)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**60,164**	**60,164**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արտարժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,067,864**	**1,067,864**
Մարված ակտիվներ	(306,280)	**(306,280)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**761,584**	**761,584**

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**11,999**	**11,999**
Մարված ակտիվներ	(3,018)	**(3,018)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(2,008)	**(2,008)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,973**	**6,973**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արտարժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2018թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,067,864	**1,067,864**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,067,864**	**1,067,864**

Հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ արտարժույթով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,999	**11,999**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,999**	**11,999**

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	85,438,192	86,655,352
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ	2,953,756	2,887,490
Հաշվեգրված տոկոսներ	6,282	5,655
Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**88,398,230**	**89,548,497**

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ի անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից, և որոշվում են ԱՄՀ-ի կառավարիչների խորհրդի կողմից: Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ-ի ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ-ի հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի 75%-ի համար վճարումը կատարվել է Բանկի կողմից ԱՄՀ-ին՝ թողարկված անտոկոս հասարակ մուրհակների տեսքով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 128,800 հազար ՀՓԻ կամ 85,438,192 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2018թ.՝ 128,800 հազար ՀՓԻ կամ 86,655,352 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ (շարունակություն)

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ (շարունակություն)

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ին և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՓԻ հաշվում շարժերը.

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
ՀՓԻ հաշվի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**2,887,490**	**3,491,637**
ՀՓԻ-ների գնում	37,649,890	34,626,810
Վարկերի հետվճարում ԱՄՀ-ին.		
Բանկի անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT))	(4,182,497)	(2,867,948)
Extended Fund Facility (EFF)	(17,289,350)	(15,701,960)
Կառավարության անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT))	(13,514,842)	(13,831,234)
Վարկերին վերաբերող միջնորդավճարների վճարում	(76,712)	–
Այլ վճարներ	(913)	(1,011)
ԱՄՀ միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարների վճարում.		
Բանկի անունից	(2,003,820)	(2,201,503)
ՀՓԻ տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարի վճարում	(611,525)	(526,439)
ՀՓԻ միջոցներից եկամուտ	23,945	19,568
Փոխարժեքային տարբերություններ	72,090	(120,430)
ՀՓԻ հաշվի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,953,756**	**2,887,490**

Վերը ներկայացված աղյուսակում ներառված գործարքների գումարները ՀՀ դրամի համարժեքով են՝ հիմք ընդունելով գործարքների տեղի ունենալու ամսաթվի դրությամբ ՀՓԻ/դրամ փոխարժեքը:

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Արժեթղթերի հաշիվ	159,285,304	159,285,304
ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշգրտման հաշիվ	(823,199)	(6,611,507)
Թիվ 1 հաշիվ	9,436,432	35,173,286
Թիվ 2 հաշիվ	2,590	2,703
ՀՓԻ տեղաբաշխում	58,366,397	59,197,890
ECF վարկ՝	14,341,411	18,797,753
Հաշվեկշռային արժեք	*13,795,377*	*17,928,595*
Հետաձգված եկամուտ	*546,034*	*869,158*
Հաշվեգրված տոկոսներ	339,968	477,671
Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**240,948,903**	**266,323,100**

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվը ներառում են Բանկի պարտավորությունները EFF վարկի և անդամակցության գումարների գծով: Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն օգտագործվում է ԱՄՀ-ի կողմից վարչական նպատակների համար:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են Խմբի թողարկած հասարակ մուրհակով՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի) չափով:

Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության՝ Բանկի պարտավորությունը ԱՄՀ-ի հանդեպ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է պարտավորություններն ըստ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) ծրագրի և «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ (շարունակություն)

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ (շարունակություն)

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի հետ երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: ECF-ը ստեղծվել է նոր հաստատված «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» ծրագրի ներքո և մաս է կազմում առավել լայն շրջանակի բարեփոխումների, որոնք ուղղված են ԱՄՀ-ի ֆինանսական աջակցությունն առավել ճկուն դարձնելու համար և որոնք առավել հարմարեցված են ցածր եկամուտ ունեցող երկրների բազմազան կարիքներին, ներառյալ ճգնաժամային ժամանակաշրջաններում: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF-ն անտոկոս է (2018թ.՝ 0%): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2020թ. հունիսից մինչև 2023թ. հունիս (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2019թ. հունիսից մինչև 2023թ. հունիս):

EFF (Extended Fund Facility) վարկը տրամադրվում է երկրներին միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2020թ. մարտից մինչև 2027թ. հունիս (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր՝ 2019թ. հունիսից մինչև 2027թ. դեկտեմբեր):

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

17. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	*Հող և շենքեր*	*Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ*	*Փոխադրամիջոցներ*	*Անավարտ շինարարություն*	*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	**74,768,836**	**22,757,194**	**649,251**	**1,882,115**	**–**	**100,057,396**
Ավելացումներ	8,703	728,828	33,700	29,146	–	**800,377**
Օտարումներ	(1,030,936)	(424,987)	–	–	–	**(1,455,923)**
Տեղափոխում	1,759,679	138,733	–	(1,898,412)	–	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**75,506,282**	**23,199,768**	**682,951**	**12,849**	**–**	**99,401,850**
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (Ծնթգ. 2)	–	–	–	–	482,988	**482,988**
Ավելացումներ	–	710,342	33,110	209,466	25,346	**978,264**
Օտարումներ	(888,809)	(175,310)	(88,674)	–	(2,640)	**(1,155,433)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**74,617,473**	**23,734,800**	**627,387**	**222,315**	**505,694**	**99,707,669**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	**13,879,646**	**12,619,217**	**461,753**	**–**	**–**	**26,960,616**
Տարվա մաշվածության ծախս	2,712,586	1,400,991	53,818	–	–	**4,167,395**
Օտարումներ	(107,904)	(359,176)	–	–	–	**(467,080)**
Տեղափոխում	(35,821)	35,821	–	–	–	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**16,448,507**	**13,696,853**	**515,571**	**–**	**–**	**30,660,931**
Տարվա մաշվածության ծախս	2,419,263	1,220,232	44,250	–	102,501	**3,786,246**
Օտարումներ	(159,832)	(172,230)	(84,741)	–	(2,640)	**(419,443)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**18,707,938**	**14,744,855**	**475,080**	**–**	**99,861**	**34,027,734**
Հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ին	**55,909,535**	**8,989,945**	**152,307**	**222,315**	**405,833**	**65,679,935**
2018թ. դեկտեմբերի 31-ին	**59,057,775**	**9,502,915**	**167,380**	**12,849**	**–**	**68,740,919**

Անավարտ շինարարությունը առավելապես վերաբերում է շենքերի շինարարությանը: Ավարտուն լինելուն պես այդ ակտիվները կվերադասակարգվեն՝ որպես շենքեր:

18. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	*Համակարգչային ծրագրեր*	*Անավարտ պայմանագրեր*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	**4,135,615**	**991,453**	**5,127,068**
Ավելացումներ	146,661	89,257	**235,918**
Օտարումներ	(11,075)	**–**	**(11,075)**
Տեղափոխում	7,035	(7,035)	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**4,278,236**	**1,073,675**	**5,351,911**
Ավելացումներ	694,758	35,000	**729,758**
Օտարումներ	(91,382)	**–**	**(91,382)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**4,881,612**	**1,108,675**	**5,990,287**
Ամորտիզացիա			
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	**2,089,958**	**–**	**2,089,958**
Տարվա ամորտիզացիոն ծախս	481,732	**–**	**481,732**
Օտարումներ	(10,502)	**–**	**(10,502)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**2,561,188**	**–**	**2,561,188**
Տարվա ամորտիզացիոն ծախս	444,802		**444,802**
Օտարումներ	(36,447)	**–**	**(36,447)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**2,969,543**	**–**	**2,969,543**
Հաշվեկշռային արժեք			
2019թ. դեկտեմբերի 31-ին	**1,912,069**	**1,108,675**	**3,020,744**
2018թ. դեկտեմբերի 31-ին	**1,717,048**	**1,073,675**	**2,790,723**

19. Այլ ակտիվներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Դրամագիտական արժեքներ	7,596,449	7,872,280
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	3,108,299	5,129,659
Այլ	1,545,359	1,826,495
Արժեզրկման պահուստ	(10,998)	(33,288)
Ընդամենը այլ ակտիվներ	**12,239,109**	**14,795,146**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր» հոդվածում ներառված են 800,217 հազար ՀՀ դրամ ֆինանսական ակտիվներ (2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,625,937 հազար ՀՀ դրամ):

Ֆինանսական ակտիվների ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Այլ ֆինանսական ակտիվներ	***Փուլ 1***	***Ընդամենը***
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,625,937**	**1,625,937**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	110,843	**110,843**
Մարված ակտիվներ	(936,563)	**(936,563)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**800,217**	**800,217**

Հազար ՀՀ դրամ

Այլ ֆինանսական ակտիվներ	***Փուլ 1***	***Ընդամենը***
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**33,288**	**33,288**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,047	**1,047**
Մարված ակտիվներ	(18,779)	**(18,779)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(4,558)	**(4,558)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,998**	**10,998**

19. Այլ ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Այլ ֆինանսական ակտիվների ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Այլ ֆինանսական ակտիվներ	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,418,111**	**2,418,111**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	49,594	**49,594**
Մարված ակտիվներ	(841,768)	**(841,768)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,625,937**	**1,625,937**

Հազար ՀՀ դրամ

Այլ ֆինանսական ակտիվներ	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՊԿ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**50,194**	**50,194**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	165	**165**
Մարված ակտիվներ	(16,960)	**(16,960)**
ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	(111)	**(111)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**33,288**	**33,288**

20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	373,816,783	244,798,174
Կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ	1,475,390	1,745,105
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	989,282	772,384
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**376,281,455**	**247,315,663**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	343,857,702	364,466,344
Կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդ	284,157	49,870
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	975,287	674,295
Այլ ավանդներ	2,002,678	2,002,678
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**347,119,824**	**367,193,187**
Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**723,401,279**	**614,508,850**

Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3 բանկի մնացորդ գերազանցել է Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 390,862,187 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3 բանկ, 299,682,463 հազար ՀՀ դրամ):

21. Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Վարկեր KfW-ից	59,582,037	63,695,678
Վարկեր ԵՆԲ-ից	51,891,908	54,856,643
Վարկեր Համաշխարհային բանկից	20,267,749	21,285,991
Վարկեր ԱԶԲ -ից	6,590,621	6,684,513
Այլ	4,409,806	5,187,927
Ընդամենը այլ փոխառություններ	**142,742,121**	**151,710,752**

21. Այլ փոխառություններ (շարունակություն)

KfW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2020թ-ից մինչև 2048թ. ընկած ժամանակաշրջանն է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2019թ-ից մինչև 2048թ.): Վարկերի մարումը KfW-ին երաշխավորված է Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2020թ-ից 2035թ. ընկած ժամանակաշրջանն է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2019թ-ից 2035թ.):

ԱՁԲ-ի կողմից տրամադրվել է վարկ՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով (Ծնթգ. 12): Վարկի մարման ժամկետայնությունը 2020թ-ից մինչև 2044թ. ընկած ժամանակաշրջանն է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2019թ-ից 2044թ.):

Բանկին տրամադրվել են վարկեր Եվրոպական ներդրումային բանկի կողմից, որի նպատակը գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2020թ-ից մինչև 2030թ. ընկած ժամանակաշրջանն է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2019թ-ից 2030թ.):

Խմբի դուստր կազմակերպություններից մեկը փոխառություն է ստացել Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից՝ ներառված «Այլ» դասում: Վարկի մարման ժամկետայնությունը 2020թ-ից մինչև 2025թ. ընկած ժամանակահատվածն է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2019թ-ից մինչև 2025թ.): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային ծրագրի գծով մնացորդը կազմում է 4,409,806 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,187,927 հազար ՀՀ դրամ):

22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Այլ պարտավորություններ տեղական արժույթով		
Կրեդիտորական պարտքեր	2,133,087	2,386,248
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	1,251,847	1,137,386
Այլ պարտավորություններ	1,023,623	979,786
Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով	**4,408,557**	**4,503,420**

23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Պարտավորություններ արտարժույթով		
Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,248,593	5,822,025
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**1,248,593**	**5,822,025**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Ժամկետային ավանդներ	285,000,475	135,487,725
Կառավարության ընթացիկ հաշիվներ	41,045,292	49,117,388
Կառավարությունից ստացված վարկեր	–	321,865
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**326,045,767**	**184,926,978**
Ընդամենը պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	**327,294,360**	**190,749,003**

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև մեկ տարի է, և տոկոսադրույքը կազմում է 5.25%-ից մինչև 5.93% (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.59%-ից մինչև 5.91%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված՝ Կառավարությունից ստացված վարկերում ներառված են 2009թ. հունիսի 13-ին ստորագրված ընդհանուր համաձայնագրի հիման վրա՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում Խմբի դուստր կազմակերպություններից մեկի կողմից Կառավարությունից ստացված վարկերը: Վարկերի անվանական տոկոսադրույքը տարեկան 7% է, մարման ժամկետը՝ մինչև 2019թ. հունիսը:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված 580,842 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը հանդիսանում են Կառավարությունից ստացված վարկի դիմաց գրավ:

24. Թողարկված պարտատոմսեր

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր կազմակերպությունն ուներ թողարկած 6,500,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 3 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,710,600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 3-5 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 7.36%-ից 8.13% (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8.1%-ից մինչև 11.8%): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 6,626,428 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,838,688 հազար ՀՀ դրամ): 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 30,000 հազար ՀՀ դրամ արժեքով տեղական արժույթով ժամկետային ավանդներ և 1,451,250 հազար ՀՀ դրամ արժեքով արտարժույթով ժամկետային ավանդներ գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար:

25. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալը ներառում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո:

Կապիտալի չափը սահմանվում է Օրենքով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունն ու իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակներն ու քաղաքականությունը սահմանված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Կառավարության կողմից թողարկված մուրհակը իրենից ներկայացնում է ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով Կառավարության ներդրումը, որը կատարվում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության կողմից թողարկված ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի հաշվեկշռային արժեքը կազմում է 73,810,843 հազար ՀՀ դրամ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը, որը կազմում է 2,422,299 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն) (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,838,897 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)), ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով վերաչափվող իրական արժեքով ֆինանսական ակտիվների իրական արժեքի և դրանց սկզբնական ճանաչման իրական արժեքի միջև տարբերությունը:

26. Պայմանական պարտավորություններ

Կապիտալ բնույթի պայմանական պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Խմբի համակարգչային ծրագրի մշակմանը, կազմում են 488,542 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 338,420 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (Ծնթգ. 11):

Հազար ՀՀ դրամ	***2019թ.***	***2018թ.***
Ղեկավար անձնակազմ, ներառյալ Խորհրդի անդամները	319,776	329,949
Ընդամենը	**319,776**	**329,949**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 173,288 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 183,833 հազար ՀՀ դրամ): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների կողմից Բանկում տեղաբաշխված ավանդների մնացորդը կազմել է 194,873 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 261,940 հազար ՀՀ դրամ): 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով ճանաչել է տոկոսային ծախս 25,540 հազար ՀՀ դրամ և տոկոսային եկամուտ 5,790 հազար ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 29,216 հազար ՀՀ դրամ և 4,513 հազար ՀՀ դրամ): Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ վարկեր չեն կարող տրամադրվել Բանկի այն աշխատակիցներին, որոնք ունեն Բանկում տեղաբաշխված ավանդներ:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները.

	31 դեկտեմբերի 2019թ.		***31 դեկտեմբերի 2018թ.***	
Հազար ՀՀ դրամ	***Մնացորդ***	***Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք***	***Մնացորդ***	***Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք***
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Ակտիվներ				
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր՝ դասակարգված որպես իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (Ծնթգ. 15)	13,189,425	11.4%	13,707,676	11.0%
	13,189,425		**13,707,676**	
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 15)				
Մնացորդը հունվարի 1-ին	**73,810,843**		**73,810,843**	
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**73,810,843**		**73,810,843**	
Ակտիվներ դեկտեմբերի 31-ին	**87,000,268**		**87,518,519**	
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (տեղական արժույթով) (Ծնթգ. 23)	326,045,767	4.9%	184,926,978	4.5%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (արտարժույթով) (Ծնթգ. 23)	1,248,593		5,822,025	
Պարտավորություններ դեկտեմբերի 31-ին	**327,294,360**		**190,749,003**	

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ (շարունակություն)

Տեղական արժույթով Կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված ավանդների շարժը.

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Մնացորդը հունվարի 1-ին	**135,487,725**	**115,325,158**
Ավելացում	1,033,000,000	883,000,000
Տոկոսային ծախս	13,324,977	7,282,632
Մարում (ներառյալ՝տոկոսի վճարումը)	(896,812,227)	(870,120,065)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**285,000,475**	**135,487,725**

Տեղական արժույթով Կառավարությունից ստացված վարկերի շարժը.

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Մնացորդը հունվարի 1-ին	**321,865**	**965,468**
Տոկոսային ծախս	9,698	46,067
Մարում (ներառյալ՝տոկոսի վճարումը)	(331,563)	(689,670)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**–**	**321,865**

Կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ Կառավարության արժեթղթերից	1,317,084	1,458,881
Տոկոսային ծախս	(13,737,026)	(8,049,811)
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	(59,234)	68,796
Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	(453,848)	552,850

2007թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին, որոնց կառավարման մարմիններում Բանկն ունի ներկայացուցիչներ.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*		*31 դեկտեմբերի 2018թ.*	
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*	*Մնացորդ*	*Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք*
Պարտավորություններ				
Ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդ (տեղական արժույթով, Ծնթգ. 20)	284,157	5.5%	49,870	5.6%
Ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, Ծնթգ. 20)	1,475,390	0.0%	1,745,105	0.0%
Ընդամենը	**1,759,547**		**1,794,975**	

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը այլ կապակցված կողմերի հետ հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*	*2018թ.*
Մնացորդը հունվարի 1-ին	**1,794,975**	**3,060,662**
Ավելացում	119,887,747	241,526,352
Տոկոսային ծախս	28,256	54,555
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(119,951,431)	(242,846,594)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**1,759,547**	**1,794,975**

28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

Հազար ՀՀ դրամ	*31 դեկտեմբերի 2019թ.*	*31 դեկտեմբերի 2018թ.*
Կանխիկ դրամ	39,603,848	42,238,172
Նոստրո հաշիվներ (Ծնթգ. 12)	534,601,773	310,841,888
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ (Ծնթգ. 16)	2,953,756	2,887,490
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**577,159,377**	**355,967,550**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքները դասակարգելիս Ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համադրությամբ:

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

	31 դեկտեմբերի 2019թ.				*31 դեկտեմբերի 2018թ.*			
Հազար ՀՀ դրամ	*Մակար-դակ 1*	*Մակար-դակ 2*	*Մակար-դակ 3*	*Ընդամենը*	*Մակար-դակ 1*	*Մակար-դակ 2*	*Մակար-դակ 3*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ								
Ֆինանսական ակտիվներ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ								
- Պետական պարտատոմսեր (Ծնթգ.13)	639,177,514	–	–	**639,177,514**	362,393,253	–	–	**362,393,253**
- Պետական գործակալությունների պարտատոմսեր (Ծնթգ.13)	24,001,326	–	–	**24,001,326**	41,246,973	–	–	**41,246,973**
- Այլ արժեթղթեր (Ծնթգ.13)	100,531,491	–	–	**100,531,491**	289,090,024	–	–	**289,090,024**
-Փողի շուկայի գործիքներ (Ծնթգ.13)	9,648,011	–	–	**9,648,011**	12,130,223	–	–	**12,130,223**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	–	–	–	–	–	43,849	**43,849**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ								
- Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	–	1,937,372	–	**1,937,372**	–	1,914,789	–	**1,914,789**
- ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	–	13,189,425	–	**13,189,425**	–	13,707,676	–	**13,707,676**
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	–	73,810,843	–	**73,810,843**	–	73,810,843	–	**73,810,843**
- Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	–	761,584	–	**761,584**	–	1,067,864	–	**1,067,864**
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**773,358,342**	**89,699,224**	–	**863,057,566**	**704,860,473**	**90,501,172**	**43,849**	**795,405,494**

	31 դեկտեմբերի 2019թ.			*31 դեկտեմբերի 2018թ.*		
Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 1*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*	*Մակարդակ 1*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր սեփական կառավարման ներքո (Ծնթգ. 14)	1,645	–	**1,645**	54,741	–	**54,741**
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ (Ծնթգ. 14)	–	79,455	**79,455**	–	–	–
Արտարժութային ֆյուչերս պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո (Ծնթգ. 14)	–	–	–	42,299	–	**42,299**
Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**1,645**	**79,455**	**81,100**	**97,040**	–	**97,040**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	1,937,372	ԶՂՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	761,584	ԶՂՄՀ	Գնանշված գներ
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	13,189,425	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	73,810,843	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**89,699,224**		

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր (Ծնթգ.15)	1,914,789	ԶՂՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով (Ծնթգ.15)	1,067,864		Գնանշված գներ
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր (Ծնթգ.15)	13,707,676	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ.15)	73,810,843	ԶՂՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**90,501,172**		

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*	*Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)*	*Ողջամիտ փոփոխություն*	*Իրական արժեքի գնահատման զգայունություն*
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,455	ԶՊՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 5.60%	1) +100/-100 բ.կ.	1) (6,796)/6,866
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 3.17%	2) +100/-100 բ.կ.	2) 6,973/(7,047)
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 0.97%	3) +15/-15 բ.կ.	3) 6.8/(6.8)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 479.70	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 537.26	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար –ԱՄՆ դոլար	6) 18,856 հազար ԱՄՆ դոլար	6) ± 10%	6) (7,423)/7,423
			7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար-եվրո	7) 100 հազար եվրո	7) ± 10%	7) (81)/81

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	*Իրական արժեք*	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*	*Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)*	*Ողջամիտ փոփոխություն*	*Իրական արժեքի գնահատման զգայունություն*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ						
Ֆինանսական ակտիվներ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	13,938	ԶՊՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 5.99%	1) +100/-80 բ.կ.	1) (2,532)/2,044
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 4.46%	2) +50/-15 բ.կ.	2) 1,259/(379)
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 1.59%	3) +20/-1 բ.կ.	3) 9/(0.4)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 483.75	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 553.65	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար –ԱՄՆ դոլար	6) 6,445 հազար ԱՄՆ դոլար	6) ± 10%	6) (1,414)/1,414
			7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար-եվրո	7)100 հազար եվրո	7) ± 10%	7) (20)/20

Ներկայացված աղյուսակները բացահայտում են ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այն դեպքում, երբ խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու համար ոչ դիտարկելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը հանգեցնում է իրական արժեքի էական փոփոխության: Ներկայացված աղյուսակում բացահայտված իրական արժեքի գնահատման զգայունությունը ցույց է տալիս գնահատման արդյունքի փոփոխության ուղղությունը համապատասխան ելակետային փոփոխականների ավելացման կամ նվազեցման դեպքում:

(բ) Մակարդակ 3-ի իրական արժեքի պարբերական գնահատումների գործընթացներ

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում իրական արժեքի գնահատումները պարբերաբար դիտարկվում են Բանկի հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչությունների կողմից՝ որոշում կայացնելով գնահատման մեթոդի ելակետային տվյալների վերլուծության և օգտագործվող գնահատման մեթոդի համապատասխանության վերաբերյալ: Մակարդակ 3-ում գործիքները գնահատվում են գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի զուտ բերված արժեքով՝ օգտագործելով յուրաքանչյուր ֆինանսական գործիքի առանձնահատկությունների հիման վրա որոշված զեղչման դրույքները: Անհրաժեշտության դեպքում Խմբի կողմից կիրառվում է հետադարձ թեստավորում:

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող ակտիվների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

	31 դեկտեմբերի 2019թ.			*31 դեկտեմբերի 2018թ.*		
Հազար ՀՀ դրամ	*Մակար-դակ 2*	*Մակար-դակ 3*	*Հաշվեկշռա-յին արժեք*	*Մակար-դակ 2*	*Մակար-դակ 3*	*Հաշվեկշռա-յին արժեք*
Ֆինանսական ակտիվներ						
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով						
- Նոստրո հաշիվներ	534,601,773	–	534,601,093	310,841,888	–	310,841,261
- Ժամկետային ավանդներ	25,490,105	–	25,388,880	31,604,817	–	31,479,341
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	–	–	–	5,689,324	–	5,689,324
-Տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժա	2,015	–	2,015	56,931	–	56,931
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով						
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	126,669,774	–	126,669,774	163,433,113	–	163,433,113
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	126,172,483	–	125,805,219	126,846,911	–	125,409,306
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	91,827,494	–	90,352,136	73,037,990	–	76,542,692
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	63,899,322	–	63,580,371	50,778,773	–	50,708,941
- Այլ վարկեր և ներդրումներ	3,277,650	22,882,147	27,475,368	3,374,976	21,550,404	27,554,109
Ընդամենը	**971,940,616**	**22,882,147**	**993,874,856**	**765,664,723**	**21,550,404**	**791,715,018**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում (շարունակություն)

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական և այլ հաստատություններում արտերկրյա և տեղական արժույթով հաշիվների և ավանդների, ԱՄՀ-ին վճարվելիք գումարների և այլ փոխառու միջոցների հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրանց իրական արժեքին: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Ստորև ներկայացված է իրական արժեքով չգնահատվող պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

	31 դեկտեմբերի 2019թ.		*31 դեկտեմբերի 2018թ.*	
Հազար ՀՀ դրամ	***Մակարդակ 2***	***Հաշվեկշռային արժեք***	***Մակարդակ 2***	***Հաշվեկշռային արժեք***
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ				
Պարտավորություններ արտարժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,248,593	**1,248,593**	5,822,025	**5,822,025**
Պարտավորություններ տեղական արժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	41,045,292	**41,045,292**	49,117,388	**49,117,388**
- Ժամկետային ավանդներ	285,098,705	**285,000,475**	135,463,400	**135,487,725**
- Կառավարությունից ստացված վարկեր	-	**-**	321,865	**321,865**
- Թողարկված պարտատոմսեր	6,756,066	**6,626,428**	8,006,693	**7,838,688**
Ընդամենը	**334,148,656**	**333,920,788**	**198,731,371**	**198,587,691**

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում և մակարդակ 3-ում իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մեթոդը՝ կիրառելով համանման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքները:

30. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման, մոտեցումների, մոնիթորինգի և հաշվետվողականության մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ պատասխանատու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են Խմբի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Խորհուրդը վերջնական պատասխանատու է ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդը

Խորհուրդը հաշվետու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ միջազգային պահուստները Բանկի պահանջներն են ոչ ռեզիդենտների նկատմամբ՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված ներդրումային ծրագրի շրջանակներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

Խումբն ունի որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշերի ընտրության իրավասությունը պատվիրակվել է Բանկի ներդրումային հանձնաժողովին: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշերի և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

Կառավարում և վերահսկողություն

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական շուկաների դեպարտամենտը: Ֆինանսական գործառնությունների վարչությունը իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման համար, աջակցում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխմանը և ուղենիշների մշակմանը սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալները: Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ռիսկերի կառավարման վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակ Կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման սկզբունքով, ապահովելով եկամտաբերության մաքսիմալացում: Այս նպատակով Բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշերի նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար Բանկի Խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշերը ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման կամ վարկային որակի վատացման դեպքում: Խումբն իրականացնում է պարտքային ռիսկի վերահսկում և կառավարում՝ գործընկերոջ համապատասխանելիության և ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկ (շարունակություն)

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշեր պետական, պետական գործակալությունների, այլ պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և վերազգային կազմակերպությունների թողարկած արժեթղթերի համար: Այդ վարկանիշերը չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Պարտքային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա թույլ է տալիս գնահատել ընկերության անվճարունակության հավանականությունը: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող վարկանիշերի բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և պարտքային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Պարտքային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Պարտքային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի (ներառյալ՝ ածանցյալ գործիքների) պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը, նախքան գլխավոր հաշվանցման և գրավադրման պայմանագրերի միջոցով ռիսկի նվազեցման, լավագույնս ներկայացված է դրանց հաշվեկշռային արժեքով:

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, հաշվեկշռային արժեքները ցույց են տալիս ընթացիկ, բայց ոչ առավելագույն պարտքային ռիսկին ենթարկվածությունը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի՝ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության մանրամասների համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ծանոթագրությունները:

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի

Խմբի ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային ներդրումների, դասակարգվում են ըստ Խմբի գործընկերներին Fitch IBCA, Moody's և Standard & Poor's ռեյտինգային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ Moody's վարկանիշային գործակալության կոդերի՝ օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համապատասխանության աղյուսակը: AAA վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի ֆինանսական հաստատությունների, ինչպիսին է Միջազգային հաշվարկների բանկը (BIS), նույնականացման համար:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Վարկային վարկանիշ	31 դեկտեմբերի 2019թ. Գումար	31 դեկտեմբերի 2019թ. %-ը ֆինանսական ակտիվներում	31 դեկտեմբերի 2018թ. Գումար	31 դեկտեմբերի 2018թ. %-ը ֆինանսական ակտիվներում
Ֆինանսական ակտիվներ՝ ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով					
- Նոստրո հաշիվներ	P-1	532,987,070	95.2	309,503,541	89.0
	P-3	917,020	0.2	745,740	0.2
	NP	479,581	0.1	9,997	0.0
	Վարկանիշ առկա չէ	218,102	0.0	582,610	0.1
- ժամկետային ավանդներ	P-1	16,802,086	3.0	26,713,063	7.6
	Վարկանիշ առկա չէ	5,291,040	0.9	2,422,901	0.7
	NP	3,442,970	0.6	2,428,027	0.7
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և տոկոսադրույքի ֆյուչերսի պարտադիր մարժա	P-1	2,015	0.0	5,746,255	1.7
Արժեզրկման պահուստ		(147,896)		(85,277)	
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**559,991,988**	**100.0**	**348,066,857**	**100.0**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ					
- Պետական պարտատոմսեր	Aaa	554,666,536	71.7	339,271,806	48.1
	Aa1-Aa3	84,510,978	11.0	23,121,447	3.3
- Պետական գործակալությունների պարտատոմսեր և այլ արժեթղթեր	Aaa	24,001,326	3.1	23,291,590	3.3
	Aa1-Aa3	–	0.0	17,955,383	2.5
- Այլ արժեթղթեր	Aaa	92,376,738	11.9	244,997,616	34.8
	Aa1-Aa3	8,154,753	1.1	43,462,831	6.2
	Aa1	–	0.0	629,577	0.1
- Փողի շուկայի գործիքներ	Վարկանիշ առկա չէ	9,648,011	1.2	12,130,223	1.7
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		**773,358,342**	**100.0**	**704,860,473**	**100.0**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, բացառությամբ բաժնային ներդրումների					
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba3	13,189,425	15.0	–	0.0
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	B1	–	0.0	13,707,676	15.5
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Ba3	73,810,843	84.1	–	0.0
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	B1	–	0.0	73,810,843	83.3
- Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	Վարկանիշ առկա չէ	761,584	0.9	1,067,864	1.2
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ, բացառությամբ բաժնային ներդրումների		**87,761,852**	**100.0**	**88,586,383**	**100.0**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված ընթացիկ հաշիվներն ու ժամկետային ավանդները կազմել են համապատասխանաբար 207,768 հազար ՀՀ դրամ և 5,291,040 հազար ՀՀ դրամ գումարի չափով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 166,690 հազար ՀՀ դրամ և 2,422,901 հազար ՀՀ դրամ), հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից տեղական առևտրային բանկերում ընթացիկ հաշիվներ և ներդրված ավանդներ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված փողի շուկայի գործիքները 9,648,011 հազար ՀՀ դրամ արժեքով հանդիսանում են Միջազգային հաշվարկների բանկի կողմից թողարկված արժեթղթեր, և համարվում է, որ ունեն ցածր պարտքային ռիսկ (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 12,130,223 ՀՀ դրամ):

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի (շարունակություն)

		31 դեկտեմբերի 2019թ.		*31 դեկտեմբերի 2018թ.*	
Հազար ՀՀ դրամ	*Վարկային վարկանիշ*	*Գումար*	*%-ը ֆինանսական ակտիվներում*	*Գումար*	*%-ը ֆինանսական ակտիվներում*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով					
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	6,122,724 121,853,329	4.8 95.2	5,680,274 122,157,277	4.4 95.6
Ընդամենը		**127,976,053**	**100.0**	**127,837,551**	**100.0**
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	4,349,372 86,024,586	4.8 95.2	3,807,115 72,759,544	5.0 95.0
Ընդամենը		**90,373,958**	**100.0**	**76,566,659**	**100.0**
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	7,457,060 56,469,363	11.7 88.3	12,950,261 37,992,189	25.4 74.6
Ընդամենը		**63,926,423**	**100.0**	**50,942,450**	**100.0**
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	126,669,774	100.0	163,433,113	100.0
Ընդամենը		**126,669,774**	**100.0**	**163,433,113**	**100.0**
- Ներդրումներ՝ դասակարգված որպես ամորտիզացված արժեքով չափվող	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	2,549,404 21,533,083	10.6 89.4	583,173 23,507,102	2.4 97.6
Ընդամենը		**24,082,487**	**100.0**	**24,090,275**	**100.0**
- Այլ վարկեր		3,447,368	100.0	3,579,296	100.0
Ընդամենը		**3,447,368**	**100.0**	**3,579,296**	**100.0**
Արժեզրկման պահուստ		**(2,593,195)**		**(2,801,183)**	
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		**433,882,868**	**–**	**443,648,161**	**–**

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերակատարումը և հետևաբար չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Այսպիսով, տվյալ ակտիվների վարկային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում

Խումբը ԱՊԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՊԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

Դեֆոլտի հավանականություն (PD)	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պայուսակում է:
Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (EAD)	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, չկատարված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս::

ԱՊԿ պահուստը հիմնվում է պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստ կամ ԱԿԱՊԿ), եթե առկա չէ պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորստի վրա (12ամԱՊԿ): 12ամԱՊԿ-ը ԱԿԱՊԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՊԿ-ն, այնպես էլ 12ամԱՊԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պայուսակի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտի տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1:	Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՊԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2:	Երբ գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱԿԱՊԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3:	Ակտիվը համարվում է պարտքային առումով արժեզրկված: Խումբը ձևակերպում է ԱԿԱՊԿ պահուստ:
Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները (POCI)	Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՊԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Դեֆոլտի և վերականգնման սահմանումը

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ պարտքային առումով արժեզրկված) ԱՊԿ հաշվարկի նպատակով, երբ գործընկերոջ վարկանիշը նվազում է Խմբի կողմից նախապես սահմանված վարկանիշից: Անկախ վարկանիշի փոփոխությունից, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները ժամկետանց են 90 օրով, ֆինանսական գործիքը համարվում է արժեզրկված:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է տարատեսակ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին: Նման դեպքեր տեղի ունենալիս, Խումբը մանրամասն դիտարկում է, թե արդյոք տվյալ դեպքի արդյունքում հաճախորդը պետք է ճանաչվի անվճարունակ և դասակարգվի Փուլ 3-ում ԱՊԿ հաշվարկների նպատակով, թե պատշաճ է Փուլ 2-ի կիրառումը: Նման դեպքերը ներառում են՝

- Փոխառուի անվճարունակության կամ դրան մոտ իրավիճակի մասին վկայող ներքին վարկանիշը,
- Փոխառուի կողմից Խմբին հասցեագրված պահանջը արտակարգ ֆինանսավորման մասին,
- Գրավի առարկայի արժեքի էական նվազեցումը, այն դեպքում, երբ վարկի վերականգնումը ակնկալվում է իրագործել գրավի առարկայի վաճառքի միջոցով,
- Պայմանագրային դրույթի խախտումը, որը չի զիջվել Խմբի կողմից,
- Պարտատիրոջ (կամ պարտատիրոջ խմբում ներառված որևէ իրավաբանական անձի) դիմումը սնանկության ճանաչման վերաբերյալ,
- Պարտատուի ցուցակված պարտքի կամ կապիտալի կասեցումը առաջնային արժեթղթերի շուկայում՝ ելնելով ֆինանսական դժվարությունների մասին կասկածներից կամ փաստերից:

Խմբի քաղաքականության համաձայն, ֆինանսական գործիքի կարգավիճակը համարվում է վերականգնված, և հետևաբար այն վերադասակարգվում է Փուլ 3-ից այն դեպքում, երբ պարտավորության չկատարման չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել առնվազն վեց հաջորդական ամիսների ընթացքում: Ակտիվի վերականգնումից հետո այն որպես Փուլ 2 կամ Փուլ 1 դասակարգելու մասին որոշումը կախված է վերականգնման պահին վերանայված վարկային գնահատականից՝ թե արդյոք այն վկայում է սկզբնական ճանաչման պահից ի վեր պարտքային ռիսկի զգալի մեծացման մասին:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Այն գործընկերների գծով, որոնք ունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, կիրառվում է «Մուդիզ» վարկանիշային ընկերության տարեկան անցումային աղյուսակը:

Այն գործընկերների գծով, որոնք չունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, դեֆոլտի հավանականությունը գնահատվում է ներքին ֆինանսական կայունության ինդեքսի հիման վրա՝ օգտագործելով վարկանշված գործընկերների դեֆոլտի հավանականության էքստրապոլյացիայի մեթոդը:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը:

Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)

Ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր խմբի համար LGD հաշվարկելու համար օգտագործվում են տվյալ ֆինանսական գործիքի պարտքի առաջնայնության կարգավիճակին համապատասխան վերականգնման դրույքները («Մուդիզ») կամ գտնվելու վայրի երկրի համար սահմանված վերականգնման ցուցանիշները (ԱՄՀ):

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Պարտքային ռիսկի զգալի աճ

Խումբը շարունակաբար մշտադիտարկում է բոլոր ակտիվները, որոնք ենթակա են ԱՊԿ-ի: Որոշելու համար, թե արդյոք գործիքը կամ գործիքների պորտֆելը ենթակա են 12ամԱՊԿ-ի, Խումբը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո: Խումբը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է այն դեպքում, երբ գործընկերոջ վարկանիշը փոփոխվել է սկզբնական ճանաչման պահից հետո, համաձայն ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերի:

Պարտքային ռիսկի զգալի աճի գնահատումը տեղական առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների համար, որոնք չունեն միջազգային վարկանիշ, հիմնվում է անհատական գործիքների վարքի և առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների ֆինանսական կայունության ընդհանուր ցուցանիշների վրա: Համակարգային ֆինանսական ռիսկերի տիրույթի մակրոգնահատումները ևս մեկ գործիք են որոշակի ակտիվների՝ Փուլ 1-ից Փուլ 2 տեղափոխման անհրաժեշտությունը գնահատելու համար:

Անկախ վարկանիշերի փոփոխություններից, համարվում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Ապագայամետ տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

Խմբի ԱՊԿ մոդելները հիմնվում են հետագա ժամանակաշրջանների գծով տարատեսակ տեղեկատվության վրա, որոնք հանդիսանում են որպես տնտեսական ելակետային տվյալներ և թվարկված են ստորև.

- ՀՆԱ աճը,
- Գործազրկության ցուցանիշը,
- ՍԳԻ,
- Միջազգային պահուստները,
- Դրամավարկային քաղաքականության դրույքը,
- Կապիտալի գնի ինդեքսը,
- Արտարժույթի փոխարժեքները,
- Վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը,
- Այլ մակրոտնտեսական գործոններ՝ ելնելով տվյալ երկրի առանձնահատկություններից:

ԱՊԿ հաշվարկներում օգտագործվող ելակետային տվյալները և մոդելները հնարավոր է, որ չարտացոլեն տվյալ շուկայի բոլոր բնութագրերը ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Այս առումով ժամանակ առ ժամանակ կատարվում են որակական ճշգրտումներ կամ վերագնահատումներ՝ ժամանակավոր ճշգրտումների միջոցով, եթե տարբերությունները կրում են զգալիորեն էական բնույթ:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր, որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և որոնք դեֆոլտի դեպքում ենթական են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ, որոնք գրավ են հանդիսանում իր չհատուցված ածանցյալ գործիքների համար: Դեֆոլտի դեպքում հավատարմագրային կառավարիչը կարող է մարժային ավանդի հետ հաշվանցել Խմբի պարտավորությունները:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա (ISDA, RISDA և այլն) հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորության զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	126,669,774	–	126,669,774	126,669,774		–
Ընդամենը	**126,669,774**	**–**	**126,669,774**	**126,669,774**		**–**

Հազար ՀՀ դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորության զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	163,433,113	–	163,433,113	163,433,113		–
Ընդամենը	**163,433,113**	**–**	**163,433,113**	**163,433,113**		**–**

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորություններն ըստ աշխարհագրական կենտրոնացման.

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2019թ.				*31 դեկտեմբերի 2018թ.*			
Հազար ՀՀ դրամ	*Հայաստան*	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրների բանկեր*	*Ընդամենը*	*Հայաստան*	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրների բանկեր*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Կանխիկ դրամ	39,603,848	–	–	**39,603,848**	42,238,172	–	–	**42,238,172**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	8,866,115	547,390,347	3,735,526	**559,991,988**	4,944,031	341,961,418	1,161,408	**348,066,857**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	433,882,868	–	–	**433,882,868**	443,648,161	–	–	**443,648,161**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	773,358,342	–	**773,358,342**	–	704,860,473	–	**704,860,473**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		–	–		43,849	–	–	**43,849**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	88,633,726	1,940,583	–	**90,574,309**	89,348,388	1,918,000	–	**91,266,388**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	–	88,398,230	–	**88,398,230**	–	89,548,497	–	**89,548,497**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	68,700,679	–	–	**68,700,679**	71,531,642	–	–	**71,531,642**
Այլ ակտիվներ	12,239,109	60,029	111,846	**12,410,984**	14,795,872	62,689	97,272	**14,955,833**
Ընդամենը ակտիվներ	**651,926,345**	**1,411,147,531**	**3,847,372**	**2,066,921,248**	**666,550,115**	**1,138,351,077**	**1,258,680**	**1,806,159,872**
Պարտավորություններ								
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	607,209,301	–	–	**607,209,301**	566,706,467	–	–	**566,706,467**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	722,819,276	13,072	568,931	**723,401,279**	614,176,880	13,072	318,898	**614,508,850**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,455	1,645	–	**81,100**	–	97,040	–	**97,040**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	327,294,360	–	–	**327,294,360**	190,749,003	–	–	**190,749,003**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	240,948,903	–	**240,948,903**	–	266,323,100	–	**266,323,100**
Այլ փոխառություններ	–	136,151,500	6,590,621	**142,742,121**	–	145,026,239	6,684,513	**151,710,752**
Թողարկված պարտատոմսեր	6,626,428	–	–	**6,626,428**	7,838,688	–	–	**7,838,688**
Այլ պարտավորություններ	4,557,977	177,340	618,296	**5,353,613**	4,649,880	287,622	333,144	**5,270,646**
Ընդամենը պարտավորություններ	**1,668,586,797**	**377,292,460**	**7,777,848**	**2,053,657,105**	**1,384,120,918**	**411,747,073**	**7,336,555**	**1,803,204,546**
Զուտ ակտիվներ	**(1,016,660,452)**	**1,033,855,071**	**(3,930,476)**	**13,264,143**	**(717,570,803)**	**726,604,004**	**(6,077,875)**	**2,955,326**

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման և Կառավարության արտաքին վճարումների սպասարկման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները, ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2019 և 2018 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ մնացորդային պայմանագրային ժամկետայնության: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներառված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառված են վճարվելիք կամ ստացվելիք պայմանագրային գումարներով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն ակնկալում է մինչև մարման ժամկետը փակել ածանցյալի դիրքը, որի դեպքում ածանցյալները ներառվում են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2019թ.						
Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և 1 ամսից քիչ*	*1-ից մինչև 3 ամիս*	*3 ամսից մինչև 1 տարի*	*1-ից մինչև 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	607,209,301	–	–	–	–	–	**607,209,301**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	721,432,655	–	2,100,625	–	–	–	**723,533,280**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	81,100	–	–	–	–	–	**81,100**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	56,578,091	150,046,431	125,058,221	–	–	–	**331,682,743**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	1,110,868	23,094,242	65,167,801	11,972,325	143,675,049	**245,020,285**
Այլ փոխառություններ	738,484	–	16,943,615	73,311,020	70,873,733	–	**161,866,852**
Թողարկված պարտատոմսեր	–	124,500	387,000	7,149,500	–	–	**7,661,000**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,386,039,631**	**151,281,799**	**167,583,703**	**145,628,321**	**82,846,058**	**143,675,049**	**2,077,054,561**

	31 դեկտեմբերի 2018թ.						
Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և 1 ամսից քիչ*	*1-ից մինչև 3 ամիս*	*3 ամսից մինչև 1 տարի*	*1-ից մինչև 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Առանց մարման ժամկետի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	566,706,467	–	–	–	–	–	**566,706,467**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	612,518,304	–	200,700	2,100,625	–	–	**614,819,629**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	97,040	–	–	–	–	–	**97,040**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	75,591,432	97,812,401	18,503,791	–	–	–	**191,907,624**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	1,317,354	19,937,289	85,235,919	21,161,217	145,687,369	**273,339,148**
Այլ փոխառություններ	699,760	–	15,273,479	72,021,333	85,185,419	–	**173,179,991**
Թողարկված պարտատոմսեր	–	124,500	5,258,160	3,373,500	–	–	**8,756,160**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,255,613,003**	**99,254,255**	**59,173,419**	**162,731,377**	**106,346,636**	**145,687,369**	**1,828,806,059**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի, տոկոսադրույքների և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի Խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: Այն նաև սահմանում է պայուսակի օպտիմալացման սկզբունքները: «Ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս՝ երեք տարի) և 95% հավանականությամբ ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով, ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշերի ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշերի սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարական որոշումներիների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդերի վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Բլեք-Լիթերմանի և Մարկովիցի մոդելների միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ռիսկի մոնիթորինգի և կառավարման նպատակով, Ֆինանսական դեպարտամենտի Ռիսկերի կառավարման վարչության կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտով չափվող ֆինանսական ակտիվները վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Սեփական կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Սեփական կապիտալի զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*		*2018թ.*	
Արժույթ	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*
ՀՀ դրամ	+100	(617,272)	+100	(616,764)
ՀՀ դրամ	-100	671,185	-80	532,393
ԱՄՆ դոլար	+35	(19,763)	+50	(16,287)
ԱՄՆ դոլար	-35	7,868	-15	5,229

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է 2019 և 2018 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Աղյուսակում ներկայացված գումարներն արտահայտված են աղյուսակում նշված արժույթներով:

	2019թ.		*2018թ.*	
Արժույթ	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)*	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)*
ԱՄՆ դոլար	+100/-100	(4,380,747)/4,380,747	+50/-15	(2,595,600)/778,680
Եվրո	+50/-50	(503,299)/503,299	+20/-1	(65,493)/817,498
Անգլիական ֆունտ	+20/-20	(26,083)/26,083	+50/-20	(130,250)/52,100

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ (շարունակություն)

Խումբն ունի նաև 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լողացող տոկոսադրույքով չմարված պարտավորություններ:

Ստորև աղյուսակը ներկայացնում է 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*		*2018թ.*	
Արժույթ	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)*	*Բազիսային կետերի փոփոխություն*	*Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)*
ԱՄՆ դոլար	+/-145	299,205/(299,205)	+/-161	342,279/(342,279)
ՀՓԻ	+/-41	394,759/(394,759)	+/-36	407,588/(407,588)

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում ներառված իրական արժեքի գնահատման մեթոդի համար օգտագործված ելակետային տվյալների զգայունությունը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է արտարժույթի տեղաբաշխման հստակ սկզբունքներ, իսկ Ներդրումային հանձնաժողովը սահմանում և վերանայում է համապատասխան արժույթների կշիռները:
Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ՀՀ դրամի նկատմամբ կիրառված փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների հանդեպ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*		*2018թ.*	
Արժույթ	*Փոխարժեքի աճ %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*	*Փոխարժեքի աճ %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*
ԱՄՆ դոլար	3.00%	18,882,379	3.50%	18,192,069
Եվրո	6.50%	11,089,753	8.00%	9,350,778
Բրիտանական ֆունտ	9.00%	3,316,392	10.00%	3,570,141
Ճապոնական իեն	6.50%	1,034,228	7.00%	1,489,656
Ռուսական ռուբլի	13.00%	50,093	15.00%	56,940
ՀՓԻ	5.00%	(7,957,065)	6.00%	(11,007,547)

Հազար ՀՀ դրամ	*2019թ.*		*2018թ.*	
Արժույթ	*Փոխարժեքի նվազում %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*	*Փոխարժեքի նվազում %*	*Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)*
ԱՄՆ դոլար	-3.00%	(18,882,379)	-3.50%	(18,192,069)
Եվրո	-6.50%	(11,089,753)	-8.00%	(9,350,778)
Բրիտանական ֆունտ	-9.00%	(3,316,392)	-10.00%	(3,570,141)
Ճապոնական իեն	-6.50%	(1,034,228)	-7.00%	(1,489,656)
Ռուսական ռուբլի	-13.00%	(50,093)	-15.00%	(56,940)
ՀՓԻ	- 5.00%	7,957,065	-6.00%	11,007,547

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը որոշվել է Խմբի կողմից՝ վերլուծելով տարեկան ստանդարտ շեղումները՝ հիմք ընդունելով համապատասխան փոխարժեքների պատմական շուկայական տվյալները:

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին՝ յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: Ներկայում ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի կապիտալ ներդրումներ մի քանի դուստր կազմակերպություններում, որոնք ներգրավված են ֆինանսական հատվածի զարգացման և ենթակառուցվածքային գործունեության մեջ: Նման ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինասական հատվածի զարգացմանը, ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի նպատակներից մեկն է:

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ (շարունակություն)

Բանկը դուստր կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն:
- Դուստր կազմակերպությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրեններ):
- Առնվազն յուրաքանչյուր տարի, դուստր կազմակերպությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության դիտարկման միջոցով, ներառյալ դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների դիտարկումը:
- Դուստր կազմակերպությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարություն մշակում:
- Ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա՝ դուստր կազմակերպությունների գործունեությունների վերանայում Բանկի ներքին աուդիտի աշխատանքների շրջանակում:

2015 թվականին Բանկը որդեգրել է քաղաքականություն՝ ակտիվացնելու բանակցությունները հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ՝ դուստր կազմակերպություններում Բանկի ներդրումների օտարման ուղղությամբ:

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակներում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

	31 դեկտեմբերի 2019թ.		
Հազար ՀՀ դրամ	***Ընթացիկ***	***Ոչ ընթացիկ***	***Ընդամենը***
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	39,603,848	–	**39,603,848**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	556,489,586	3,502,402	**559,991,988**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	773,358,342	–	**773,358,342**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	224,131,595	209,751,273	**433,882,868**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	75,374,736	15,199,573	**90,574,309**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	2,960,039	85,438,191	**88,398,230**
Հիմնական միջոցներ	–	65,679,935	**65,679,935**
Ոչ նյութական ակտիվներ	–	3,020,744	**3,020,744**
Այլ ակտիվներ	11,576,011	834,973	**12,410,984**
Ընդամենը ակտիվներ	**1,683,494,157**	**383,427,091**	**2,066,921,248**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	607,209,301	–	**607,209,301**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	723,401,279	–	**723,401,279**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	81,100	–	**81,100**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	327,294,360	–	**327,294,360**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	23,072,079	217,876,824	**240,948,903**
Այլ փոխառություններ	14,940,400	127,801,721	**142,742,121**
Թողարկված պարտատոմսեր	126,428	6,500,000	**6,626,428**
Այլ պարտավորություններ	4,889,874	463,739	**5,353,613**
Ընդամենը պարտավորություններ	**1,701,014,821**	**352,642,284**	**2,053,657,105**
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ին	**(17,520,664)**	**30,784,807**	**13,264,143**

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2018թ.		
Հազար ՀՀ դրամ	*Ընթացիկ*	*Ոչ ընթացիկ*	*Ընդամենը*
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	42,238,172	–	**42,238,172**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	344,738,924	3,327,933	**348,066,857**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	704,860,473	–	**704,860,473**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	241,356,600	202,291,561	**443,648,161**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	43,849	–	**43,849**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	75,369,453	15,896,935	**91,266,388**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	2,893,145	86,655,352	**89,548,497**
Հիմնական միջոցներ	–	68,740,919	**68,740,919**
Ոչ նյութական ակտիվներ	–	2,790,723	**2,790,723**
Այլ ակտիվներ	13,199,399	1,756,434	**14,955,833**
Ընդամենը ակտիվներ	**1,424,700,015**	**381,459,857**	**1,806,159,872**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	566,706,467	–	**566,706,467**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	612,508,850	2,000,000	**614,508,850**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	97,040	–	**97,040**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	190,749,003	–	**190,749,003**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	19,550,143	246,772,957	**266,323,100**
Այլ փոխառություններ	13,226,647	138,484,105	**151,710,752**
Թողարկված պարտատոմսեր	4,838,688	3,000,000	**7,838,688**
Այլ պարտավորություններ	5,235,792	34,854	**5,270,646**
Ընդամենը պարտավորություններ	**1,412,912,630**	**390,291,916**	**1,803,204,546**
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ին	**11,787,385**	**(8,832,059)**	**2,955,326**

32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

Հազար ՀՀ դրամ	*Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից*
Հաշվեկշռային արժեք	
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**448,299,233**
Ստացված վարկեր	9,419,398
Մարված վարկեր	(29,292,741)
Արտարժույթի վերագնահատում	(10,199,454)
Այլ	129,281
Հաշվեկշռային արժեք	
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**418,355,717**
Հաշվեկշռային արժեք	
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**418,838,705**
Ստացված վարկեր	6,346,555
Մարված վարկեր	(34,421,137)
Վճարումներ վարձակալության գծով	(82,489)
Արտարժույթի վերագնահատում	(6,392,359)
Այլ	(172,406)
Հաշվեկշռային արժեք	
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**384,116,869**

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները: Խումբը վճարված տոկոսները դասակարգում է որպես դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից:

33. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակը բացասական է անդրադառնում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Կորոնավիրուսի համաճարակի ամբողջական ազդեցությունը դեռևս անորոշ է, և Խումբը ուշադիր հետևում է իրավիճակին: Քանի որ իրավիճակը արագորեն է զարգանում, Խումբը գտնում է, որ համաճարակի պոտենցիալ ազդեցության քանակական գնահատումը Խմբի վրա գործնականորեն հնարավոր չէ իրականացնել:

Հետևելով Ծնթգ. 30-ում բացահայտված Խմբի քաղաքականությանը՝ 2020 թվականի մարտին Խումբը հայտարարել է իր մտադրությունը լուծարման միջոցով օտարել կանխիկ դրամական փոխադրումներ իրականացնող դուստր կազմակերպությունում իր ներդրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ